Azg
Ազգ
13 ՆՈՅԵՄԲԵՐ 2004 ՇԱԲԱԹ 203 (3134)

Ինչքանո՞վ են վստահելի «ընտրովի» մեր իշխանությունները

Հոկտեմբերի 22-ից 31-ը «Ազգ» օրաթերթի պատվերով Երեւանում անցկացվել է հեռախոսային սոցիոլոգիական հարցում «Ընտրովի մարմինների հետադարձ կապը բնակչության հետ» թեմայով: Հարցումն իրականացվել է Զավարյանի մշակած հեռախոսային հարցումն ավտոմատացնող ինֆորմացիոն տեխնոլոգիայով: Հարցախույզին մասնակցել են 500 հոգի, որոնցից 92-ը (18,4 տոկոս) հրաժարվել է պատասխանելուց: Հարցախույզն անցկացվել է Կենտրոն (120 մարդ), Արաբկիր (120 մարդ), Մալաթիա-Սեբաստիա (111 մարդ), Նոր Նորք (57 մարդ) համայնքներում: Հարցախույզի նպատակն իշխանությունների հանդեպ բնակչության վստահության մակարդակի ճշտումն է: Հարցվածների 40,9 եւ 39,2 տոկոսը «Անհրաժեշտության դեպքում կդիմեի՞ պատգամավորին կամ ավագանուն» հարցին պատասխանել է՝ ոչ, չեմ դիմի: Հարցվածների 24 տոկոսի տվյալներով, ընտրություններից հետո իրենք հանդիպել են պատգամավորին, դիմել են նրան, բայց որեւէ օգնություն չեն ստացել: Անպատասխան է մնացել նաեւ հարցվածների 17,2 տոկոսը, որը դիմել է ավագանուն: Ավելի մանրամասն՝ «Ազգի» առաջիկա համարներում:

Սկսվել է սոցիալական fարտերի կամավոր-բռնի ներդրումը

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԻԵԼՅԱՆ

Օրերս «Ազգին» էր դիմել Երեւանի համայնքի բնակիչ Մախիմ Գալստյանը: Նա ղարաբաղյան ազատամարտում անհետ կորածի հայր է, բազմանդամ, 12 շնչով ընտանիքի տեր: Վրդովված էր, որովհետեւ սոցիալական fարտ չունենալու պատճառով Երեւանի կենսաթոշակային բաժանմունքում հրաժարվել էին երեխաների նպաստը վճարել: «Ինձ ասում են, որ անպայման պիտի սոցիալական fարտ վերցնես, որ նոր միայն նպաստ տանք»: Երկար խնդրանքից հետո, ի վերջո, նրան տվել էր նպաստը, հընթացս նախազգուշացնելով, որ վերջին անգամ է:



Նման կարգի բողոքներ այսօր լսվում են նաեւ թոշակառուներից:

«Անհատական ծածկագրերի մասին» օրենքը գործում է այս տարվա հունվարից: Բնակչության անհատական տվյալների հետ կապված որեւէ գործառույթ (հարկերի, տուրքերի, կենսաթոշակների, նպաստների, աշխատավարձերի վճարում) իրականացնող պետական եւ տեղական ինքնակառավարման բոլոր օղակներում օրենքի կիրառումը նախատեսվում էր հուլիսի 1-ից, սակայն հասարակական ուժեղ դիմադրության պատճառով ընդհատվեց: Այս ընթացքում, երբ կրքերը մասնակի մարել են, հավանաբար որոշվել է վերսկսել պարտադիր-կամավոր կամ ավելի ճիշտ՝ բռնի ծածկագրումը:

Անձի մասին անհատական տվյալների ամբողջությունը դեռեւս ինֆորմացիայի չգաղտնազերծված ասպարեզ է մեր երկրում լայն գործունեություն ծավալած օտարերկրյա կազմակերպությունների համար, որոնց մեջ, անկասկած, կան նաեւ այնպիսիք, որ այլ խնդիրներ են իրականացնում Հայաստանում:

Տես էջ 2

Համաժողովրդային հուզման մթնոլորտում պաղեստինցիք հրաժեշտ տվեցին իրենց առաջնորդին

Հակառակ իսրայելական շարունակական պնդումներին, թե Յասեր Արաֆաթն այլեւս չի վայելում իր ժողովրդի համակրանքը, երեկ պաղեստինցիները համընդհանուր հուզման եւ զանգվածային քաոսի մթնոլորտում վերջին հրաժեշտը տվեցին իրենց առաջնորդին: Հարյուր հազարավոր մարդիկ հավաքվել էին Ռամալլայում, Արաֆաթի վերջին 3 տարիների մեկուսարանը հանդիսացած «Մոկթադա» պալատի մոտ, որտեղ վայրէջք էին կատարել Եգիպտոսի էլ Արիշ քաղաքից ժամանած ուղղաթիռները: Երկար ժամանակ ուղղաթիռը շրջապատած պաղեստինցի զինվորները ու ոստիկանները չէին կարողանում դուրս բերել Արաֆաթի դագաղը: Հուզումը վարակել էր անգամ կարգապահության հսկիչներին, որոնք անկանոն կրակում էին օդում որպես վերջին համազարկ իրենց հերոսին: Ի վերջո, կարգուկանոնը վերահաստատվեց եւ Արաֆաթը թաղվեց իր իսկ պալատում, բեսոնե շիրիմում, որպեսզի հետագայում՝ Պաղեստինի պետության ստեղծումից հետո հնարավոր լինի նրա վերաթաղումը Երուսաղեմում:

Մինչ այդ, ընդհակառակը, խիստ կարգապահ մթնոլորտում, Կահիրեից ոչ հեռու «Ալ Մազա» ռազմաօդային բազայում տեղի էր ունեցել Փարիզից ժամանած ինքնաթիռից Արաֆաթի դագաղի դուրսբերումը: Զինվորական պատիվներով նրան հրաժեշտ էին տվել նախագահ Հոսնի Մուբարաքի գլխավորությամբ 50 երկրներից ժամանած պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնց թվում՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը: Այստեղ կայացած հուղարկավորությանը ժողովրդի մասնակցությունն արգելվել էր, անվտանգության մտահոգություններով:

Հեռախոսամարաթոն Երեւանում

ԵՐԵՎԱՆ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԻՆՖՈ: Նոյեմբերի 25-ին տեղի ունենալիք հեռուստամարաթոնի նախաշեմին Երեւանում նոյեմբերի 22-ին տեղի կունենա հեռուստամարաթոն՝ նվիրված «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու կառուցման դրամահավաքին: Ինչպես հաղորդեցին «Հայաստան» համահայկական հիմնադրամից, հիմնադրամի աշխատակիցներն ու երիտասարդ կամավորականները կզանգահարեն հայաստանյան ձեռնարկություններ, գործարարներին կոչ անելով մասնակցել «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու կառուցմանն ուղղված դրամահավաքին:

Աբխազիայում «վարդյա» հեղափոխությո՞ւն

Ընտրություններում հաղթած ընդդիմությունը գրավել է կառավարության եւ խորհրդարանի շենքերը

Երեկ օրվա երկրորդ կեսին հոկտեմբերի 3-ին Աբխազիայում կայացած նախագահական ընտրություններում ընդդիմության թեկնածու Սերգեյ Բաղաթիի կողմնակիցները գրոհով վերցրել են կառավարության եւ խորհրդարանի շենքերը: Ռուսական լրատվական գործակալությունները հաղորդում են, որ գրոհի ընթացքում զոհեր չեն եղել, մի քանի մարդ ստացել է մարմնական վնասվածք: Ամբոխը գրոհել է կառավարական շենքերն այն ժամանակ, երբ շարունակվում էին Բաղաթիի եւ ընտրություններում նրա հիմնական մրցակից, նախկին վարչապետ Ռաուլ Խաջիմբայի բանակցությունները:

«Այն, ինչ տեղի ունեցավ, ձեր խղճի, ձեր կարգուկանոնի եւ դաստիարակության շնորհիվ էր: Ձեզ խնդրում եմ լինել շատ խոհեմ, առանց զգացմունքայնության», գրավված խորհրդարանի շենքից դիմելով իր կողմնակիցներին ասել է Բաղաթը: «Մենք պետք է պաշտպանենք կայունությունը եւ անենք հնարավոր ամեն ինչ, որպեսզի Աբխազիայում լինի խաղաղություն»: Նա հիշեցրել է, որ մի քանի հանդիպումներ է ունեցել Խաջիմբայի հետ եւ հույս ունի, որ կարող է համաձայնության գալ եւ ախոյանի հետ աշխատել նույն թիմում:

Տես էջ 2

ԹԵԺ ԿԵՏԵՐ

Կատաղի մարտեր Բաղդադում

ԲԱՂԴԱԴ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այսօր Իրաքի մայրաքաղաքի հյուսիսային թաղամասերում կատաղի մարտեր են բռնկել ապստամբների ու կառավարության զորքերի միջեւ, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը: Ոստիկանական աղբյուրներից ստացված տեղեկությունների համաձայն, առավել կատաղի ընդհարումները տեղի են ունենում քաղաքի Ադհամիա թաղամասում, որը բնակեցված է առավելապես սուննի մահմեդականներով: Կողմերի կորուստների մասին տվյալներ առայժմ չկան:

Ինչպես հաղորդել են տեղի բնակիչները, ապստամբները նաեւ ԱՄՆ-ի զորքերի դիրքերը գրոհել են Բաղդադի արեւմտյան ծայրամասերում՝ Աբու Ղրեյբի շրջանում, որտեղ գտնվում է տխրահռչակ բանտը:

Գործադուլը դադարեց. սպասենք մինչեւ երկուշաբթի

Երեկ ժամը 17-ին ինտերնետային ծառայություն մատուցող 250 ընկերությունները դադարեցրին գործադուլը: Առավոտյան կողմ նրանք ցույց էին կազմակերպել նաեւ ԱԺ-ի դիմաց, որից հետո նրանց ներկայացուցիչները հանդիպեցին ԱԺ փոխնախագահ Տիգրան Թորոսյանի հետ: Վերջինս, գործադուլավորների փոխանցմամբ, խոստացել է երկուշաբթի հարցը քննարկել կառավարությունում, վարչապետի հետ:

Հայաստան վերադարձից հետո գործադուլավորների պահանջների մասին կտեղեկացվի նաեւ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանը: Ի դեպ, ինտերնետային ծառայություն մատուցող ընկերությունների կազմկոմիտեի անդամ Մուշեղ Միլիտոնյանը հավաստիացրեց, որ խորհրդարանական խումբ-խմբակցություններից իրենց օգնելու պատրաստակամություն է հայտնել «Օրինաց երկիրը»:

Ավելացնենք, որ խորհրդարանական ճեղազույցների ժամանակ «Ժողովրդավոր» խմբակցության ղեկավար Կարեն Կարապետյանը եւս, մտահոգություն հայտնելով տնտեսավարող սուբյեկտների շահերի ոտնահարման առթիվ, հայտնեց, որ իրենք կփորձեն պաշտպանել ինտերնետային ծառայություն մատուցողների շահերը, եթե «իսկապես գործող օրենսդրության շրջանակներում ոտնձգություններ են եղել նրանց իրավունքների նկատմամբ»:

Երեկ երեկոյան դեռ հայտնի չէր՝ քաղաքապետարանը մերժե՞լ, թե՞ թույլատրել է Ազատության հրապարակում ժամը 15-ին նախատեսված այսօրվա ցույցի անցկացումը:

Կ.Գ.

ԸՆԹԱՑԻԿ

Երկուշաբթի կսկսվեն բյուջետային լսումները

Սպառո՞ւմ, թե՞ զարգացման բյուջե

Ըստ կարգի, գալիք ֆինանսական տարվա սկզբից 60 օր առաջ, այսինքն նոյեմբերի 1-ին կառավարությունը բյուջեի նախագիծը ներկայացրել է Ազգային ժողովին: Երկուշաբթի կսկսվեն 2005 թվականի պետական բյուջեի օրենքի նախագծի քննարկումները, որոնք կշարունակվեն ողջ շաբաթվա ընթացքում:

Բյուջեի նախագծի վերաբերյալ պատգամավորների նախնական տրամադրվածությունն ու տպավորությունները, ինչպես եւ սպասվում էր, տարբեր են՝ համաձայն նրանց քաղաքական դիրքորոշումների ու պատկանելության:

Հանրապետական խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյան. Այս տարվա բյուջեն գնահատում եմ իբրեւ կուլմինացիոն բյուջե: Իմ դիտարկումներով, այդ բյուջեի պայմաններում 2005 թ. տնտեսական զարգացումներն ավելի արագ են ընթանալու, ավելի արագ է հաղթահարվելու աղքատության դեմ պայքարի ծրագիրը, ավելի մեծ բանաձեւեր են ընդունվելու նաեւ կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրում:

Չնայած դրան, անդրադառնալով տարեսկզբից ավանդների վերադարձման ՕԵ-ի խոսումներին եւ դրա իրականացման անհավանականությանը, համաձայն որի 1000 ռուբլու դիմաց միջինացված տարբերակով կտրվի 10 դոլար, հանրապետական կուսակցության ղեկավարն ասաց, որ իրենք կողմ կլինեն, եթե այդ տարբերակը ժողովրդի համար ընդունելի եւ շահեկան լինի, բայց չի տեսնում այդ շահեկանությունը, «որովհետեւ այդ գումարը ընդամենը 1 շաբաթվա սպառման գումար կլինի, որը վերջին մարդը կստանա 15 տարի հետո»:

ՀՅԴ խմբակցության ղեկավար Լեւոն Մկրտչյան. Այս տարվա բյուջեն բավականին լուրջ հնարավորություններ ունի կատարելու նախընտրական խոստումներից կարեւորագույնը՝ այսինքն, երկրում անընդհատ գրանցվող տնտեսական աճն ի վերջո, կարող է հասնել քաղաքացիներին: Եվ այդ իմաստով, այն, ավելի քան նախորդ տարվանը, ավելի շատ հնարավորություններ ունի սոցիալական ուղղվածության շեշտադրումներ կատարելու:

«Օրինաց երկիր» խմբակցությունը եւս դրական գնահատական արտահայտեց նախագծի վերաբերյալ, քանի որ նախորդ 233 մլրդի փոխարեն նոր բյուջեն ավելացել է եւս 44 մլրդ դրամով:

Ընդդիմությունը չի մասնակցելու նաեւ բյուջեի նախագծի քննարկումներին, բայց դա վերաբերյալ բացասական վերաբերմունք ունի:

«Արդարություն» խմբակցության քարտուղար Վիկտոր Դալլաքյանն ասաց. «Դա հերթական սպառողական բյուջեն է, որը լուծում է սոսկ իրավիճակային խնդիրներ: Հարեւան երկրների օրինակը բերեմ՝ Վրաստանի պետական բյուջեն կազմում է շուրջ 1 մլրդ դոլար, իսկ Ադրբեջանինը՝ 2 մլրդ 200 մլն դոլար: Եվ մի թիվ եւս. Հայաստանի պետական բյուջեում պաշտպանության ծախսերը մոտավորապես 80 մլն են, իսկ Ադրբեջանի բյուջեում դրանք 100 մլն-ով ավելի են:

«Ժողովրդավարական» խմբակցության ղեկավար Կարեն Կարապետյանը խուսափեց վերջնական գնահատականից, բայց ցանկություն հայտնեց, որ իրենք ուզում են բյուջեն տեսնել «ոչ թե զարգացման, այլ սպառման միջոց, այսինքն այն պետք է պարունակի զարգացման համար անհրաժեշտ ֆինանսավորում, ենթակառույցներ, որոնք կսպասարկեն տնտեսության ակտիվացմանը»:

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԻԵԼՅԱՆ

Այս տարի Հայաստանում օտարերկրյա ներդրումները կկազմեն 260-280 մլն դոլար

Հավաստիացնում է առեւտրի եւ տնտեսական զարգացման փոխնախարարը

Զարգացման հայկական գործակալությունում երեկ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ու առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության կողմից ներկայացվեց 2004 թ. համաշխարհային ներդրումների զեկույցը: Ներկայացնելով զեկույցը, Հայաստանում ՄԱԿ-ի ներկայացուցիչ **Լիզ Գրանդեն** տեղեկացրեց, որ արդեն երրորդ տարին է, ինչ օտարերկրյա ներդրումներն ամբողջ աշխարհում նվազել են՝ հասնելով 560 մլրդ դոլարի: Ընդ որում, ամենամեծ անկումն արձանագրվել է Եվրոմիության երկրներում եւ Հյուսիսային Ամերիկայում, հասնելով 110 մլրդ դոլարի: Հայաստանում, ինչպես եւ տարածաշրջանում ընդհանրապես, այդ ընթացքում ներդրումներն ավելացել են:

Առեւտրի եւ տնտեսական զարգացման փոխնախարար **Տիգրան Դավթյանն** ընդգծեց, որ Հայաստանում օտարերկրյա ներդրումների աճը տեղի է ունենում համաշխարհային ներդրումների ծավալների նվազման ֆոնի վրա: Այս տարվա առաջին կիսամյակում օտարերկրյա ներդրումներն ավելացել են մոտ 40 տոկոսով եւ մինչեւ տարեվերջ ակնկալվում է, որ դրանք կկազմեն 260-280 մլն դոլար: Փոխնախարարը նշեց, որ այս տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կսկսեն իրագործվել մի շարք խոշոր ներդրումային ծրագրեր: Նա նաեւ հիշեցրեց, որ նախորդ տարի Հայաստանում կատարված ներդրումները կազմել են 230 մլն դոլար:

Այնուհետեւ տեղեկացվեց, որ փոխվել է ներդրումների կառուցվածքը: Այժմ դրանք ավելացել են տնտեսության իրական հատվածում՝ թեթեւ արդյունաբերության, հանքարդյունաբերության, շինարարության եւ այլ ոլորտներում: Հայաստանում ամենախոշոր ներդրումները կատարել են Հունաստանը, Արգենտինան, ԱՄՆ-ը եւ Ֆրանսիան: Նշվեց, որ ավելացել են նաեւ տեղական ներդրումները:

Տիգրան Դավթյանը չցանկացավ համեմատել Հայաստանում եւ Ադրբեջանում կատարված ներդրումները, ասելով, որ Ադրբեջանում ներդրումները կատարվում են միայն մեկ ոլորտում: Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա քաղաքական փոփոխություններից հետո արտաքինանյան ներդրողների հետաքրքրությունն այդ երկրի նկատմամբ աճել է: Այդ երեւույթը փոխնախարարը ողջունեց, ասելով, որ օտարերկրյա ներդրողներից շատերի համար Հայաստանը փոքր տուպա է համարվում եւ նրատարավոր կլինի նրանց նաեւ վրացական տուպան առաջարկելը: Իսկ հայ-վրացական գործարար կապերի աշխուժացումը հույսեր է ներշնչում, որ արագացում հնարավոր կլինի ստեղծել Հայաստան-Վրաստան տարածաշրջանային տուպա, վերջում նշեց Տիգրան Դավթյանը:

ԱԲՈՒ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Սկսվել է սոցիալական քարտերի կամավոր-բռնի ներդրումը

1-ին էջից

Դեռ 20 տարի առաջ Եվրոպան, որի մնացած պարադոքսները մենք պարտաճանաչորեն կատարում ենք, պոպիոլարացրել է իրեն նման վտանգներից՝ ընդունելով Անհատական տվյալների պաշտպանության կոնվենցիան, քաջ գիտակցելով, որ մի բազայում տվյալների կուտակումը խիստ վտանգավոր է անձի պաշտպանվածության առումով: Եվրոպական շատ երկրներում պարզապես օգտվում են տարբեր ոլորտների համար նախատեսված քարտերից՝ թոշակառուներն իրենց քարտերն ունեն՝ իրենց համարանիշներով, հարկատուներն՝ իրենց: Նույն սկզբունքը գործում է նաեւ ԱՄՆ-ում, որը շահագրգռված է համակարգի ներդրմամբ Հայաստանում, եւ նույնիսկ տեխնիկական աջակցության համար գումար է տրամադրել: Մեզանում ներդրվում է ոչ թե առանձին ոլորտների, այլ ունիվերսալ տարբերակը:

Այդ տվյալների գաղտնազերծման սպառնալիքի դեմ պաշտպանության ոչ մի համակարգ եւս չի նախատեսվում, բացի թերեւս օրենքի դրույթից, թե քաղաքացին կարող է դիմել դատարան, եթե հայտնաբերի, որ իր տվյալները ինչ-որ մեկն օգտագործել է: Չհիմնվեց նաեւ անհատական տվյալների պաշտպանության անկախ հանձնաժողով, որովհետեւ մեծ ծախսերի հետ էր կապված:

Կա նաեւ այլ իրողություն. անկախ տվյալների անպաշտպան լինելու հանգամանքից, շատերը հրաժարվում են անհատական ծածկագրերից լոկ հավատի պատճառով, պարզապես մարդիկ չեն ուզում թվայնացվել, թեկուզ եւ նրանց պատճառաբանումները Նեռի եւ 666 թվի վերաբերալ, ծիծաղելի են թվում: Սակայն մեր սահմանադրության համաձայն, մարդը ունի նաեւ խղճի ազատություն, իսկ տվյալ դեպքում նրա հավատն արգելում է ընդունել այս համակարգը:

Մեր տեղական ինքնակառավարման օղակների գործունեության տրամաբանությանը եթե հետեւենք, բնակչության մի զգալի հատվածն առաջիկայում զրկվելու է աշխատավարձից, թոշակներից ու նպաստներից, որովհետեւ անհատական ծածկագիր չունի: Հակառակ դեպքում իրականացվելու է կամավոր-բռնի ծածկագրում:

Մ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Հայոց ընտանիքի անհավատալի կարը Հայոց ցեղասպանության հետ

Այդ ժամանակ դեռ հայտնի չէր՝ Թերեզա Հայնց Քերին կդառնա՞ առաջին տիկին, թե ոչ: Ընտրությունները չէին կայացել տակավին: Առաջին էջում զետեղված ընդարձակ մի հոդվածում «Լոս Անջելես թայմս» թերթն իր հոկտեմբերի 27-ի համարում անհավատալի թվացող, բայց փաստացի տվյալներով բացահայտեց, որ տիկին Թերեզայի (սենատոր Ջոն Քերիի կողակիցը) նախկին ամուսնու՝ սենատոր Ջոն Հայնցի պարը՝ Հովարդ Հայնցը Հայաստան է այցելել 1919-ին այնքան անհրաժեշտ մարդասիրական օժանդակություն (մթերք) մատակարարելու Հայոց ցեղասպանությունից մազապուրծ հազարավոր վերապրողների: Հովարդը հենրի Ջոն Հայնցի (ֆեյսբուքի եւ թթվի «կայսրության» հայտնի հիմնադիրը) չորս երեխաներից մեկն էր: Արխիվային նյութերի քննությունների շնորհիվ թերթի աշխատակազմից հոդվածի հեղինակ Ռալֆ Վարդապետյանն առաջին անգամ կարողացել է մանրամասն ներկայացնել Հայնց ընտանիքի անցած չորս սերունդների տոհմածառը: Ահա մի հատված նրա հոդվածից. «Հայնցները Մ. Նահանգներում սննդամթերքի արդյունաբերության զարգացման առաջամարտիկներից են եղել, առաջ են քաշել բազում կառավարական բարեփոխումներ այդ ասպարեզում անվտանգությունն ապահովելու նպատակով, եւ նույնիսկ պահանջել են, որ զինվորական միջամտությամբ վերջ դրվի Հայոց ցեղասպանությանը»:

Հովարդ Հայնցը, որը ներգրավված է եղել հասարակական ակտիվ աշխատանքներում, «Առաջին աշխարհամարտից հետո Վիլսոնի վարչակարգի կողմից Միջին Արեւելք է ուղարկվել ղեկավարելու սովյալներին սննդամթերքով ապահովելու աշխատանքները: Իր հոր՝ Հ. Ջ. Հայնցի մահվան (1919) օրը Հովարդը 30 հազար տոննա սննդամթերք էր հասցնում տարածաշրջան, որտեղ նա ականատես է լինում մեկուկես միլիոն հայերի կյանքը խլած ցեղասպանության հետեւանքներին: Հովարդը փորձել է (նախագահ Վուդրո) Վիլսոնին համոզել, որ զորք ուղարկի վերջ դնելու Արեւելյան Թուրքիայում եւ Հայաստանում տեղի ունեցող սպանդին: Նախագահին ուղղված ճեպագրում նա գրել է. «Ձեմ հավատում, որ Ամերիկան, իմանալով ճշմարտությունը, կարող է մեր բոլոր մարդկային իդեալները մի կողմ դնել (եւ ոչինչ չանել) այն դեպքում, երբ այս մարդիկ սպանվում են այստեղ: Նրա խնդրանքները, ցավոք, անտեսվել են», գրում է Վարդապետյանը:

Վերոհիշյալը նշանակալի հայտնություն է հայերիս եւ հավանաբար նաեւ Հայնց ընտանիքի իրարահաջորդ սերունդների շատ անդամների համար: Փաստորեն, Քերիի կնոջ՝ Թերեզայի երեք որդիները (նախորդ ամուսնուց)՝ Հ. Ջ. Հայնց IV-ը (ծնված 1966-ին), Անդրեն (ծնված 1969-ին) եւ Քրիստոֆերը (ծնված 1973-ին) Հայոց ցեղասպանությանն ականատես Հովարդ Հայնցի ծոռներն են:

ՀԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆՅԱՆ
«Կալիֆորնիա կուրիեր»

Աբխազիայում «վարդյա» հեղափոխությո՞ւն

1-ին էջից

«Մենք իշխանության ենք գալու օրինական ճանապարհով: Մենք աշխատելու ենք ողջ գիշեր, վաղը նախատեսված են հանդիպումներ շատ քաղաքական գործիչների հետ, որտեղ քննարկվելու է ստեղծված իրավիճակը», իր կողմնակիցներին ասել է Բաղաթը:

«Նովոստի» գործակալությունը հաղորդում է, որ գործող վարչապետ Նոդար Խաբաեւ եւ Ռաուլ Խաջիմբա հեռացել են կառավարության շենքից, երբ ընդդիմությունը գրոհել է շենքը: «Ռեգնում» գործակալությունը հավելում է, որ ոստիկանությունը չի միջամտել զարգացումներին: Ընդհանուր առմամբ Սուխումում քաղաքային վիճակ է, սակայն բռնություններ եւ բախումների մասին հաղորդագրություններ չկան: Նախքան Խաջիմբայի եւ Բաղաթի հանդիպումը Սուխումում տեղի է ունեցել նրանց համակիրների առանձին, բայց միաժամանակյա հանրահավաքը:

Նոյեմբերի 11-ին գործող նախագահ Վլադիսլավ Արձինբան չճանաչված հանրապետության բնակչությանը զգուշացրել էր քաղաքացիական բախումների հավանականության մասին եւ կոչ արել անցկացնել նախագահական նոր ընտրություններ: Նշենք, որ Արձինբան անկողնային հիվանդ է եւ ավելի քան 2 տարի հրապարակով չի երեւում: Վրաց-աբխազական պատերազմից (1992-93 թթ.) հետո Աբխազիայի անընդմեջ նախագահը հենց Արձինբան էր:

Ավելի վաղ՝ նոյեմբերի 1-2-ը նախագահի երկու թեկնածուները՝ Բաղաթը եւ Խաջիմբան, հրավիրվել էին Մոսկվա, սակայն Ռուսաստանի միջամտությամբ եւս չէր հաջողվել համաձայնության գալ: Սուխում վերադառնալուց հետո Բաղաթը լրագրողներին ասել էր, որ հանդիպել է Անվտանգության խորհրդի քարտուղար Իգոր Իվանովին եւ անվտանգության դաշնային ծառայության տնօրեն Նիկոլայ Պատրուշեւին:

«Մենք ընդունում ենք ռուսական իշխանությունների խորհուրդները եւ հարգում նրանց դիրքորոշումը, բայց չենք կարող ընդունել ճնշումները: Որոշ մարդիկ փորձում են մեզ վախեցնել ռուս-աբխազական սահմանը փակելու զգուշացումներով, եթե Աբխազիայում կրկնական ընտրություններ չկայանան: Բայց եթե նրանք կարծում են, որ հնարավոր է մեզ վախեցնել, ապա սխալվում են», ռուսական «Կոմերսանտին» ասել է Բաղաթը: Վերջինս կտրականապես բացառել էր նոր ընտրություններ անցկացնելու հավանականությունը եւ ասել, որ դեկտեմբերի 7-ին պատրաստվում է նախագահի երդման արարողությանը:

Հոկտեմբերի 3-ին Աբխազիայում կայացան նախագահական ընտրություններ, որի վերջնական արդյունքները մինչ օրս էլ մնում են անհայտ: Վեճին միջամտեց Աբխազիայի գերագույն դատարանը եւ մոտ երկու շաբաթ առաջ հայտարարեց, որ ընտրություններում հաղթել է Բաղաթը: Սակայն մի քանի ժամ անց Խաջիմբայի կողմնակիցները գրոհեցին դատարանի շենքը եւ սպիտեցին, որ դատարանը հայտարարի ընտրություններում երկրորդ փուլ անցկացնելու մասին:

Հիշեցնենք, որ Աբխազիան դե ֆակտո անկախ հանրապետություն է, որտեղ, սակայն, Ռուսաստանն ունի ակնհայտ ազդեցություն: Ընտրություններում Մոսկվան խաղադրույք էր դրել հենց Խաջիմբայի վրա:

Երեկ Երեւանում, ըստ «Նովոստի» գործակալության, ՌԴ արտգործնախարարության ներկայացուցիչ Ալեքսանդր Յակովենկոն հայտարարեց, թե «իշխանության զավթման» դեպքում Ռուսաստանն «անհրաժեշտ միջոցների կդիմի» իր շահերը պաշտպանելու համար: Հայտարարություն, որ հստակորեն դեմ է Բաղաթին:

Ընտրություններից առաջ Սոչիում տեղի է ունեցել Պուտին-Խաջիմբա հանդիպումը: Բաղաթին, որի կինը վրացուհի է, ընտրություններում աջակցում էին մի շարք քաղաքական կուսակցություններ, այդ թվում վրաց-աբխազական պատերազմի վետերանները, ասել է թե՝ զինված մարդիկ:

Ոչ պաշտոնական տվյալներով, Աբխազիայում բնակչության մոտ 1/3-ը կամ 70 հազարը հայեր են: Ըստ հաղորդագրությունների, նախագահական ընտրություններում Գագրայի հայերը քվեարկել են Խաջիմբայի, իսկ Սուխումի եւ Գուդաութայի շրջանի հայերը՝ Բաղաթի օգտին:

ԹԱԳՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ՃԲ տարի
Գլխավոր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենյակ / հեռ. 581841
Հանակարգչ. ծառայություն / հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ. 529353
Հանակարգչային շարվածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են
համաձայն ՀՅ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Հայաստանի իշխանությունները ուզում են բոլորին դուր գալ

Բայց ոչ մեկին դուր չեն գալիս

ԱԺՄ առաջնորդ Վազգեն Մանուկյանը գտնում է, որ Հայաստանում նոր քաղաքական ուժի հայտնությունը հնարավոր է ընդդիմադիր դաշտի վերաձեւավորման միջոցով: Այդ նոր բուրգում լինելու է եւ խորհրդարանում ներկայացված, եւ չներկայացված ընդդիմությունը: Կարեւորն այս դեպքում լինելու է պոպուլիզմից ձերբազատումը, գաղափարների ու սկզբունքների իրատեսությունը, այնպես որ դրանք առաջարկողներն առաջինն իրենք հավատան իրենց ասածին: Եվ նրանց «մեծ ֆինանսական միջոցներ պետք չեն, որպեսզի կարողանան այլընտրանքային ծրագիր ներկայացնել հասարակությանը»: Այլընտրանքային ուժը Վազգեն Մանուկյանն այսօր տեսնում է այն մարդկանց մեջ, ում հետ ճանապարհ է անցել 1988 թվականին եւ դրանից առաջ: «Ոչ թե նրանք են, ովքեր քաղաքականությունը իբրեւ փեշակ են ընտրել, այլ մինչ հիմա իրենց գաղափարներին հավատարիմ մարդիկ»: Այդ կոհորտայի մեջ Վ. Մանուկյանը տեսնում է նաեւ Աշոտ Մանուչարյանին ու Պարույր Հայրիկյանին:

Սորոսի հիմնադրամի կողմից քաղաքական ներդրումների հավանականությանը Վազգեն Մանուկյանը լուրջ չի վերաբերվում եւ լրագրողներին էլ նույնը խորհուրդ տվեց: Ընդդիմության խորհրդարան վերադարձը այս պահին դարձյալ աննպատակահարմար է համարում: ԱԺՄ առաջնորդը ընդդիմության հնարավոր գործողությունների բավական ինքնատիպ նախագիծ առաջարկեց. ստեղծել հակակոռուպցիոն նախարարություն եւ ղեկավար նշանակել ընդդիմությանը: Իսկ եթե ընդդիմությունը գա իշխանության, նոր ընդդիմությունը կտնօրինի այդ նախարարությունը: Թե չէ կոռուպցիայով զբաղվող իշխանությանը կոռուպցիայի դեմ պայքարը վստահելն անմտություն է:

Տարածաշրջանում Հայաստանի ներկա դեր ու կշռին ԱԺՄ առաջնորդը թերահավատորեն է վերաբերվում. «Ոչ ճանապարհ է անցնում, ոչ գազամուղ, ոչ էլ ժողովրդավարական երկիր ենք, ոչ մի ֆակտոր չկա: Ադրբեջանն էլ մի տարվա ընթացքում բավականին ակտիվացել է: Օսկանյանն ասում է, ադրբեջանցիները սխալ արեցին, որ Ղարաբաղի հարցը ՄԱԿ մտցրեցին: Ես կարող եմ ասել՝ ոչ, չսխալվեցին: Իրենք երբ այնպես արեցին, որ ՆԱՏՕ-ի զորախաղերը տեղի չունենան, այդ ժամանակ էլ չսխալվեցին: Նրանք ափսոսիին հստակ ասացին՝ մենք մինչեւ վերջ գնալու ենք, եւ իրենց հետ հաշվի են նստում: Վերջին մի տարվա ընթացքում Ռուսաստանն իրենց հետ ավելի լավ հարաբերություններ է ստեղծել, քան մեզ հետ: Անընդհատ այդ գործընթացն է գնում, երբ դու ոչ ոքի էլ պետք չես լինում: Եվ քեզ հետ կվարվեն այնպես, ինչպես վարվում են նման դեպքերում»:

Դեմ արտահայտվելով Իրաք 50 հոգանոց ջոկատ ուղարկելու հավանականությանը, Վ. Մանուկյանը առավել դատապարտելի համարեց իշխանությունների ինքնագլուխ որոշումներ ընդունելու սովորությունը՝ առանց խորհրդարանի, անվտանգության խորհրդի կարծիքը հարցնելու: Սակայն Իրաք զորք ուղարկելը, ըստ ԱԺՄ առաջնորդի, չի նշանակում, որ իշխանությունները ուզում են Արեւմուտքի հետ լինել: Պարզապես նրանք ուզում են բոլորին դուր գալ՝ եւ Արեւմուտքին, եւ Ռուսաստանին, բացառապես իշխանություն պահելու, փող աշխատելը չընդհատելու նպատակով: Բայց «ոչ մեկին դուր չեն գալիս»:

Վազգեն Մանուկյանը կոպիտ սխալ է համարում Հոկտեմբերի 27-ի գործի անջատված մասի կարճումը, քանի որ «դատավարության ընթացքում շատ բաներ մնացին բաց, իսկ այդպիսի գործում չի կարելի բաց տեղեր ունենալ»: Հոկտեմբերի 27-ի՝ դրսի կազմակերպիչներ ունենալու մասին քաղաքական տարբեր ուժերի ենթադրությունները Վազգեն Մանուկյանը իշխանությունների «գյուղական խորամանկությունն» է անվանում, որի նպատակն ի վերջո ժողովրդի իշխանությունների շուրջը համախմբելն էր: Թե չէ Հայաստանը երբեք այնպիսի գործոն չի եղել, որ դրսի ուժերին անհանգստացնի:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

«Միդլենդ ռեսուրսիզը» բաշխիչ ցանցերը չի վաճառում «ՌԱՕ ԵԷՍ»-ին

Առայժմ. թե ինչ կլինի հետո, ընկերությունում չեն կարող գուշակել

«Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ մամուլի քարտուղար **Մարգարիտա Գրիգորյանն «Ազգի»** հետ հեռախոսազրույցում հերքեց նախօրեին լրատվամիջոցներում տարածված տեղեկությունները, թե «Միդլենդ ռեսուրսիզ հոլդինգ» բրիտանական ընկերությունը պատրաստվում է Հայաստանի էլեկտրացանցերը վաճառել ռուսական «ՌԱՕ ԵԷՍ» ընկերությանը:

«Լրատվամիջոցներում տարածված լուրերն այս պահի դրությամբ իրականության հետ որեւէ կապ չունեն: «Միդլենդ ռեսուրսիզը» չի վաճառել Հայաստանի բաշխիչ ցանցերը, ընկերությունը շատ լավ աշխատում է, թե ինչ կլինի հետո, չեմ կարող ասել: Բաշխիչ ցանցերը չեն կարող վաճառվել, քանի դեռ կառավարությունը թույլտվություն չի տվել: Բացի այդ, այսօրվա դրությամբ որեւէ ընկերություն չի դիմել Հայաստանի կառավարությանը, երկրի բաշխիչ ցանցերը գնելու առաջարկով», ասաց Գրիգորյանը:

Հիշեցնենք, որ 2002 թ. բրիտանական «Միդլենդ ռեսուրսիզը» 40 մլն դոլարով գնեց Հայաստանի բաշխիչ ցանցերը: Ինչ վերաբերում է ռուսական «ՌԱՕ ԵԷՍ»-ին, ապա այս ընկերությունն ավելի վաղ ցանկություն էր հայտնել գնելու բաշխիչ ցանցերը, սակայն նրան թույլ չէր տրվել մասնակցել մրցույթին՝ վերջինիս միջազգային աուդիտից խուսափելու պատճառաբանությամբ: Ավելորդ չէ հիշեցնել, որ այդ օրերին Հայաստանում Ռուսաստանի դեսպանը խիստ հայտարարություններ էր հնչեցնում պատասխանական Երեւանի հասցեին:

Նկատենք, որ «ՌԱՕ ԵԷՍ»-ը հետագայում մասնավորապես «Գույք պարտքի դիմաց» հայ-ռուսական միջկառավարական պայմանագրով փաստորեն Հայաստանում տիրացավ էլեկտրաէներգիա արտադրող հզորությունների մեծ մասին, մասնավորապես «Սեւան-Հրազդան» կասկադին, Հրազդանի ՋԷԿ-ին, ինչպես նաեւ նրա կառավարմանն է հանձնված Մեծամորի ատոմակայանը:

Ռ. Հ.

Համալսարանականները չընտրեցին ուսխորհրդի նախագահ

Որեւէն ղեկավարներ կնշանակեն

Երեկ Երեւանի պետական համալսարանի ֆակուլտետային ուսանողական խորհուրդների անդամները համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ եւ նախագահություն կրկին չկարողացան ընտրել, նախագահի երկու թեկնածուներից ոչ որ չկարողացավ անհրաժեշտ նվազագույն՝ 59 քվե հավաքել, Միհրան Հակոբյանի օգտին քվեարկեց 57 պատվիրակ, Հայկ Վարդանյանի՝ 49: Այսպիսով հարցը տեղափոխվեց պետհամալսարանի գիտխորհուրդ: Բուհի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը ուսանողական խորհրդի նախագահի ընտրության արդեն երրորդ անհաջող փորձը պայմանավորեց պատվիրակների «խակ» լինելով: «Երեւի թե լավ չեն պատկերացնում այն սկզբունքները, որոնցով առաջնորդվելով պետք է նախագահ ընտրեն: Գուցե պետք է կանոնակարգը փոխենք: Չմիջամտեցինք, բացարձակ արդար ընտրություններ կազմակերպեցինք, սակայն արդյունքը սա եղավ, նշանակում է դեռ խակ են, դեռ չեն պատկերացնում ինչ բան է կազմակերպությունը, ինչ խնդիրներ ունի, ինչ պետք է անի»:

Նախագահի թեկնածու Հայկ Վարդանյանն այս իրավիճակը բացատրում է ժամանակի սղության պատճառով ոչ բոլոր ֆակուլտետներում իրենց ծրագրերը ներկայացնելու հնարավորությամբ, որի արդյունքում էլ, ըստ նրա, ոչ բոլոր պատվիրակներն էին կողմնորոշվել եւ մասնակցում ընտրություններին: Իսկ Միհրան Հակոբյանը գտնում է, որ պատճառը ուսանողների մի մասի իրավագիտակցության ցածր մակարդակն է, նրանք քվեարկում էին ոչ թե ծրագրի, այլ անհատի օգտին: «Հերթական անգամ ուսանողությունը, այդ թվում եւ ես, ապացուցեց, որ ինչ-որ տեղ ընտրություն կատարելու ունակ չէ, ասաց նա: Մենք այսպիսով մեր բոլոր խաղաթղթերը գիտխորհրդին հանձնեցինք: Կարծում եմ՝ այս պարագայում իրոք ճիշտը գիտխորհրդին վստահելն է»: Պետհամալսարանի ռեկտորն ասաց, որ դեռ չգիտի՝ ում կնշանակեն ուսանողական խորհրդի նախագահ, հարցը դեռ կքննարկվի:

Թ. Մ.

ՀՈԿԲՔ

Լեհական տնտեսական հրաշքի հեղինակը՝ «Հայաստանի տնտեսական հրաշքի» մասին

Լեհաստանի նախկին փոխվարչապետ, տնտեսական բարեփոխումների համահեղինակ Լեշեկ Բալցերովիչը հայտարարել է, որ «Հայաստանն իրականացրել է արընթաց բարեփոխումներ, որոնց շնորհիվ հասել է աճի բարձր տեմպերի»: «Վերջին մի քանի տարիներին որոշ հետխորհրդային երկրներ զարգացել են ավելի արագ, քան Կենտրոնական Եվրոպան: Նրանց թվում Հայաստանն է», Բալցերովիչի խոսքերը մեջբերում է «Մեդիամախը»:

Անրի Կյունի. Հայաստանը պետք է դառնա Արեւմուտքն ու Արեւելքը կապող խաչմերուկ

Երեկ Երեւանում ՀՀ կրթության նախարար Սերգո Երիցյանի ձեռքով բացվեց Ռոբերտ Շումանի անվան եվրոպական ուսումնական համալիրը: Ըստ «Մեդիամախի», համալիրի մեջ են մտնում Հայաստանի Ֆրանսիական համալսարանն ու Հայաստանում տեղեկատվական եւ հաղորդակցային տեխնոլոգիաների եվրոպական տարածաշրջանային ինստիտուտը: Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Անրի Կյունին ասել է, որ Երեւանում նման համալիրի բացումը վկայում է զարգանալու եւ եվրոպական կառույցներին ինտեգրվելու Հայաստանի ձգտման մասին: Դեսպան Կյունին հույս է հայտնել, որ որոշ ժամանակ անց այս հաստատությունում կկարողանան կրթություն ստանալ նաեւ Թուրքիայի եւ Ադրբեջանի քաղաքացիները: Իսկ Հայաստանը պետք է դառնա Արեւմուտքն ու Արեւելքը կապող խաչմերուկ:

Շարունակվում են Հայոց ցեղասպանության հարցի թուրքական շահարկումները

Դա ենթադրում է հայ-թուրքական սահմանի բացման ԵՄ-ի ճնշումների ուժեղացումը Թուրքիայի վրա

Վերջին օրերին վերաբխուժացան հայ-թուրքական հարաբերությունների շուրջ ծավալվող քննարկումները Թուրքիայում: Քննարկումներում այդ հարաբերությունների կարգավորումն անմիջականորեն պայմանավորվում էր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման նկատմամբ Հայաստանի դիրքորոշմամբ եւ անհիմն հետեւություններ էր արվում, թե իբր հայկական իշխանությունները երկրի արտաքին քաղաքականության օրակարգից դուրս են բերում ճանաչման հարցը:

Քննարկումների առումով առանձնակի ակտիվությամբ աչքի էին ընկել ինտերնետային «Հաբեր» եւ թե «Հաբեր անալիզը» հրապարակում էր Անկարայում գործող Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի աշխատակիցների վերոհիշյալ հետեւությունները «հիմնավորող» հոդվածները, ապա «ԱփՀամն» այդ հետեւությունների «հաստատմանն» ինքնակամ մասնակից էր դարձնում սփյուռքահայ գործիչներին: Այլ կերպ, թուրքական մամուլը հայկական իշխանությունների հետ շահարկում էր նաեւ մեր հայրենակիցների անունները:

«Ազգը», արձագանքելով շահարկումներին, կարծիք էր հայտնել, որ դրանք Եվրամիության հետ Թուրքիայի անդամակցության բանակցությունների սկզբնավորման ներկա փուլում շրջանառության մեջ են դրվում միջազգային հանրությանն ապակողմնորոշելու, ինչպես նաեւ ցեղասպանության հարցում Հայաստանին Թուրքիայի շահագրգռություններին համապատասխան զիջումներ հաղորդելու թուրքական նկրտումներով:

Թեեւ մեր արձագանքից հետո ՀՀ ԱԳՆ մամուլի քարտուղար Համլետ Գասպարյանը պատասխանաբար հայտարարեց «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում Հայաստանի քաղաքականության մեջ փոփոխություն չլինելու» մասին եւ նրա հայտարարությունն անուղղակիորեն հաստատեց Թուրքիայի արտգործնախարարությունն, այնուամենայնիվ, թուրքական մամուլում շահարկումները չեն դադարում: Ավելին, շահարկման պատճառ է դառնում նաեւ «Ռոյթեր» գործակալությունը, որը Թուրքիայի հայկական սահմանի բացման նպաստելու համար Կարսում հարցազրույց էր անցկացրել քաղաքացի Նաիֆ Ալիբեյոլլուի հետ:

Շահարկման դեպքում խոսքը պատասխանող դեսպան, Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի անդամ Գյունդուզ Ափքանի մասին է, որը «Ռադիկալի» նոյեմբերի 11-ի համարում իր գնահատականն է տվել «Ռոյթերի» հարցազրույցին: Մինչ նրա գնահատականին անդրադառնալը, նշենք, որ «Ռոյթերը», «Միլլիեթի» նույն օրվա համարի տվյալներով, Թուրքիայի հայկական սահմանի բացման նպատակով քարոզարշավ ծավալելու համար Կարսի քաղաքապետ Ալիբեյոլլուին համարել է «նպատակ հետապնդող մարդ», նշել նրա Հայաստանի նկատմամբ 11 տարի շարունակվող շրջափակումը վերացնելու երազանքի, ինչպես նաեւ քաղաքում այդ նպատակով հավաքված 50 հազար ստորագրության մասին:

Ըստ «Ռադիկալի», Ալիբեյոլլուն հարցազրույցում միաժամանակ ընդգծել է հայ-թուրքական սահմանի բացման կարեւորությունը ողջ տարածաշրջանի խաղաղության եւ բարգավաճման համար, իսկ «Ռոյթերն» ավելացրել, որ Անկարան չի ընդունում Կարսի քաղաքապետի լավատեսությունը: Ինչ վերաբերում է Ափքանին, որը ներկայումս ղեկավարում է Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը, «Ռադիկալին» ասել է, որ խնդիրը սոսկ սահմանի բացումը չէ եւ պատճառաբանել. «Հայաստանը Թուրքիայից պահանջում է ճանաչել Հայոց ցեղասպանությունը»:

Հայաստանը Թուրքիային այդպիսի պահանջ երբեւէ չի ներկայացրել, ավելին՝ բազմիցս հայ-թուրքական հարաբերություններն առանց որեւէ նախապայմանի կարգավորելու պատրաստակամություն է հայտնել եւ նույնիսկ ընդգծել, որ ցեղասպանության ճանաչումը պարտադիր չէ: Քանի որ այս պատրաստակամությունը չի կարող հայտնի չլինել Ափքանին, ուրեմն նա խնդիրն էլ Թուրքիայի հայկական սահմանի բացման դիմաց Հայաստանին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումից հրաժարվելու պահանջ ներկայացնելն է:

Սա նշանակում է, որ Թուրքիայի քաղաքական շրջանակները միանգամայն իրատեսական են համարում եթե ոչ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման, ապա հայ-թուրքական սահմանի բացման համար ԵՄ-ի ճնշումների ուժեղացումը: Ճնշումների թուլացման հրամայականը նրանց սթափում է միջոցներ որոնել: Այսպիսով, նրանք ցեղասպանության հարցում միջազգային հանրությանը ապակողմնորոշելիս միաժամանակ ապակողմնորոշում են նաեւ թուրք հասարակությանը:

ՀՐԱՆՈՒՇ ՉԱՔԱՐՅԱՆ

Հակոբ Սարգիսյանը «Իզմիրյան» հիմնադրամի եւ իր մասին

Բարեկիրթ, զուսպ նկարագրով անձնավորություն է Հակոբ Սարգիսյանը: Ապրում է Ժնեւում, 1988-ի Սպիտակի երկրաշարժից հետո ստեղծված «Իզմիրյան» հիմնադրամի փոխնախագահն է: «Հայրս հունական բանակի մեջ սպա էր, ցեղասպանութենեն ետ եկած իր ծնողները փնտրած է այդ խեղճ ու կրակ սուրիական գյուղին մեջ, ամուսնացած եւ հալեպ տեղափոխված է: Ես Հալեպ ծնած եմ», պատմում է Հակոբ Սարգիսյանը:

Նախակրթարանից հետո ուսումը շարունակում է ամերիկյան քոլեջում, ապա տեղափոխվում Բեյրութ, որտեղ զբաղվում է հասարակական գործունեությամբ, անդամակցում Գրական շրջանակին, որի անդամներն էին Գառնիկ Ադդարյանը, Ամեն Դարյանը, Թորոս Թորանյանը, Սարգիս Վահագնը: Աշխատանքային հանգամանքների բերումով ճամփորդում է Մարոկկո, տնօրինում օդային մի ընկերություն, նաեւ օդային 27 ընկերությունների տնօրենների նախագահ էր: Ապա տեղափոխվում է Ժնեւ, շարունակում կրթությունը տնտեսագիտության բնագավառում, Շվեյցարահայ միության նախագահն է եղել: Պրն Սարգիսյանը հաճախ է Հայաստան այցելում՝ կապված «Իզմիրյան» հիմնադրամի գործունեության հետ: Բարեսիրական նպաստակներով ստեղծված հիմնադրամի առաջին գործը Երեւանի պետհամալսարանի գրադարանի նորոգությունը եղավ, ապա եւ հաստատված հիմնադրամը, որի եկամուտներով գրադարանն ամեն տարի հոգում է որոշակի կարիքներ: Իբրեւ ապրանք պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի ժնեւյան մի հանդիպումի, հիմնադրամը 3-4 մլն դոլարի ներդրում կատարեց՝ կառուցելու ներկայիս Վազգեն Սարգսյանի անունը կրող ռազմական ինստիտուտի երեք մասնաշենները՝ անհրաժեշտ հարմարություններով: Հիմնադրամի բարեգործական ծրագրերի մեջ ընդգրկված դպրոցաշինության շրջանակներում Ղարաբաղի Չլդրան գյուղում արդեն ջանցիների կործանած դպրոցը վերակառուցվել եւ անվանվել է Տիգրան Իզմիրյանի անունով: Համագործակցելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի հետ, ամեն տարի «Իզմիրյան» հիմնադրամը 50 հազար դոլար է տրամադրում զոհված ազատամարտիկների ընտանիքներին, նաեւ հնարավորություն է ստեղծել հաշմանդամ, անդամալույծ ազատամարտիկներին առողջությունը վերականգնելու արտասահմանում: Թվով 5 ազատամարտիկ ուղարկվել է Գերմանիա, նրանցից մեկը փոփին առաջինվել է:

Բարեսիրական գործունեությանը զուգահեռ «Իզմիրյան» հիմնադրամը, Վազգեն Սարգսյանի վարչապետության օրոք, Հայաստանի կառավարության առաջարկով, իրագործում է նաեւ վարկային ծրագիր՝ *«Մեզի ըստ՝ ձեր բարեսիրական գործերեն տպավորված ենք, սակայն եթե իրապես օգնել կուզեք Հայաստանին, ներդրումներ ըրեք, որպեսզի աշխատատեղեր ստեղծվին»:*

Հիմնադրամի երեք վարկային ծրագրերից առաջինը Սեւծովյան երկրների դրամական հետ համագործակցության արդյունքում ստեղծված երեք մակարդակներով (մինչեւ 500 հազար, 125 հազար եւ 5 հազար դոլար) վարկեր է տրամադրում ձեռներեցներին:

Երկրորդը «Եվրասիա» հիմնադրամի հետ (յուրաքանչյուրը 1,5 մլն գումարի մասնակցությամբ) համագործակցության ծրագիրն է՝ մինչեւ 125 հազար տրամադրվող վարկի չափով, ստեղծված 1997 թ., որ վեց տարի արդեն հաջողությամբ իրագործվում է Հայաստանում՝ խթանելով փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը (առ այսօր ստեղծվել է 3 հազար աշխատատեղ): Երկամյա ժամկետով վարկը տրվում է այն ձեռներեցներին, ովքեր բիզնեսի, արտադրության, մարկետինգի փորձ ունեն եւ տիրապետում են միջոցներն ի պետս եւ արդյունավետ գործածելու մեխանիզմներին: *«Հայաստանի մեջ կորուստը երկու առ հարյուր է, ասիկա նույնիսկ զվեյցարական մակարդակով շատ բարձր ցուցանիշ է, բացառիկ իրագործում է: Սա կնշանակէ, որ մեր ժողովուրդը պարկեշտ է, հակառակ անոր, որ սովետական շրջանին այսպես ասած առնել-տալու ոճֆլեխը կորսնցուցած էր», ասում է հիմնադրամի փոխնախագահը:*

Վարկային հաջող ծրագիրը՝ «Էգլոֆ»-ը, հաստատված Համաշխարհային եկեղեցիների խորհրդի կողմից Ժնեւում, գործում է թույլ զարգացած երկրներում: Հայաստանում այս ծրագիրն իրագործվում է Մայր աթոռ Սբ. Էջմիածնի միջնորդությամբ: «Իզմիրյան» հիմնադրամն այդ ծրագրին մասնակցում է 100 հազար դոլարի ներդրումով: Վարկերը 1000-5000 դոլարի չափով տրամադրվում են աղքատ գյուղացիությանը՝ նպատակադրված խթանելու գյուղմթերքների արտադրությանը եւ գյուղացու սոցիալական վիճակի բարելավմանը: Վարկային այս ծրագրի շուրջ ունեցած արդյունքները տեսել է Լոռու շրջանի գյուղացիությունը, երբ նախնական թեռահավաքները հաղթահարելով՝ հավաքական վարկ են վերցրել (ունետները եռաշխավորել են աղքատների համար) եւ մեկ տարվա ընթացքում կաթի ու պանրի արտադրության մեջ հասել զգալի ցուցանիշների: Արտադրանքը վաճառելու համար անհրաժեշտ տրանսպորտային փոխադրման հարցը նույնպես փորձում է լուծել հիմնադրամը:

Հիմնադրամի վարկային ծրագրի տարեկան շրջանառությունը կազմում է 3 մլն դոլար, 100/15 տոկոսային հարաբերությամբ: Հիմնադրամի գործունեության համար Հայաստանում խոչընդոտները որոշիչ չեն, հիմնական մտահոգությունը մնում է երկրում դեռեւս օրենսդրական չհստակված դաշտը, երբեմն էլ՝ վարչական բյուրոկրատիան:

Արտադրության, գյուղատնտեսության զարգացմանը եւ մարդկանց սոցիալական վիճակի բարելավմանն ուղղված հիմնադրամի այս գործունեությունը, բնականաբար, նպաստում է նաեւ արտագաղթը կանխելուն:

- Նախապես երբ սկսանք, ադիկա խնդրո առարկա չէր, սակայն շատ ոլորտի ուզեինք կանխել ձեւով մը: Արտագաղթը շատ բարդ, սոցիալական, քաղաքական հարց է: Այդ կանխելու միակ ձեւը՝ ըլլանք ավելի լավ, քան դրացի երկիրները: Մեր այժմու բոլոր ճիգերը հազիվ թե արդյունք մը տան: Արտագաղթը ամբողջությամբ պետք չէ առնել իբրեւ ազգային աղետ: Անշուշտ, լավ երեւույթ չէ, սակայն ինձի համար դժբախտություն ալ չէ, ադիկա մեծ քաղաքական հարցի պետք չէ վերածել: Եթե չես կարենար կեռակրել ընտանիքդ երկրիդ մեջ, անպատեհություն չէ դուրս ելլել, հոն շահիլ եւ այնտեղեն ուղարկել:

- Պրն Սարգիսյան, ինչ է ձեզ համար Հայաստանը եւ հայրենասիրությունն առհասարակ:

- Օտարության մեջ ապրիլն ավելի դյուրազգաց կդարձնէ մարդը նման հարցերուն: Եթե հայրենասեր ես, եթե ժողովուրդ կսիրես, ժողովուրդովդ ապրած ես մինչ այդ, եւ երբ իմանաս Հայաստանի մեջ ցավ կա, խնդիրներ կան, ավելի կտառապիս, ես անոնցմէ մեկը եղած եմ:

Հայաստանը հսկայական կորուստ տարավ, հազարավոր մարդիկ պատերազմի ատեն զոհվեցավ: Սփյուռքը, անշուշտ, իր դերն ունի կատարելիք, ես կխորհիմ, որ մենք՝ սփյուռքահայերս, շատ ավելի ինչ կրած ենք զոհողության իմաստով, քան հայաստանցիները: Սփյուռքի մեջ երկու տեսակը կա, այն, որ իսկապես մասնակցություն կբերե Հայաստանի օգնության, կա նաեւ խոսողը, ինձի շատ անհանգիստ կընե այդ խոսողը: Սփյուռքը, ճիշտ է, շատ դժվար պայմաններու տակ իր շարժականությունը պահպանած է, մեծ ճիգ կա սփյուռքի մեջ, սակայն ինձի համար բավարար չէ: Հայաստանի ժողովուրդն իր գերագույնը տվավ զոհողությանց: Այս ժողովրդի մեջ կան նաեւ շահագործողներ, որոնք ոչինչ ունին ըրած բացի դիզելեն, բայց ժողովուրդը շատ զոհողություններ ըրավ: Ես կաշխատիմ իմ համեստ պարտականությունս կատարել իմ չափով, իմ կարելիություններու սահմաններուն մեջ:

«Իզմիրյան» բարեգործական հիմնադրամի փոխնախագահը, որ հիմնական գործունեությունը առեւտրաբանկային ոլորտում է իրականացնում, ներաշխարհային խոհուն, զգայուն ու ճնարական զգացողությունների բանաստեղծ է նաեւ: Երիտասարդական տարիների գրական հետաքրքրությունները չեն նվազել, վկայությունը վերջին տարիների երկու ժողովածուներն են՝ «Մկրտին շեբին վրայ» եւ «Անկշռելին», որոնց համար նա արժանացել է «Հայկաշեն Ուզունյան» գրական մրցանակի: Հ. Սարգիսյանի բանաստեղծական աշխարհը խոհափիլիսոփայական տրամադրություններով ու ճնարական զեղումներով արդիական ձեւի մեջ՝ պատկերային ոտպն համակարգ է, շարունակում է ամերիկյան քոլեջում, ապա տեղափոխվում Բեյրութ, որտեղ զբաղվում է հասարակական գործունեությամբ, անդամակցում Գրական շրջանակին, որի անդամներն էին Գառնիկ Ադդարյանը, Ամեն Դարյանը, Թորոս Թորանյանը, Սարգիս Վահագնը: Աշխատանքային հանգամանքների բերումով ճամփորդում է Մարոկկո, տնօրինում օդային մի ընկերություն, նաեւ օդային 27 ընկերությունների տնօրենների նախագահ էր: Ապա տեղափոխվում է Ժնեւ, շարունակում կրթությունը տնտեսագիտության բնագավառում, Շվեյցարահայ միության նախագահն է եղել: Պրն Սարգիսյանը հաճախ է Հայաստան այցելում՝ կապված «Իզմիրյան» հիմնադրամի գործունեության հետ: Բարեսիրական նպաստակներով ստեղծված հիմնադրամի առաջին գործը Երեւանի պետհամալսարանի գրադարանի նորոգությունը եղավ, ապա եւ հաստատված հիմնադրամը, որի եկամուտներով գրադարանն ամեն տարի հոգում է որոշակի կարիքներ: Իբրեւ ապրանք պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի ժնեւյան մի հանդիպումի, հիմնադրամը 3-4 մլն դոլարի ներդրում կատարեց՝ կառուցելու ներկայիս Վազգեն Սարգսյանի անունը կրող ռազմական ինստիտուտի երեք մասնաշենները՝ անհրաժեշտ հարմարություններով: Հիմնադրամի բարեգործական ծրագրերի մեջ ընդգրկված դպրոցաշինության շրջանակներում Ղարաբաղի Չլդրան գյուղում արդեն ջանցիների կործանած դպրոցը վերակառուցվել եւ անվանվել է Տիգրան Իզմիրյանի անունով: Համագործակցելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի հետ, ամեն տարի «Իզմիրյան» հիմնադրամը 50 հազար դոլար է տրամադրում զոհված ազատամարտիկների ընտանիքներին, նաեւ հնարավորություն է ստեղծել հաշմանդամ, անդամալույծ ազատամարտիկներին առողջությունը վերականգնելու արտասահմանում: Թվով 5 ազատամարտիկ ուղարկվել է Գերմանիա, նրանցից մեկը փոփին առաջինվել է:

Բարեսիրական գործունեությանը զուգահեռ «Իզմիրյան» հիմնադրամը, Վազգեն Սարգսյանի վարչապետության օրոք, Հայաստանի կառավարության առաջարկով, իրագործում է նաեւ վարկային ծրագիր՝ *«Մեզի ըստ՝ ձեր բարեսիրական գործերեն տպավորված ենք, սակայն եթե իրապես օգնել կուզեք Հայաստանին, ներդրումներ ըրեք, որպեսզի աշխատատեղեր ստեղծվին»:*

Հիմնադրամի երեք վարկային ծրագրերից առաջինը Սեւծովյան երկրների դրամական հետ համագործակցության արդյունքում ստեղծված երեք մակարդակներով (մինչեւ 500 հազար, 125 հազար եւ 5 հազար դոլար) վարկեր է տրամադրում ձեռներեցներին:

Երկրորդը «Եվրասիա» հիմնադրամի հետ (յուրաքանչյուրը 1,5 մլն գումարի մասնակցությամբ) համագործակցության ծրագիրն է՝ մինչեւ 125 հազար տրամադրվող վարկի չափով, ստեղծված 1997 թ., որ վեց տարի արդեն հաջողությամբ իրագործվում է Հայաստանում՝ խթանելով փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը (առ այսօր ստեղծվել է 3 հազար աշխատատեղ): Երկամյա ժամկետով վարկը տրվում է այն ձեռներեցներին, ովքեր բիզնեսի, արտադրության, մարկետինգի փորձ ունեն եւ տիրապետում են միջոցներն ի պետս եւ արդյունավետ գործածելու մեխանիզմներին: *«Հայաստանի մեջ կորուստը երկու առ հարյուր է, ասիկա նույնիսկ զվեյցարական մակարդակով շատ բարձր ցուցանիշ է, բացառիկ իրագործում է: Սա կնշանակէ, որ մեր ժողովուրդը պարկեշտ է, հակառակ անոր, որ սովետական շրջանին այսպես ասած առնել-տալու ոճֆլեխը կորսնցուցած էր», ասում է հիմնադրամի փոխնախագահը:*

Վարկային հաջող ծրագիրը՝ «Էգլոֆ»-ը, հաստատված Համաշխարհային եկեղեցիների խորհրդի կողմից Ժնեւում, գործում է թույլ զարգացած երկրներում: Հայաստանում այս ծրագիրն իրագործվում է Մայր աթոռ Սբ. Էջմիածնի միջնորդությամբ: «Իզմիրյան» հիմնադրամն այդ ծրագրին մասնակցում է 100 հազար դոլարի ներդրումով: Վարկերը 1000-5000 դոլարի չափով տրամադրվում են աղքատ գյուղացիությանը՝ նպաստակադրված խթանելու գյուղմթերքների արտադրությանը եւ գյուղացու սոցիալական վիճակի բարելավմանը: Վարկային այս ծրագրի շուրջ ունեցած արդյունքները տեսել է Լոռու շրջանի գյուղացիությունը, երբ նախնական թեռահավաքները հաղթահարելով՝ հավաքական վարկ են վերցրել (ունետները եռաշխավորել են աղքատների համար) եւ մեկ տարվա ընթացքում կաթի ու պանրի արտադրության մեջ հասել զգալի ցուցանիշների: Արտադրանքը վաճառելու համար անհրաժեշտ տրանսպորտային փոխադրման հարցը նույնպես փորձում է լուծել հիմնադրամը:

Հիմնադրամի վարկային ծրագրի տարեկան շրջանառությունը կազմում է 3 մլն դոլար, 100/15 տոկոսային հարաբերությամբ: Հիմնադրամի գործունեության համար Հայաստանում խոչընդոտները որոշիչ չեն, հիմնական մտահոգությունը մնում է երկրում դեռեւս օրենսդրական չհստակված դաշտը, երբեմն էլ՝ վարչական բյուրոկրատիան:

Արտադրության, գյուղատնտեսության զարգացմանը եւ մարդկանց սոցիալական վիճակի բարելավմանն ուղղված հիմնադրամի այս գործունեությունը, բնականաբար, նպաստում է նաեւ արտագաղթը կանխելուն:

- Նախապես երբ սկսանք, ադիկա խնդրո առարկա չէր, սակայն շատ ոլորտի ուզեինք կանխել ձեւով մը: Արտագաղթը շատ բարդ, սոցիալական, քաղաքական հարց է: Այդ կանխելու միակ ձեւը՝ ըլլանք ավելի լավ, քան դրացի երկիրները: Մեր այժմու բոլոր ճիգերը հազիվ թե արդյունք մը տան: Արտագաղթը ամբողջությամբ պետք չէ առնել իբրեւ ազգային աղետ: Անշուշտ, լավ երեւույթ չէ, սակայն ինձի համար դժբախտություն ալ չէ, ադիկա մեծ քաղաքական հարցի պետք չէ վերածել: Եթե չես կարենար կեռակրել ընտանիքդ երկրիդ մեջ, անպատեհություն չէ դուրս ելլել, հոն շահիլ եւ այնտեղեն ուղարկել:

- Պրն Սարգիսյան, ինչ է ձեզ համար Հայաստանը եւ հայրենասիրությունն առհասարակ:

- Օտարության մեջ ապրիլն ավելի դյուրազգաց կդարձնէ մարդը նման հարցերուն: Եթե հայրենասեր ես, եթե ժողովուրդ կսիրես, ժողովուրդովդ ապրած ես մինչ այդ, եւ երբ իմանաս Հայաստանի մեջ ցավ կա, խնդիրներ կան, ավելի կտառապիս, ես անոնցմէ մեկը եղած եմ:

Հայաստանը հսկայական կորուստ տարավ, հազարավոր մարդիկ պատերազմի ատեն զոհվեցավ: Սփյուռքը, անշուշտ, իր դերն ունի կատարելիք, ես կխորհիմ, որ մենք՝ սփյուռքահայերս, շատ ավելի ինչ կրած ենք զոհողության իմաստով, քան հայաստանցիները: Սփյուռքի մեջ երկու տեսակը կա, այն, որ իսկապես մասնակցություն կբերե Հայաստանի օգնության, կա նաեւ խոսողը, ինձի շատ անհանգիստ կընե այդ խոսողը: Սփյուռքը, ճիշտ է, շատ դժվար պայմաններու տակ իր շարժականությունը պահպանած է, մեծ ճիգ կա սփյուռքի մեջ, սակայն ինձի համար բավարար չէ: Հայաստանի ժողովուրդն իր գերագույնը տվավ զոհողությանց: Այս ժողովրդի մեջ կան նաեւ շահագործողներ, որոնք ոչինչ ունին ըրած բացի դիզելեն, բայց ժողովուրդը շատ զոհողություններ ըրավ: Ես կաշխատիմ իմ համեստ պարտականությունս կատարել իմ չափով, իմ կարելիություններու սահմաններուն մեջ:

«Իզմիրյան» բարեգործական հիմնադրամի փոխնախագահը, որ հիմնական գործունեությունը առեւտրաբանկային ոլորտում է իրականացնում, ներաշխարհային խոհուն, զգայուն ու ճնարական զգացողությունների բանաստեղծ է նաեւ: Երիտասարդական տարիների գրական հետաքրքրությունները չեն նվազել, վկայությունը վերջին տարիների երկու ժողովածուներն են՝ «Մկրտին շեբին վրայ» եւ «Անկշռելին», որոնց համար նա արժանացել է «Հայկաշեն Ուզունյան» գրական մրցանակի: Հ. Սարգիսյանի բանաստեղծական աշխարհը խոհափիլիսոփայական տրամադրություններով ու ճնարական զեղումներով արդիական ձեւի մեջ՝ պատկերային ոտպն համակարգ է, բնաբաշտության հասնող զգացումներով, մարդկային ապրումը բնության երեւույթների, շարժումների հետ նույնացնելու հանդարտ վիճակներով: Բանաստեղծական զուսպ պատկերի, բառերի անշռայլ գծագրումների մեջ Հ. Սարգիսյանը ուվագծում է այսօրվա աշխարհի (փողոցի) մերկության առաջ կանգնած մարդու երկփեղկված ներին իրականությունը, որոնումն ու երազը: Իմ վերջին հարցը պրն Սարգիսյանին գրականության մասին էր, թե ինչ տեղ ունի բանաստեղծությունն իր կյանքում:

- Գրականությունը, բանաստեղծությունը ես զիս ըլլալու ճիգ մըն է: Բանաստեղծությունն ինձի համար ներաշխարհ մըն է, կյանքին նայելու ըմբռնում մըն է, թերեւս մարդոց հանդեպ ունեցած սերս է, կամ հակառակը, երբեմն մեր ժողովուրդին հետ կապ մըն է: Երբ ամբողջ շրջապատդ օտար է եւ օրվան մեջ կխոսիս ֆրանսերենով եւ կաշխատիս անգլերենով, ամիսը մեկ անգամ հայերեն կխոսիս մեկու հետ, բանաստեղծությունը, որ հայերեն կգրեմ, կկապվիմ մեր ժողովրդի հետ: Մանկութենեն սկսած այդպիսին եղած եմ, որ միտքիս մեջ առաջնային եղած է մեր ժողովուրդին ճակատագիրը: Ենթագիտակցությանս մեջ ցեղասպանությունը կա, կաշխատի մեր ժողովուրդին ճակատագիրը: Գրականությունը այս բոլոր հարցերուն հետ կապվող թերեւս կամուրջ մըն է:

Դուք այս հողին վրա կապրիք եւ չեք երեւակայեր, թե ինչ կնշանակէ ուրիշ հողին վրա ապրիլ: Երբ Հայաստան կուգամ, գրելու փափագը կմեծնա, որովհետեւ հոս հոգիս շրջապատ կգտնեմ...

ՄԵԼԻՆԵ ԲԱՂԱԼՅԱՆ

«Ուսանողական ջոկատների շարժումը համարում եմ իմ երրորդ երեխան»

Ասում է շարժման բազմամյա ղեկավարը

Այսօր Ստեփան Երեմի Ստեփանյանը կամ, ինչպես նրան ճանաչողներն են ասում, Ստեփան Երեմիչը տոնում է միանգամից երկու հոբելյան՝ ծննդյան հիսնամյակը եւ աշխատանքային գործունեության երեսունամյակը: Մենք նույնպես միանում ենք Հայաստանի ուսանողական ջոկատների շարժման բազմամյա ղեկավարին, ներկայումս հանրապետական շտաբի վարչության պետին եւ «Կոնվերս բանկի» գործերի կառավարչին հղված շնորհավորանքներին: Իսկ հարցազրույցը Ստեփան Ստեփանյանի հետ սկսեցինք կյանքի 50 տարիներն ամփոփելու եւ այդ ժամանակահատվածում իր կարեւորած սկզբունքների վերաբերյալ հարցից.

- Դժվար է հավատալ, որ արդեն 50 տարեկան եմ, բայց այդ տարիները լի էին այնպիսի բովանդակությամբ, այնպիսի վառ եւ նշանակալից իրադարձություններով, որ հետ նայելով տեսնում եմ միայն բարին եւ լավը: Եղել են, իհարկե, տհաճ պահեր, անհաջողություններ: Սակայն այն լավը, որ եղել է, այն հոյակապ մարդիկ, որոնց հանդիպել եմ իմ ճանապարհին, ինձ միշտ ոգեշնչել են: Դա է պատճառը, որ 50-ամյակը դիմավորում եմ այսպիսի եռանդով, նոր գաղափարների իրականացման, աշխատելու ցանկությամբ:

- Այսինքն հաջողված եք համարում ձեր կյանքի 50 տարիները:

- Կարծում եմ, այո: Եվ դա շնորհիվ այն բանի, որ այդ 50 տարիներից 30-ը նվիրել եմ աշխատանքին եւ համարել եմ, որ աշխատանքն ամենակարեւորն է:

- Ինչ սկզբունքներով եք առաջնորդվել կյանքում:

- Գլխավոր սկզբունքը եղել է պարկեշտությունը, հնարավորինս ազնիվ լինելը եւ հնարավորության սահմաններում մարդկանց օգնելը: Լինի հին թե նոր ընկեր, թե պարզապես անծանոթ, որը քեզ դիմել է խնդրանքով, պետք է թեկուզ ինչ-որ ձեւով օգնել նրան:

- Իսկ պատահե՞լ են դեպքեր, երբ սխալված եք եղել ձեր սկզբունքներին հակառակ գործել:

- Կարող եմ ասել միայն, որ իմ ենթակայության տակ աշխատող ոչ մի նորմալ մարդ աշխատանքից չի ազատվել կամ ինչ-որ բանից չի զրկվել: Եղել են մարդիկ, որոնց կանչ ճանապարհ եմ տվել, բայց, ցավոք, նրանք պարզապես սրիկա են դուրս եկել:

- Դատելով ձեր անցած ճանապարհից, ուսանողական ջոկատների հանդեպ թույլություն ունեք:

- Այո: Կյանքում շատ ժամանակ եմ հատկացրել ուսանողական ջոկատներին: Լինելով Երեւանի Վ. Բրյուսովի մանկավարժական ինստիտուտի կոմերիսական կազմակերպության քարտուղարը, ուսանողական ջոկատներն էի կազմավորում եւ ուղարկում ըստ նշանակման: 24 տարեկանում ինձ աշխատանքի հրավիրեցին Հայաստանի կոմերիսմիության կենտկոմ՝ որպես բաժնի պետի տեղակալ եւ հանրապետական ուսանողական ջոկատի կոմիսար: Նման երիտասարդ տարիքի համար դա բարդ եւ պատասխանատու գործ էր: Դեպի Սիբիր, Ռուսաստանի ոչ սեւահողային գոտի բազմաթիվ հայկական ջոկատներ էին մեկնում: Իմ գլխավոր խնդիրն էր կանգնեցնել այն, ինչ այդ տարիներին համարվում էր ամենասարսափելին՝ յուրաքանչյուր տարի հայկական ջոկատներից տարբեր պատճառներով (խեղդվում էին, դժբախտ դեպքեր էին լինում) մահանում էին 1-ից մինչեւ 5 մարդ: Հասանք նրան, որ աշխատանքից հետո մեր ջոկատների անդամները ինչ-որ օգտակար եւ հետաքրքրական գբաղմունք ունեցան եւ այդ ամբողջ ընթացքում ոչ մի զոհ չեղավ: Ի պատոնե պարտավոր էի քարոզչական աշխատանքներ տանել կուսակցության այս կամ այն համագումարի մասին, որին երբեք կարեւորություն չէի տալիս, չնայած դրա համար կարող էի շատ տուժել:

Իմ աշխատանքի հաջողված օրինակներից էր աշխատանքը մանկատների հետ: Երբ ժողովրդահսկողության բրիգադի կազմում եղա Սովետաշենի մանկատանը, տեսա այդտեղի երեխաների ահավոր վիճակը: Մեր 10 հազարանոց ուսանողական ջոկատի սպորտաբաժանումներն ամրակցվեցին Սովետաշենի, Մեղրու եւ Կամոյի մանկատների երեխաներին այնպես, որ նրանցից յուրաքանչյուրը գտնվի հոգածության կենտրոնում: Արդյունքում երեխաներն ապահովվեցին լավագույն հագուստներով եւ սննդով: Կարծում եմ, որ այդ տարիներին ինձ «Պատվո նշան» շքանշանին արժանացնելիս այս հանգամանքը նույնպես նկատի է առնվել: Մի խոսքով ամեն ինչ լավ էր ընթանում, երբ տեղի ունեցավ երկրաշարժը: Այն ուսանողական ջոկատների համար իսկական քննություն եղավ: Նշեմ միայն այն փաստը, որ առաջին օրերին նրանք մոտ 1000 մարդու կյանք փրկեցին, չխոսելով արդեն աղետի հետեւանքների վերացման եւ վերականգնման աշխատանքներին ուսանողական ջոկատների ակտիվ մասնակցության մասին: Ընդ որում, բացի մեր 5-7 հազար ուսանողներից, մենք աղետի գոտում ընդունեցինք, տեղավորեցինք, աշխատանքով եւ սննդով ապահովեցինք մոտ 10 հազար կամավորների ամբողջ աշխարհից:

- Ինչ տեղի ունեցավ ուսանողական ջոկատների շարժման հետ Խորհրդային Միության փլուզումից հետո:

- Ամբողջ երկրով մեկ ուսանողական ջոկատների շարժումը անկում ապրեց: Այդ ժամանակ մենք իմացանք Եվրոպայում կամավորների փոխանակման կենտրոնների մասին: Սկսեցինք զբաղվել այդ գործունեությամբ: Նախ ուղարկեցինք 5, ապա 10 հոգի, իսկ այսօր նախկին խորհրդային տարածքում լավագույն կազմակերպություններից ենք: Դրա ապացույցն էր կամավորական շարժման 20 տարվա ընթացքում առաջին անգամ Երեւանում օրերս հրավիրված Եվրոպայի կամավորականների գլխավոր կոնֆերանսը:

- Բանկում աշխատելիս ձեր փորձն անհրաժեշտ լինո՞ւմ է եւ ո՞րն է ավելի հոգեհարազատ:

- Իհարկե, անհրաժեշտ է լինում: Լինելով գործերի կառավարիչ, այդ փորձը նպաստում է կազմակերպչական, վերանորոգման աշխատանքների ժամանակ, կադրերի ընտրության հարցում: Իսկ ուսանողական ջոկատների հետ իմ կապն այնքան երկար տարիների պատմություն ունի, որ այս ոլորտը համարում եմ իմ երրորդ երեխան:

ԱԲԵԼ ԱԹԱՐՏԵՐՈՍՅԱՆ

ԱԶԳ
Մասնավորեցում

ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
մրցույթով մասնավորեցվող
«Ալավերդու Նավթամթերք» ՓԲԸ-ի
մասին

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2004թ.-ի սեպտեմբերի 2-ի թիվ 1332-Ն որոշմամբ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է մասնավորեցման բոլոր սուբյեկտներին մասնակցելու «Ալավերդու Նավթամթերք» ՓԲԸ-ի բաժնետոմսերի մասնավորեցման մրցույթին:

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1.	Մասնավորեցվող օբյեկտի հասցեն	ք. Ալավերդի, Սանահին կայարան
1.2.	ՀՀ կառավարության որոշման համարը եւ ամսաթիվը	N1332-Ն, 02.09.04թ.
1.3.	Ընկերության բաժնետոմսերի մակերեսը (%)	99.5
1.4.	Զբաղեցրած հողային տարածքը (հա)	0.97
	Տեղեկություններ հողահատկացման հիմքերի մասին	Սնուցարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականներ N 029246, 10.07.00թ.
1.5	Գործունեության հիմնական տեսակը	Նավթամթերքի առևտուր
1.6	Աշխատողների թվաքանակը* (01.01.2004-ի դրությամբ)	4
1.7	Գնահատված ակտիվներ (հազ.դրամ)	4294
1.8.	Ընկերության բաժնետոմսերի գնահատված արժեքը (հազ.դրամ)	2741

*Հաշվածայն Ընկերության կողմից ներկայացված տեղեկանքի, աշխատողների թվաքանակը 01.11.04թ. դրությամբ կազմում է 2 մարդ:

2. Ընկերության հաշվեկշռի ցուցանիշներ (01.01.2004թ-ի դրությամբ)

(հզ դրամ)

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	Հաշվեկշռային արժեքը	Գնահատված արժեքը
2.1.	Ոչ ընթացիկ ակտիվներ , այդ թվում	6220.1	3524.6
2.1.1.	Հիմնական միջոցներ, այդ թվում՝	6220.1**	3524.6
♦	շենքեր /4հա/	1061.6	664.7
♦	կառուցվածքներ և փոխանցող հարմարումներ /19հա/	333.3	614.9
♦	մեքենաներ և սարքավորումներ /14հա/	2811.1	1630.6
♦	տրանսպորտային միջոցներ /3հա/	1968.6	601.2
♦	արտ. մեն. գույք, գործիք և այլն /5հա/	45.5	13.2
2.1.2.	Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	-	-
2.1.3.	Ոչ նյութական ակտիվներ	-	-
2.1.4.	Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	-	-
2.2.	Ընթացիկ ակտիվներ	769	769
2.3.	Ոչ ընթացիկ պարտավորություններ	-	-
2.4.	Ընթացիկ պարտավորություններ, որից	1553	1553
♦	ՀՀ պետական բյուջեի նկատմամբ	855	855
♦	անձնակազմին աշխատանքի վարձատրության գծով	533	533
♦	սոցիալական ապահովագրության գծով	135	135
♦	տրամադրված ընթացիկ կանխավճարների գծով	30	30

** Ներկայացված են հիմնական միջոցների սկզբնական արժեքները:

2.5.Հաշվածայն ՀՀ կառավարության N1332-Ն, 02.09.04թ. որոշման, Ընկերության 1999-2003 թվականների տնտեսական գործունեության արդյունքներով վճարման ենթակա շահութաբաժինների գծով պարտավորություններ չունի:

2.6.Հաշվածայն «Ալավերդու Նավթամթերք» ՓԲԸ-ի հաշվապահական հաշվեկշռի, Ընկերության պարտավորությունները 01.10. 04թ. դրությամբ կազմում են 2273հազ.դրամ, որից՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ՝ 882հազ.դրամ, սոցիալական ապահովագրության գծով՝ 244հազ.դրամ:

3. Մրցույթին մասնակցելու պայմաններ

3.1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը /տես 5.1 և 5.2 կետերը/ և 5.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցութային առաջարկ, որը ներառում է հետևյալ փաստաթղթերը՝

ա/ հայտ (ձևը կարելի է ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Սնուցի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից /այսուհետև՝ Սնուցի կենտրոն)

բ/ մրցույթի հաղթողին որոշելու պայմանների վերաբերյալ գրավոր առաջարկ՝ (տես՝ 3.12 կետը),

գ/ մրցույթի նախավճարի կատարման իսկությունը հաստատող վճարային փաստաթղթերի պատճենները,

դ/ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մասնակիցների գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները,

ե/ լիազորագիր՝ մրցույթի մասնակից ընկերության /հաստատված ելնելով ընկերության կողմից/ կամ ֆիզիկական անձի /հաստատված նոտարական կարգով/ կողմից լիազորված անձի համար,

զ/ գործարար ծրագիր

3.2. Մրցութային առաջարկը փակ ծրարով ներկայացվում է Սնուցի կենտրոնի վարչատնտեսական բաժին՝ մինչև 5.3 կետում նշված ժամկետի լրանալը:

3.3. Մրցույթի մասնակիցների՝ մրցութային պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է առահայտված լինեն թվային ցուցանիշներով և փոխ չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքներից, եթե դրանք սահմանված են (տես 3.12 կետը):

3.4. Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով:

Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կթարգմանվեն հանձնաժողովի կողմից:

3.5. Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթերցելի ձեռագրով:

3.6. Ծրարը պետք է հասցեագրված լինի մրցութային հանձնաժողովին՝ նշելով մասնավորեցվող օբյեկտի անվանումը:

3.7. Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաև ֆաքսիմիլային կապով: Սեպագված փաստաթղթերը Սնուցի կենտրոնի վարչատնտեսական բաժնում դրվում են ծրարի մեջ և փակվում:

3.8. Ներկայացված ծրարները Սնուցի կենտրոնի վարչատնտեսական բաժնի կողմից կնքվում և մուտագրվում են:

3.9. 5.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվի:

3.10. Դիմողները մինչև 5.5 կետում նշված ժամկետի լրանալը կարող են հանձնաժողովին գրավոր դիմում ներկայացնել՝ մրցույթին չմասնակցելու վերաբերյալ: Սահմանված ժամկետից ուշ ներկայացրած այդպիսի դիմումները ենթակա չեն:

3.11. Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում և մրցութային առաջարկը հանվում է հետագա ենթարկումից:

3.12. Մրցույթի հաղթողի որոշման համար առաջադրվում են հետևյալ պայմանները.

մասնավորեցվող բաժնետոմսերի համար առաջարկվող գինը, /նվազագույն գինը՝ 35906 հազ.դրամ/

ներդրումների չափը՝ տարիների կտրվածքով,

սոցիալական երաշխիքներ, այդ թվում աշխատատեղերի և նվազագույն աշխատավարձի վերաբերյալ:

3.13. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

4. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

4.1. Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում սանում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

4.2. Մրցույթի հաղթողը գույքի վաճառքի գումարը պետք է վճարի մրցույթի արձանագրությունը ստանալու օրվանից հաշված մեկ ամսվա ընթացքում:

4.3. Որպես մրցույթի նախավճար վճարված գումարը ընդգրկվում է օբյեկտի վաճառքի գնի մեջ և մրցույթում չհաղթելու կամ մինչև 5.5 կետում նշված ժամկետի լրանալը մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում հետ է վերադարձվում:

4.4. Մրցույթի հաղթողը արձանագրության օրինակը ստանալու օրվանից հաշված 60 օրվա ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հետ կնքում է մասնավորեցման պայմանագիր:

4.5. Հաշվածայն ՀՀ կառավարության N1332-Ն, 02.09.04թ. որոշման, գնորդին կառաջարկվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնել ընկերության կողմից զբաղեցված հողատարածքները:

4.6. Հաշվածայն ՀՀ կառավարության N1332-Ն, 02.09.04թ. որոշման, մասնավորեցման պայմանագրում պետք է նախատեսվի, որ գույքային իրավունքների պետական գրանցման և գույքի արժեքի որոշման հետ կապված վճարները ու տուրքերը կատարվում են գնորդի հաշվին՝ օրենքով սահմանված կարգով:

4.7. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու և պայմանագիրը չկնքելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, և մրցույթը հանվում է չկայացած:

4.8. Մրցույթով մասնավորեցման արդյունքում գնորդը հանդիսանում է նաև գնահատման պահից հետո առաջացած իրավունքների և պարտավորությունների իրավահաջորդը:

4.9. Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով:

5. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

5.1	Մրցույթի նախավճարի չափը	274 000 դրամ
5.2	Մրցույթի նախավճարի մուտագրման հատուկ հաշիվը	ԹԻՄ1 տեղական գանձապետական բաժանմունք դրամային - 900013145017
5.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	10-ը դեկտեմբերի 2004թ. , ժամը՝14:00
5.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	ք.Երեւան, Հր.Քոչարի 27, «Սնուցի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական բաժին
5.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը	10-ը դեկտեմբերի 2004թ. , ժամը՝15:00 ք.Երեւան, Հանրապետության հրապարակ, ՀՀ Կառավարական 2-րդ տուն, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
5.6	Ֆաքսիմիլային կապ	(3741) 27-65-94
5.7	Ինտերնետ	URL: //www.privatization.am

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Սնուցի կենտրոն՝ 27-65-94 հեռախոսահամարով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
մրցույթով մասնավորեցվող
«Արմավիրի Նավթամթերք» ՓԲԸ-ի
մասին

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2004թ.-ի հունիսի 10-ի թիվ 1334-Ն որոշմամբ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է մասնավորեցման բոլոր սուբյեկտներին մասնակցելու «Արմավիրի Նավթամթերք» ՓԲԸ-ի բաժնետոմսերի մասնավորեցման մրցույթին:

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1	Մասնավորեցվող օբյեկտի հասցեն	ք.Արմավիր, Սպայան-Նոյա 1
1.2	ՀՀ կառավարության որոշման համարը եւ ամսաթիվը	N1334-Ն, 10.06.04թ.
1.3	Ընկերության բաժնետոմսերի մակերեսը (%)	4078
1.4.	Զբաղեցրած հողային տարածքը (հա)	9
	Տեղեկություններ հողահատկացման հիմքերի մասին	Սնուցարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական N 0148987, 20.10.00թ. հերթակա վաճառքի առևտուր
1.5	Գործունեության հիմնական տեսակը	
1.6	Աշխատողների թվաքանակը* (01.10.2003թ-ի դրությամբ)	25
1.7	Գնահատված ակտիվներ (հազ.դրամ)	153809
1.8.	Ընկերության բաժնետոմսերի գնահատված արժեքը (հազ.դրամ)	143625

*Հաշվածայն Ընկերության կողմից ներկայացված տեղեկանքի, աշխատողների թվաքանակը 01.11.04թ. դրությամբ կազմում է 25 մարդ:

2. Ընկերության հաշվեկշռի ցուցանիշներ (01.10.2003թ-ի դրությամբ)

(հզ. դրամ)

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	Հաշվեկշռային արժեքը	Գնահատված արժեքը
2.1.	Ոչ ընթացիկ ակտիվներ , այդ թվում	458869.9	153733.3
2.1.1.	Հիմնական միջոցներ, այդ թվում՝	458869.9**	153733.3
	շենքեր /14հա/	123788.7	26696.7
	կառուցվածքներ և փոխանցող հարմարումներ /25 հա/	299949.9	119999.1
	մեքենաներ և սարքավորումներ /148 հա/	20673.3	3690.7
	տրանսպորտային միջոցներ /8 հա/	12797.6	3068.5
	արտ. մեն. գույք, գործիք և այլն /40 հա/	1660.4	278.3
2.1.2.	Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	-	
2.1.3.	Ոչ նյութական ակտիվներ	-	-
2.1.4.	Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	-	-
2.2.	Ընթացիկ ակտիվներ	76	76
2.3.	Ոչ ընթացիկ պարտավորություններ	-	-
2.4.	Ընթացիկ պարտավորություններ, այդ թվում	10184	10184
	ՀՀ պետական բյուջեի նկատմամբ	5333	5333
	անձնակազմին աշխատանքի վարձատրության գծով	4652	4652
	սոցիալական ապահովագրության գծով	199	199

** Ներկայացված են հիմնական միջոցների սկզբնական արժեքները:

2.5.Հաշվածայն ՀՀ կառավարության N1334-Ն, 10.06.04թ. որոշման, Ընկերության 1999-2003 թվականների տնտեսական գործունեության արդյունքներով վճարման ենթակա շահութաբաժինների գծով պարտավորություններ չունի:

2.6.Հաշվածայն «Արմավիրի Նավթամթերք» ՓԲԸ-ի հաշվապահական հաշվեկշռի, Ընկերության պարտավորությունները 01.10. 04թ. դրությամբ կազմում են 10989հազ.դրամ, որից՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ՝ 5731հազ.դրամ, սոցիալական ապահովագրության գծով՝ 334 հազ.դրամ:

3.Մրցույթին մասնակցելու պայմաններ

3.1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը /տես 5.1 և 5.2 կետերը/ և 5.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցութային առաջարկ, որը ներառում է հետևյալ փաստաթղթերը՝

ա/ հայտ (ձևը կարելի է ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Սնուցի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից /այսուհետև՝ Սնուցի կենտրոն)

բ/ մրցույթի հաղթողին որոշելու պայմանների վերաբերյալ գրավոր առաջարկ՝ (տես՝ 3.12 կետը),

գ/ մրցույթի նախավճարի կատարման իսկությունը հաստատող վճարային փաստաթղթերի պատճենները,

դ/ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մասնակիցների գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները,

ե/ լիազորագիր՝ մրցույթի մասնակից ընկերության /հաստատված ելնելով ընկերության կողմից/ կամ ֆիզիկական անձի /հաստատված նոտարական կարգով/ կողմից լիազորված անձի համար,

զ/ գործարար ծրագիր

3.2. Մրցութային առաջարկը փակ ծրարով ներկայացվում է Սնուցի կենտրոնի վարչատնտեսական բաժին՝ մինչև 5.3 կետում նշված ժամկետի լրանալը:

3.3. Մրցույթի մասնակիցների՝ մրցութային պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է առահայտված լինեն թվային ցուցանիշներով և փոխ չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքներից, եթե դրանք սահմանված են (տես 3.12 կետը):

3.4. Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով:

Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կթարգմանվեն հանձնաժողովի կողմից:

3.5. Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթերցելի ձեռագրով:

3.6. Ծրարը պետք է հասցեագրված լինի մրցութային հանձնաժողովին՝ նշելով մասնավորեցվող օբյեկտի անվանումը:

3.7. Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաև ֆաքսիմիլային կապով: Սեպագված փաստաթղթերը Սնուցի կենտրոնի վարչատնտեսական բաժնում դրվում են ծրարի մեջ և փակվում:

3.8. Ներկայացված ծրարները Սնուցի կենտրոնի վարչատնտեսական բաժնի կողմից կնքվում և մուտագրվում են:

3.9. 5.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվի:

3.10. Դիմողները մինչև 5.5 կետում նշված ժամկետի լրանալը կարող են հանձնաժողովին գրավոր դիմում ներկայացնել՝ մրցույթին չմասնակցելու վերաբերյալ: Սահմանված ժամկետից ուշ ներկայացրած այդպիսի դիմումները ենթակա չեն:

3.11. Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում և մրցութային առաջարկը հանվում է հետագա ենթարկումից:

3.12. Մրցույթի հաղթողի որոշման համար առաջադրվում են հետևյալ պայմանները.

մասնավորեցվող բաժնետոմսերի համար առաջարկվող գինը, /նվազագույն գինը՝ 35906 հազ.դրամ/

ներդրումների չափը՝ տարիների կտրվածքով, սոցիալական երաշխիքներ, այդ թվում աշխատատեղերի և նվազագույն աշխատավարձի վերաբերյալ:

3.13. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

4. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

4.1. Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում սանում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

4.2. Մրցույթի հաղթողը գույքի վաճառքի գումարը պետք է վճարի մրցույթի արձանագրությունը ստանալու օրվանից հաշված մեկ ամսվա ընթացքում:

4.3. Որպես մրցույթի նախավճար վճարված գումարը ընդգրկվում է օբյեկտի վաճառքի գնի մեջ և մրցույթում չհաղթելու կամ մինչև 5.5 կետում նշված ժամկետի լրանալը մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում հետ է վերադարձվում:

4.4. Մրցույթի հաղթողը արձանագրության օրինակը ստանալու օրվանից հաշված 60 օրվա ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հետ կնքում է մասնավորեցման պայմանագիր:

4.5. Հաշվածայն ՀՀ կառավարության N1334-Ն, 10.06.04թ. որոշման, գնորդին կառաջարկվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնել ընկերության կողմից զբաղեցված հողատարածքները:

4.6. Հաշվածայն ՀՀ կառավարության N1334-Ն, 10.06.04թ. որոշման, մասնավորեցման պայմանագրում պետք է նախատեսվի, որ գույքային իրավունքների պետական գրանցման և գույքի արժեքի որոշման հետ կապված վճարները ու տուրքերը կատարվում են գնորդի հաշվին՝ օրենքով սահմանված կարգով:

4.7. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու և պայմանագիրը չկնքելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, և մրցույթը հանվում է չկայացած:

4.8. Մրցույթով մասնավորեցման արդյունքում գնորդը հանդիսանում է նաև գնահատման պահից հետո առաջացած իրավունքների և պարտավորությունների իրավահաջորդը:

4.9. Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով:

5. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

5.1	Մրցույթի նախավճարի չափը	14 362 000 դրամ
5.2	Մրցույթի նախավճարի մուտագրման հատուկ հաշիվը	ԹԻՄ1 տեղական գանձապետական բաժանմունք դրամային - 900013145017
5.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	14-ը հունվարի 2005թ. , ժամը՝14:00
5.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	ք.Երեւան, Հր.Քոչարի 27, «Սնուցի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական բաժին
5.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը	14-ը հունվարի 2005թ. , ժամը՝15:00 ք.Երեւան, Հանրապետության հրապարակ, ՀՀ Կառավարական 2-րդ տուն, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
5.6	Ֆաքսիմիլային կապ	(3741) 27-65-94
5.7	Ինտերնետ	URL: //www.privatization.am

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Սնուցի կենտրոն՝ 27-65-94 հեռախոսահամարով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

Մասնավորեցում

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2004թ. նոյեմբերի 26-ին, ժամը 11:00-ին
«Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում,
հասցեն՝ ք.Երևան, Նորքի 1-ին զանգված 95/96, (Գայի 4):

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ՀՀ կառավարության 21.10.04թ. թիվ 1443-Ն որոշմամբ մասնավորեցվող «Սարիկո» փակ բաժնետիրական ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը

N	Ընկերության անվանումը	Հասցեն	Ընկերության ընդհանուր բաժնետոմսերի քանակը (հատ)	Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը (դրամ)	Պետական բաժնեմասը ընկերության կանոնադրական կապիտալում (%)	Պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի Մեկնարկային գինը (հազ.դրամ)	Նվազագույն գինը (հազ.դրամ)
1	«Սարիկո» ՓԲԸ*	ք. Երևան, Սևարտյան 90	352695	1000	100	176348	88174

«Սարիկո» փակ բաժնետիրական ընկերության գնահատված ակտիվները (առ 21.10.2004թ.)՝

N	Անվանումը	Քանակը (հատ)	Ընդհ. մակերեսը (հա.մետր)	Գնահատված մեծությունները (հազ.դրամ)
1	Շենքեր	15	58567.3	307945.43
2	Կառուցվածքներ և փոխանցող հարմարանքներ	24	-	20476.12
3	Մեքենաներ և սարքավորումներ	78	-	6147.846
4	Տրս. մեծ. գույք, գործիք և այլն	137	-	7287.89
5	Բանող և մթերատու անասուններ	1	-	212.62
6	Ընթացիկ ակտիվներ	-	-	17272
	Ընդամենը			359342

* 2004թ. սեպտեմբերի 8-ին «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի կողմից հայցադիմում է ներկայացվել ՀՀ տնտեսական դատարան «Սարիկո» ՓԲԸ-ն անվճարունակ ճանաչելու վերաբերյալ:

Հաստատվել է ՀՀ կառավարության 21.10.04թ. թիվ 1443-Ն որոշման «Սարիկո» ՓԲԸ-ի.
- կրեդիտորական պարտավորությունները 01.10.04թ. դրությամբ կազմում են 1215 հազ. դրամ,
- այլ կրեդիտորական պարտավորությունները 22.10.04թ. դրությամբ կազմում են 17420 հազ. դրամ, որոնք ենթակա են վճարման ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից նշված հաշվին՝ աճուրդի հաղթողի կողմից մասնավորեցման պայմանագրի կնքման օրվանից մեկամսյա ժամկետում,
- կրեդիտորական պարտավորությունները ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նկատմամբ 22.10.04թ. դրությամբ կազմում են 369 հազ. դրամ:

Աճուրդը կանցկացվի հոլանդական (գնի նվազեցման) եղանակով:

Աճուրդին կարող են մասնակցել մասնակցության իրավունք ձեռք բերած մասնավորեցման սուբյեկտները կամ նրանց կողմից լիազորված անձինք:

Աճուրդին մասնակցելու իրավունք են ձեռք բերում մասնավորեցման այն սուբյեկտները, որոնք մինչև 2004թ. նոյեմբերի 25-ը, ժամը 17:00 ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (ք.Երևան, Հր.Քոչարի 27) են ներկայացրել՝
- աճուրդի մասնակցության հայտը,
- աճուրդի մասնակցության վճարի անդորագիրը (աճուրդի մասնակցության վճարի չափն է՝ 17634800 դրամ, մուտագրման հաշիվն է՝ թիվ 1 տեղական գանձարքելական բաժանմունքի աճուրդի մասնակցության նախավճարի դրամային թիվ 900013145025 հաշիվը),
- իրավաբանական անձինք ներկայացնում են հիմնադիր փաստաթղթերի պատճենները:

Աճուրդի մասնակիցները պետք է ձեռք բերեն աճուրդի մասնակցի տոմս, որի գինն է 5000 դրամ, աճուրդի մասնակից չհանդիսացող անձանց (դիտորդների) տոմսի գինն է 3000 դրամ: Մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Աճուրդը անցկացնում է աճուրդավարը, որը հրապարակում է վաճառվող գույքը բնութագրող ցուցանիշները, գույքի մեկնարկային գինը, աճուրդային քայլի չափը: Նշված քայլերով մեկնարկային գինն իջեցվում է այնքան, մինչև մասնակիցներից մեկը, բարձրացնելով իր տոմսին հանդիսատեսասրահում հանած, ցույց է իր հանձնառությունը հայտարարված գնով գույքը ձեռք բերելու մասին:

Աճուրդի ժամանակ վաճառքի գինը չի կարող իջեցվել նվազագույն գնից:

Աճուրդի հաղթող է հանդիսանում այն մասնակիցը, ով առաջինն է տալիս իր հանձնառությունը հայտարարված գնով գույքի գնման մասին:

Աճուրդում հաղթող հռչակված մասնակիցը պարտավոր է 30 ողջի ընթացքում ներկայացնել մասնակցի տոմսը և վճարել իր առաջարկած գնի առնվազն 5%-ի չափով գումար և ստորագրել աճուրդի մասին արձանագրությունը: Վերը նշված պարտավորությունները չկատարելու դեպքում նրա մուտքած մասնակցության վճարը չի վերադարձվում, և նա զրկվում է աճուրդին հետագայում մասնակցելու իրավունքից ու դրուս է հրավիրվում դահլիճից:

Այդ դեպքում գույքի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից:

Աճուրդի մասին արձանագրությունը ստորագրելուց հետո՝ որպես աճուրդում հաղթող ճանաչված մասնակից, նրան տրվում է վճարման հանձնարարագիր՝ ծնացած վճարման ենթակա գումարը սահմանված ժամկետում՝ մեկ ամսվա ընթացքում, վճարելու համար:

Սահմանված ժամկետում նշված վճարումը չկատարելու դեպքում իր կողմից վճարած մասնակցության վճարը և իր առաջարկած գնի առնվազն 5%-ի չափով վճարած գումարը հետ չի վերադարձվում, իսկ աճուրդը հռչակվում է չկայացած:

Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, զանգահարել 27-65-94 հեռախոսահամարով:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՏԵՂԵԿԱՆՔ
ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2004թ. սեպտեմբեր- հոկտեմբեր ամիսների ընթացքում

Հ/Հ	Կողը	Նախա-ռարաք.	Ընկերության անվանումը	Հասցեն	Կատավ. որոշում /համարը, ամսաթիվ/	Մրցույթի օրը	Առաջարկ-ված գինը /հազ.դր./	Նշումներ	Սոցիալական երաշխիքներ /այդ թվում աշխատատեղերի և նվազագույն աշխատավարձի չափը/	Մրցույթի արդյունքը
1	62073	Գյուղ.	«Մասնավոր դեղատուն» ՊՓԲԸ	ք.Երևան, Գի.Ջահուկյան փ. 4-ր Նրբ. N13	825-Ն 20.05.04	08.10.04	4000	Ivարի-4000հազ.դրամ IIvարի-4000հազ.դրամ	Ivարի - 15ձարդ, 15000 դրամ, IIvարի - 20ձարդ, 20000 դրամ	Կայացել է
2	62079	Գյուղ.	«Ագրոանքաբազա» ՊՓԲԸ	ք.Երևան, Դարբինյանի 1փ. 46	810-Ն 29.04.04	08.10.04	-	-	-	Չի կայացել
3	60200	Պետ.գույքի կատ.	«Շինարար» ՓԲԸ	ք.Էջմիածին, Գայի փ.	1156-Ն 22.07.04	26.10.04	2550	Ivարի -1500հազ.դրամ IIvարի -2000հազ.դրամ	Ivարի - 35 ձարդ, 25000 դրամ, IIvարի - 55 ձարդ, 30000 դրամ	Կայացել է
4	62008	Պետ.գույքի կատ.	«Աշխատանքի զիտական կազմակերպման կենտրոն» ՓԲԸ	ք.Երևան, Կոմիտաս 47	1156-Ն 22.07.04	29.10.04	200	Ivարի - 2000 հազ.դր. IIvարի - 2000հազ.դր. IIIvարի - 3000 հազ.դր	Ivարի - 7ձարդ, 20000 դրամ, IIvարի - 10ձարդ, 25000 դրամ, IIIvարի - 13ձարդ, 30000 դրամ	Կայացել է

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ Ք. ԵՐԵՎԱՆ, ՆՈՐՔԻ 1-ԻՆ ԶԱՆԳՎ. 95/96, ԳԱՅԻ 4 ՀԱՍՑԵՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2004 թ. սեպտեմբերի 30-ի թիվ 1379-Ա որոշման Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմին ամրացված օտարման ենթակա ավտոմեքենաները

Հ/Հ	Գույքի անվանումը	Ստեղծման տարեթիվը (կատարած վազքը՝ կմ.)	Հաշվեկշռային արժեքը /դրամ/	Գնահատված արժեքը (Գնահ.ա/թ. 26/07/04) /դրամ/ /դրամ/	02.12.04թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	02.12.04թ. աճուրդի նախավճար /դրամ/	17.12.04թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	17.12.04թ. աճուրդի նախավճար /դրամ/	03.01.05թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	03.01.05թ. աճուրդի նախավճար /դրամ/	18.01.05թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	18.01.05թ. աճուրդի նախավճար /դրամ/
1	Ավտոմեքենա «Գազ-31029» (պետ.համար 011ՕՏ01)	1997թ.նոյեմբեր (244000)	4251000	1316100	1316100	65805	1052880	52644	842304	42116	673844	33693
2	Ավտոմեքենա «Գազ-3110» (պետ.համար 100ՕՏ01)	1998թ.օգոստոս (231000)	4425000	1364700	1364700	68235	1091760	54588	873408	43671	698727	34937

Հ/Հ	Գույքի անվանումը	02.02.05թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	02.02.05թ. աճուրդի նախավճար /դրամ/	17.02.05թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	17.02.05թ. աճուրդի նախավճար /դրամ/	03.03.05թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	03.03.05թ. աճուրդի նախավճար /դրամ/	18.03.05թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	18.03.05թ. աճուրդի նախավճար /դրամ/	04.04.05թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	04.04.05թ. աճուրդի նախավճար /դրամ/	19.04.05թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	19.04.05թ. աճուրդի նախավճար /դրամ/
1	Ավտոմեքենա «Գազ-31029» (պետ.համար 011ՕՏ01)	539076	26954	431261	21564	345009	17251	276008	13801	220807	11041	176646	8833
2	Ավտոմեքենա «Գազ-3110» (պետ.համար 100ՕՏ01)	558982	27950	447186	22360	357749	17888	286200	14310	228960	11448	183168	9159

*Համաձայն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմի 28.10.04թ. թիվ ՍԴՏ-10/01 գրությամբ ներկայացված ակտի ավտոմեքենաների շարժիչները, առջևի և հետին կամրջակները, թափքը վերանորոգման կարիք ունեն: Մեքենաների ավտոդողերի մաշվածությունը կազմում է 90 տոկոս, մարտկոցները բացակայում են:

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 12:00-ին:

Աճուրդով չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ նվազեցվում է վերջին աճուրդի գույքի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով: Աճուրդը կայանալու դեպքում հաջորդ աճուրդը (աճուրդները) չի (չեն) անցկացվում:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք. Երևան Հայկա Քոչարի 27) ներկայացրել
-աճուրդի նախավճարի մուտքման անդորագիրը, որի չափն է՝ յուրաքանչյուր աճուրդի համար յուրաքանչյուր գույքի մեկնարկային գնի 5 տոկոսը, մուտագրման հաշիվն է Հայխնայբանկի թիվ 160006651014 դրամային հաշիվը:
-աճուրդի մասնակցության վճարի անդորագիրը, որի չափն է 10000 դրամ (վճարվում է «Աճուրդի կենտրոն» ՊՈՒԱԿ-ի դրամարկղ), գույքի գնի մեջ չի ներառվում և անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում.
-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները և լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Աճուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհանդիսացող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Դիտորդի տոմսերը վաճառվում են ընդհուպ մինչև աճուրդի սկսվելը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները վաճառվող լոտերին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչև 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչև 14:00):

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին և յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է fwrs:

Աճուրդը վարում է աճուրդավարը:

Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (քայլի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող հռչակված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 ողջի ընթացքում, վճարել իր առաջարկված գնի առնվազն 5 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում և տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդի մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 ողջի ընթացքում) վճարում է իր առաջարկված գնի առնվազն 5 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող և ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

Աճուրդում չհաղթող մասնակցին, մուտքված նախավճարը վերադարձվում է վերջինիս դիմելուց հետո եռօրյա ժամկետում:

Ավտոմեքենաները գտնվում են ք.Երևան, Սևանի փ. 76 հասցեում:

Վաճառվող լոտին ծանոթանալու համար զանգահարել՝ 44-15-30 հեռախոսահամարով:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք. Երևան, Հայկա Քոչարի 27 հասցեով կամ զանգահարել հանձնաժողովին հեռախոս՝ 27-65-94,

Ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Ստորագրեր

«Հայաստան, երկիր դրախտավայր...»

«Էլի ես որբ ու արնավառ իմ Հայաստան յարն եմ սիրում...»

«Կռունկ, մեր աշխարհեն խաբրիկ մը չունի՞ս...»

«Մխ, սիրտս արուն է...»

«Անին տեսնեմ ու նոր մեռնիմ...»

«Ես իմ Մասիս սարն եմ սիրում...»

«Մեր հայրենիք թվառ, անտեր...»

«Հայրենիքի տեր ու պաշտպան Անդրանիկ...»

«Զարթիր, լաո...»

«Միացում, միացում...»

«Թուրքին չհավատաք.- Զորավար Անդրանիկ...»

փոքենեն, մտածում էր, որ օտարության մեջ աղրելու եւ կյանքի պայքարին դիմանալու համար անհրաժեշտ էր, որ իր զավակը օտար լեզվով կրթություն ստանա: Բայց ինչպես ըսի, նա երկու տարի հետո մահացավ, երբ ես հազիվ 7 տարեկան էի: Եվ մայրս 3 երեխայով այրի մնաց եւ ստիպված էր շատ մեծ ճիգով աշխատիլ պահելու համար իր որբերը, ուրեմն ես չէի կարող շարունակել թանկ վճարովի անգլիական վարժարանում սովորել, տեղափոխվեցի Ալեքսանդրիայի Պողոսյան հայկական վարժարանը: Մի քանի տարի Պողոսյանում սովորելուց հետո, ծանոթներ տեսնելով մեր ընտանիքին նյութական ծանր վիճակը, կիսամոզեն մորս եւ կոչնեն, որ ինձ Կիպրոս ուղարկեն՝ «Մելգոնյան գիշերօթիկ» վարժարան, ուր ես կարճ ընդմիջումով մը, յոթը երկար տարիներ պետք է աղրեի ընտանիքս բաժանված: Երեխայի մը համար, կարծում եմ, որ ամենամեծ դժբախտությունն է մանկությանը իր հարազատներու ներկայութենեն զրկվիլը: Բայց ինչ արած:

ՃԱԿԱՏԱԳՐԻՆ ԴԵՄ ԳՆԱԼ

ԵՐԵՎԻ ԱՆՕԳՈՒՏ ԲԱՆ Է

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

Կյանքս վերջանում է արդեն, բայց ես նորնոր մտածում եմ կյանքը բացատրելու մասին, անշուշտ, ինձի համար: Անշուշտ, անկարելի է մեկ նախադասությունով ասել, որ կյանքը այս է եւ այսպես է, եւ վերջ: Վերջերս սկսեցի մտածել պատահականության մասին: Կյանքի մեջ, կարծում եմ, մարդը, երբ որ մտածում է ապրած կյանքին մասին, անկարելի է, որ պատահականության չանդրադառնա: Նույնիսկ սկսեցի ինձ հարց տալ, թե կյանքը ինքը մարդուն ծնած պահից մինչեւ վերջը պատահականություններու շարան մը չէ՞: Չեմ ուզում այս մասին փիլիսոփայել. երեւի պատահականություններու հաջորդականության մեջ անպայման օրինաչափություն մը չկա:

Հիշում եմ, որ շատ սիրելի ուսուցիչս մի անգամ ինձ ասաց թուրքերեն ժողովրդական առած մը, որ ասում է. «Ինչ որ լինելու է՝ լինելու է, հիմարն է, որ իրեն ճղում է»: Ահավասիկ, պատահականություն մը, ըստ իս: Հայրս երբ իմ ձեռքս բռնեց եւ տարավ առաջին անգամ դպրոց արձանագրելու, հինգ տարեկան էի: Ինձ տարավ անգլիական դպրոց մը՝ Ալեքսանդրիայի նշանավոր «Սրոչ սքուլ» (շոտլանդական) դպրոցը: Եթե մեր ընտանիքին գլխին չգար այդ աղետը, երբ հայրս դրանից երկու տարի անց մահացավ, մեր ընտանիքը մատնելով սովի եւ թշվառության, եթե հայրս փոխանակ 50 տարեկանին թողներ այս աշխարհը, գոնե մի երեսուն տարի ալ ապրեր, ես հավանաբար հիմա հայ չըլլայի: Երբ մարդ մանկութենեն օտար լեզվով է սկսում ուսումը, դժվար թե իր ժողովրդին կապված ըլլա, ինչպես եթե իր մանկութենեն սկսում է սովրիլ իր մայրենի լեզուն ճիշտ խոսիլ, գրել, կարդալ:

Այդ ժամանակ ինձ հետ ավելի կարեւոր մի բան էլ պատահեց եւ ես ինքս իմ հորից առաջ անդիի աշխարհ էի գնալու: Դիֆթերիայով հիվանդացա: Գիտեմ, մահացու հիվանդություն մը, որ հաճախ պատահում է երեխաներուն, երբ խրչափողին վրա առաջանում է մի թաղանթ, եւ երեխան շնչահեղձ է լինում եւ մահանում: Շատ լավ հիշում եմ, որ արդեն շնչահեղձ էի լինում, երբ սնարիս մոտ հերթապահող մորաքույրս հարձակվում է վրաս եւ մատը կոխելով խրչափողս, բացում է անցքը եւ ինձ փրկում: Մորաքույրս իր մի 7 տարեկան տղուն կորցրել էր 1915-ի ախտի ժամանակ՝ նույն հիվանդությունից եւ, ահավասիկ, տեսնելով իմ օրհասական վիճակը եւ հիշելով իր շատ գեղեցիկ Սարգիս որդուն, հասկանում է կատարվածը եւ անմիջապես օգնության է հասնում եւ փրկում կյանքս: Այդ պահուն առանց մորաքույրիս ես այս տողերը այսօր՝ 81 տարեկանիս պիտի չկարողանայի գրել: Այս տողերն ալ իմ մորաքրոջս՝ Մերյեի հիշատակին, որուն քույրիկ էինք ասում:

Վերադառնալով հորս եւ ավելի ուշ, երբ չափահաս դարձա եւ մի քիչ սովորեցի մեր ժամանակներու հայոց պատմությունը, գլխի ընկա, թե հայրս ինչո՞ւ ինձ տարավ եւ հինգ տարեկանիս արձանագրեց անգլիական վարժարան մը, երբ ինքը լավ հայերեն գիտեր, հայկական կրթություն էր ստացել Այնթապի Ադենական դպրոցում: Հիանալի ձայն ուներ, եկեղեցում սարկավագ էր եղել եւ ինձ, քրոջս, եղբորս սորվեցուց (թող սիրտդի «կարոտի գրականությունը» չկարդացվի) «Կռունկը», «Կանչե, կռունկը» եւ ուրիշ հայերեն բառերով երգ մը, որ սկսում էր «Վառեց երկնքին մոմերը»... Ինչո՞ւ անգլիական վարժարան, որովհետեւ հայրս երեւի շատ մը հայերու նման, հիասթափվելով Կիլիկիայում հայկական պետության մը հույսի կորուստեն, չիուսալով իր կենդանության անկախ Հայաստանի մը մեջ ապրելու կարեւորությունենեն, մտածում էր, որ օտարության մեջ ապրելու եւ կյանքի պայքարին դիմանալու համար անհրաժեշտ էր, որ իր զավակը օտար լեզվով կրթություն ստանա: Բայց ինչպես ըսի, նա երկու տարի հետո մահացավ, երբ ես հազիվ 7 տարեկան էի: Եվ մայրս 3 երեխայով այրի մնաց եւ ստիպված էր շատ մեծ ճիգով աշխատիլ պահելու համար իր որբերը, ուրեմն ես չէի կարող շարունակել թանկ վճարովի անգլիական վարժարանում սովորել, տեղափոխվեցի Ալեքսանդրիայի Պողոսյան հայկական վարժարանը: Մի քանի տարի Պողոսյանում սովորելուց հետո, ծանոթներ տեսնելով մեր ընտանիքին նյութական ծանր վիճակը, կիսամոզեն մորս եւ կոչնեն, որ ինձ Կիպրոս ուղարկեն՝ «Մելգոնյան գիշերօթիկ» վարժարան, ուր ես կարճ ընդմիջումով մը, յոթը երկար տարիներ պետք է աղրեի ընտանիքս բաժանված: Երեխայի մը համար, կարծում եմ, որ ամենամեծ դժբախտությունն է մանկությանը իր հարազատներու ներկայութենեն զրկվիլը: Բայց ինչ արած:

Հ. Հակոբյանը (մեջտեղում) ծնողների, եղբոր եւ քրոջ հետ, 1928 թ., Կահիրե:

Ես իմ կյանքս չեմ պատմում, իմ գրվածքիս նյութը չէ իմ կյանքս, ես ուզում եմ խոսիլ հայկականության մասին, հայկականությունն է գրվածքիս նյութը: Հայության հետ իմ ապրած կյանքիս փորձառության մասին եմ ուզում գրել: Բայց չեմ կարող չգրել Մելգոնյան կրթական հաստատության մասին, ուր ունեցել եմ հայկական բացառիկ փորձառություն մը, որ հատուկ է օտարության մեջ ապրող շատ քիչ հայերի:

Ուրեմն, նեռողամիտ եղիր, որ ես կարողանամ մի քիչ խոսիլ Մելգոնյան հաստատության մասին, որ է հայկական երեւույթ 20 տարու հայոց պատմության մեջ՝ հատկապես եղեռնեն վերջ աշխարհում ցրված «մնացորդացի» հետ կապված:

Մելգոնյան գիշերօթիկ դպրոցը սկսում է գործել 1925-26 տարիներից: 1934 թվականի օգոստոսին, երբ Կիպրոս գացի, Մելգոնյանում կային մոտավորապես 300 կամ քիչ ավելի երկսեռ բնակիչներ՝ տասից քսան տարեկան: Մելգոնյան կրթական հաստատությունը հիմնվել էր շնորհիվ ազնվագույն բարեւար Աղա Կարապետ Մելգոնյանի՝ նշանավոր արդյունաբերող՝ ծխախոտի գործով, մեծահարուստ, որ թեեւ թրախտոս, բայց իր տառապած ժողովուրդին մեծ սիրով կապված, իր ժողովուրդին դարդերով եւ ողբերգությամբ տառապող, խումբ մը հեղինակավոր եւ վստահելի հայերի խնդրանքով կը համոզվի իր կուտակած հարստությունը կտակել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության՝ կառուցելու համար գիշերօթիկ դպրոց մը, ուր պետք է որ պատսպարվին 1915 թվականի եղեռնեն փրկված հայ որբեր, որոնք տակավին այդ տարիներուն գտնվում էին Միջին Արեւելքի կարգ մը որբանոցներում: Իր բարեգործությամբ, արդարեւ, իր՝ Կարապետ աղայի եւ վաղամեռիկ եղբոր՝ Գրիգոր աղայի անունը անմահանալու էր հայոց պատմության գրքում: Կտակը, որ պատկառելի գումար մըն էր, որուն տոկոսներով ոչ միայն Մելգոնյան գիշերօթիկ վարժարանի ուսանողներուն կյանքը պետք է ապահովվեր, այլ նաեւ դրամական հատկացումներ կային տարբեր մշակութային օջախներուն, նույնիսկ Խ. Հայաստանի Պետական համալսարանին: Արդեն սկիզբը բարեւարը կհուսար, որ դպրոցը բացվեր Հայաստանի (անշուշտ, սովետական) հողի վրա, բայց երեւի հաշվի առնելով որոշ պայմաններ, կորոշվեր դպրոցը հիմնել Միջին Արեւելքին շատ մոտ, ուր հավաքված էին ախտորական հայերու հոծ բազմություններ՝ Կիպրոս կղզում, որ ըլլալով անգլիական տիրապետության գաղութ, հայերուն որոշ ապահովության երաշխիք էր տալիս՝ անշուշտ քաղաքական կայունությամբ, այդ ժամանակվա աշխարհում: «Կղզի նման չիք մեր Կիպրոս». ինչպես երգում ենք՝ հիշելով Կիլիկիան, որ հանձնվեցավ Թեմալական Թուրքիային անգլիացիներու եւ ֆրանսացիներու կողմե՝ հաշվի չառնելով իրենց «փոքր» դաշնակիցին թափած արյունը իրենց բանակներու մեջ Առաջին համաշխարհային պատերազմին՝ թշնամի թուրքերուն դեմ: Կարող է հայերը ֆիզիկական մեծ ուժ մը չէին, բայց չէ՞ որ ֆիզիկական մեծ ուժ եղող Թուրքիան իրենց մահացու թշնամին էր: Ինչ որ է. կարծեմ դպրոցի կառուցման աշխատանքները սկսում են 1922 թվին եւ 1925-26-ին դպրոցը սկսում է ընդունել իր ապագա հյուրերին՝ խեղճ, ծնողազուրկ հայ որբերին:

Երկու հսկայական շենքեր, մեկը՝ աղջկանց, մյուսը՝ տղայոց համար՝ դասարաններով, ճաշարանով եւ ննջարանով, խոհանոց, ագարակ, մարզական խաղավայրեր, ուսուցիչներու համար հատուկ բնակելի շենք, հիվանդանոց եւ տնկովի անտառներ, որովհետեւ դպրոցի հողամասը մայրաքաղաքեն մոտ 5-6 կիլոմետր հեռու, լրիվ ամայի, անջրդի տարածության մը վրա էր: ...Կկառուցվի բարձր աշտարակի մը վրա խմելու ջրի ամբար մը, որ այդ ժամանակ Կիպրոս կղզու ամենաբարձր երկաթբետոնե կառույցն էր՝ մեր մելգոնյանցիներիս խորհրդանիշը եւ հպարտությունը: Բարեւարը կփափագի, որ իր համար վիլլա մը կառուցվի, որ ինքը տարվան մեկ մասը անցկացնի իր զավակներուն (որբերուն) մոտ՝ գուրգուրանքով հետեւելով նրանց կյանքին: Որբերու համար լավագույն պայմանները ապահովված էին: Չեմ կարող հատուկ չհիշել ուսուցչական կազմը, որ ունենալու էր որոշիչ ազդեցություն հայ երեխաներու մտքին եւ հոգիին զարգացման վրա: Այդ ժամանակ կրնամ ըսել, որ հայ մտավորականներն ալ իրենց ժողովուրդին հետ պատուհասված էին: Նրանք էլ պետք ունեին գործելու հնարավորության եւ հրավիրվում էին նշանավոր մտավորականներ՝ ինչպես երաժշտագետ Բարսեղ Կանաչյանը, գրող Հակոբ Օշականը, Վահան Թեքեյանը եւ ուրիշներ, որոնց մեկ մասը արդեն չէին պաշտոնավարում, երբ ես Մելգոնյան հասա 1934 թվականին: Անպայման մանկավարժներ չէին, բայց հեղինակավոր հայ մտավորականներ էին: Մանկավարժ էր որ. Պողոս Գետոյանը՝ Զվիցերիայում ավարտած նշանավոր պրոֆեսոր Քլապարեդի ուսանողը, ինքն իր հերթին նշանավոր մանկավարժ: Հովհաննես Շեհոմելյանը՝ այնթապցի, անգլերենի գծով մանկավարժ, որ ոչ միայն Մելգոնյանում դասավանդեց, այլ նաեւ տեղական պետական դպրոցներում հազարավոր աշակերտների, նրանց հասցնելով անգլերեն լեզվով իրենց ուսումը Անգլիական համալսարաններու մեջ շարունակելու կարողության: Անշուշտ Մելգոնյան կրթական հաստատության պատմությունը գրող պատմաբան մը շատ ավելի արժեքավոր մանրամասնություններ կարող էր արձանագրել: Եվ անշուշտ, չմոռնամ իմ երկու շատ սիրելի ուսուցիչներս՝ Առաքել Պասրիկը եւ Օննիկ Ավետիսյանը: Բայց ես ավելի ուզում եմ իմ գրվածքս պահել հայկականության մասին իմ ընթերցողներուս: Ներողամիտ եղիր, որ խոսքս երկարում է, կուզեմ նաեւ մի քանի խոսքով հիշել Մելգոնյան դպրոցի հետ իմ առաջին շփումս, ուր պետք էր ապրեի իմ պատանեկությունս եւ այն ազդեցությունը, որ ես կրել եմ Մելգոնյանում անջնջելի մնաց մինչեւ այսօր՝ 60 տարիեն ավելի:

Ես միայն պատմեմ Մելգոնյանի կյանքիս սկիզբը՝ առաջին օրը:

Այդ տարին՝ 1934 թվականի օգոստոս ամսին, ես 11 տարեկան երեխա՝ նավով հասա Կիպրոս: Ինձ սպասող կար, վերցուցին եւ բերին Մելգոնյան վարժարան, ուր պաշտոնյա մը արձանագրեց գալուստս եւ մի քիչ հետո ինձ տեղավորեցին փոստատար ավտոբուսում եւ ճամփա ելանք դեպի սարերը: Կիպրոս կղզին հարավից՝ ավելի բարձր, հյուսիսից՝ ավելի ցածր լեռներով շրջափակված է, իսկ կենտրոնը, ուր կա մայրաքաղաքը եւ մեր դպրոցը, ցած հարթավայր է, ամռանը՝ շատ շոգ եւ չոր: Ուրեմն երբ մեզ բերող ավտոբուսը մոտեցավ եւ կանգնեց, անմիջապես, տղաներու մի խումբ շրջապատեցին քաղաքից եկած մարդատարը: Այդ պահը ամբողջ կյանքս չեմ մոռանալու: Խումբ մը պատանիներ: Առաջին բանը, որ տեսա, ցնցիչ էր՝ բոլորի գլուխները խուզված էր: Իմ ալ գլուխս խուզված էր, բայց այդպես խումբով, հագած կարճ շալվարներ, սանդալներով եւ նույն գույնի ճմռթված շապիկներով (հո չէին արդուկելու), ինձ էին նայում: Ես տեսակ մը տագնապալից զգացում մը ունեցա, որ բոլորովին անծանոթ մի հավաքականության եմ հանդիպում եւ ես ալ իրենց մաս եմ կազմելու շուտով՝ կնդած գլուխով, սանդալով, տարագի նման շապիկով եւ կարճ շալվարով: Այդ հիշողությունը ավելի ուշ կապվում էր նացիոնալական կենտրոնացման ճամբարներու կալանավորներուն լուսանկարներուն: Բայց բոլորը հայեր էին, հայ տղաք: Մի քիչ հետո, քանի որ մայրամուտ էր, փողոցը՝ մի ուսանող, քանի որ դպրոցը ուներ փողային գործիքներու նվագախումբ, հատուկ մեղեդիով մը ազդարարեց ընթրիքի ժամը: Գնացինք ճաշելու բացօթյա: Երկար սեղաններ, երկար նստարաններ, կողքկողքի նստեցինք մի քանի հարյուր հոգի: Շատ մտահոգ էի եւ տագնապած: Չէի գիտեր ինչ պետք է հրամցնեն ուտելու: Ես շատ մահաձ ուտող էի: Մորս պատրաստած ճաշերեն զատ, որոնց վարժվել էի ծնած օրեւ, չէի կարող ուրիշ բան ուտել դժբախտաբար: Ես եթե մի բան չէի կարող կուլ տալ, վերջ, անկարելի էր ուտել: Իմ բախտս այն օրը արդեն ճաշս կերա ուրախությամբ: Սեւ ոսպ էր՝ ձիթայուղով, իսկ միրգը, որ օրական մի անգամ էր տրվում, ձմերուկ էր: Ուրախ էի, որ ոսպ էր, մորս պատրաստածի նման: Պարզ ճաշ, բայց ուտելի, եւ ուրախ էի, որ կշտացա: Վերջը, այնքան տարիներ, որ ապրել եմ Մելգոնյանում, ճաշերուն մեծ մասը չէի կարողանում ուտել եւ բավարարվում էի հացով, իսկ ընթրիքին՝ հաց եւ միրգ, որ կամ նարինջ մըն էր կամ ճութ մը խաղող: Դժբախտաբար շատ տանջվում էի այդ վիճակես: Իմ շուրջս մյուս տղաքը հաճույքով ուտում էին իրենց մատուցվող ճաշը, որ թե քանակով բավարար էր եւ թե սննդարար: Նրանք նորմալ սնվում էին, առողջ էին եւ եռանդով լեցուն, ես թուլությանս պատճառով նույնիսկ դասերս կարգին սորվելու ուժ չունեի: Չէ՞ որ ուղեղն ալ սնունդի կարիք ունի: Ինչ որ է, շարունակեմ: Գիշերը վրա հասավ:

Տես էջ 6

1935 թ., Կիպրոս. Հ. Հակոբյանը Մելգոնյանի սան:

Ստրոյմներ

Էջ Ա-ից

Նույն փողահարը մի ուրիշ մեղեդիով ազդարարեց, որ անկողին մտնելու ժամանակն է: Բոլորս հավավեցինք եւ պետք է աղոթեինք ննջելուց առաջ: Բայց այդ առաջին օրը միայն պարզ, սովորական աղոթք չէր: Մեր հսկիչ ուսուցիչը հայտարարեց, որ պիտի որ «Տեր ողորմեան» երգենք, որովհետեւ մոռցա ըսելու, որ բարեւար Կարապետ Մելգոնյանը վախճանված էր եւ իր անմյունը դագաղով, հենց այն նավով, որ ես գալիս էի Եգիպտոսից, այդ նավով ալ տեղափոխվում էր Կիպրոս եւ պետք է թաղվեր Մելգոնյանի աղջկանց եւ մանչերու շենքերուն առանը՝ բակին մեջ: Եվ, ահավասիկ, գիշեր է, ես որ մինչեւ Մելգոնյան գալս ննում էի մորս հետ, մորս փաթաթված, մի փիչ հետո պետք է անկողին մտնեի առաջին գիշերը հարազատներես հեռու, մինակս եւ ահավասիկ մութին մեջ, բացօթյա երկինքի տակ: «Տեր ողորմեան» հնչում էր, չեմ գիտեր ինչպես ըսեմ, մահվան եւ սուգի երգ: Միշտ էլ «Տեր ողորմեան» տխուր է, այդ սանչելի, հիմնի պես երգը, ամենահայկական երգերեն մեկը: Վիշտի երգը: Բայց ոչ մեկ տեղ այդպես... ասդղազարդ, սեւ երկինք, ամայի դաշտին մեջ ծովեն եկող ձայները իրար միանալով, կծկված եւ շփոթված պատանիներ, սեղնվում էր չըսեմ չարագուշակ, բայց ողբ՝ հայ որբերուն երկրորդ անգամ կորցրած «հոր» համար: Աղոթքեն վերջ մտանք վրանները ննելու: 40 օր ամեն գիշեր ննելուց առաջ երգելու էինք «Տեր ողորմեա»-ն: Ես պետք է նույն անկողինի մեջ ննեի ինծի տարեկից տղու մը հետ՝ ամեն մեկուս գլուխը անկողինին հակառակ կողմը: Վրանին մեջ կար մի գազի լամպ՝ վրանի կենտրոնական սյունեն կախված: Վրանները ամեն կողմից բաց էին: Իմ անկողինը վրանի մեկ ծայրն էր: Ես առաջին անգամ, ուրեմն, չէի ննում տանս մեջ: Վախենում էի, բայց ինչ անեի: Շուտով ննեցին բոլորը: Ես վախես ձեռքերս մեկնեցի կողքի մահճակալը, որ շատ մոտ էր, եւ բռնեցի ննած տղայի թեւից, որ բանի մը կառչած ըլլամ: Վերջը, ես ալ արդեն շատ հոգնած էի, ննել էի: Առավոտյան նորից շեփորի կանչով վեր կացանք, անկողինները հավաքեցինք: Մեզ տարին ծովում լողանալու, անշուշտ, հսկողության տակ: Ես լողալ չէի իմանում եւ եզերքին մոտ հանկարծ սայթաքեցի խորունկ ծովը եւ չեմ գիտեր ինչպես կրցա կառչիլ ժայռից. կրնայի խեղդվել, եւ... փրկվեցի:

Նախաճաշից հետո ազատ էինք: Ես ալ ուզում էի ինձ ցույց տալ, ուշադրություն գրավել, բնազդաբար համակիրներ գտնել: Մի նկարչական տեսր ունեի եւ մատիս եւ սկսեցի վանքը նկարել: Անմիջապես շուրջս հավաքվեցին, եւ ես նկարում էի, եւ երբ չէր սացվում, էջը պատռում էի եւ նորը սկսում: Մեկը ըսավ, որ եթե այդպես շարունակեմ, շուտով նկարչական տեսր չեմ ունենալու: Հասկացա, որ սխալս շտկելու համար ռետին չգործածելս ինձ դրել է անհեթեթ վիճակի մեջ: Շուտով լուր տարածվեց, որ նորեկը նկարիչ է, եւ մեր նկարչության ուսուցիչը՝ Առաքել Պատրիկը, որ ինքն էլ մեզ հետ հանգստանում էր վանքում, իր մոտ տարավ եւ սկսեց ինձմով հետաքրքրվել, եւ ես զգացի, որ արդեն գտել եմ պաշտպան մը, ավելի ապահով եմ: Ահավասիկ մեկ օրվա պատմությունս:

Մի բան էլ ասեմ եւ այդ մեկ օրվա պատմությունը փակեմ: Առավոտուն նկատել էի, որ մի քանի «դրշակներ» արեւին հանված էին չորանալու համար: Գիշերը կային երեխաներ, որ քունի մեջ իրենց մեզը չէին կարողանում պահել: Այս որ տեսա, սարսափեցի: Ամեն գիշեր ննելուց առաջ սարսափում էի՝ մտածելով, որ հանկարծ ինձ հետ ալ այդպես բան չպատահի: Այս ալ նոր տագնապ մը:

Այդ օրվանից հետո ես գրեթե 7 տարի ապրեցի Մելգոնյան գիշերօթիկում: Ես ալ մյուս երեխաներուն պես մի տարվա չափ երբեմն հիշելով իմ հարազատներս, սիրտս լեցվում էր, գնում էի խաղավայր կամ անտառը եւ լաց էի լինում ուրիշներու աչքից հեռու: Հետո հանգստացած վերադառնում էի ընկերներուս մոտ, մինչեւ որ կամաց-կամաց սկսեցի մոռանալ հարազատներս եւ ապրիլ իմ նոր կյանքով, տեսակ մը նոր, մեծ ընտանիքի մեջ: Տխրությունը տեղավորվում էր մեր մեջ եւ դառնում բնավորությունեն անբաժանելի:

Հիմա՝ Մելգոնյանի մեր մելգոնյանցիներուն կյանքին մասին: Դպրոցը հասարակությունեն կտրված փակ տարածություն մըն էր՝ փշալարերով ցանկապատված: Ոչ մեկ դժվարություն կար այդ փշալարերեն մյուս կողմը անցնելու, բայց անցնեինք եւ ինչ անեինք: Մեր սահմաններուն ամենամոտ բնակավայրը բոլոնանցոն էր: Դրանից հետո երեւացող շենքը գժանոցն էր, մյուս կողմից ավելի հեռու թոխխանցոն էր: Լրիվ ամայության մեջ:

Մեր ժամանակացույցը շատ որոշակի կազմված էր. առավոտյան ժամը 6-ից կամ 6.30-ից պետք է վեր կենայինք անկողիններեն, պետք էր մեր անկողինը հավաքեինք, լվացվեինք, իջնեինք դպրոցի բակը՝ մի քառորդ ժամ մարզիչի հսկողության տակ լիցքավորման վարժություններ ընելու: Հետո դասարան, մի կես ժամ սերտողություն, նախաճաշ եւ դասերը սկսում էին՝ ժամը 8-ից մինչեւ 12-ը: Հետո ճաշ, մի փոքր դադար եւ նորից՝ դասարանները, օրվա երկրորդ կեսի դասերը՝ մինչեւ ժամը 3 անց երեսուն: Հետո ժամուկես մեծ զբոսանք, հետո ընթրիք, մի փիչ դադար եւ նորից դասարանները՝ մյուս օրվա դասերը սերտելու: Ժամը 9-ին՝ անկողին: Այսպես ամեն օր՝ մինչեւ ամառվա արձակուրդները: Ապրում էինք ռեժիմի մեջ: Դասերից դուրս ունեինք խաղավայրեր, ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ: Կարծեմ, բոլոր մելգոնյանցիներն ալ շուտով վարժվում էին գիրք կարդալու: Հակառակ մեր պատանեկան եռանդին՝ սովորում էինք անշարժ նստել եւ թաղվիլ ընթերցանության մեջ: Կրնամ ըսել, որ գիրքը դառնում էր մի տեսակ թմրադեղ՝ մոռանալու իրականությունը եւ ընկնելու տեսակ մը երազային աշխարհ:

Մամուռ հայերենը դպրոցին լեզուն էր, հակառակ տարբեր տեղերից եկած հայ երեխաներուն, ժարգոն գոյություն չուներ մեր հայերենին մեջ, որ ավելի շատ մոտենում էր գեղարվեստական գրականության լեզվին: Ես ալ 15 տարեկանիս սկսեցի վարժվիլ գիրք կարդալու եւ դրանից հետո էլ չէի կարող առանց գիրք պրիլ: Գրեթե բոլոր հայ գրողները՝ արեւմտահայ թե արեւելահայ, մենք կարդում էինք մեծ սիրով: Ես Ռաֆֆիի վեպերը կարդում էի, ինչպես ասում են, չթուղացող հետաքրքրությամբ եւ ինչպես էր լինում, որ 15 տարեկան արեւմտահայ պատանին Ռաֆֆին կարդում եւ հասկանում եւ չէր ասում, այս ինչ լեզու է, չեմ հասկանում: Հիմա սփյուռքահայը, ականջը խոսի «մեկ ազգ, մեկ մշակույթ» ըսողին, որ գանգատվում է, որ արեւելահայերեն չի հասկանում, կամ տեղացի հայը ասում է, որ այդ «ախպարներու» լեզվից բան չի հասկանում, բայց ամերիկյան երգիչներուն հրաշալի հասկանում է եւ այնպես է խոսում եւ երգում հայերեն, որ լսելով չես իմանում ինչ անես, որ մի հատիկ հայերեն բառ ջոկես լսածեդ:

Հ. Հակոբյանը ընտանիքի հետ նավով վերադառնում է հայրենիք, 1962 թ.:

Բոլորը, գրեթե ինչ որ կար մեր գրադարանին հայկական բաժնին մեջ, ես եւ ընկերներս կարդացել ենք մեծ սիրով եւ ուրախությամբ: Մամուռ հայերենը մեծ հայ գրողներից սովորեցինք՝ Թումանյան, Գրիգոր Զոհրաբ, Չարենց, Բակունց, Մահարի, Տերյան, Մեծարենց, Զարիֆյան, Թեքեյան: Բոլոր հայ լավագույն գրողները, հայ գրականությունը մեզի համար մեր կյանքին իմաստն էր: Դպրոցը ինքը, որ շատ նման էր համակենտրոնացման ճամբարի՝ իր հասարակությունից առանձնացված, վերածվում էր մի ընտանիքի, որուն անդամները հայ երեխաները եւ պատանիներն էին, ուսուցիչները եւ գրքերը: Անզգալիորեն մենք դառնում էինք եղբայրներ: Գիշերօթիկ դպրոց մը բնական տեղ մը չէ, երեխան չի կարող հոգեպես խուսափիլ որոշ խանգարումներից, առանց իր հարազատներու բնական զգացմունքային ներկայության եւ նաեւ հասարակությունե եւ կյանքե կտրված ձեւավորվում է մի մարդու տեսակ, որ հետո մտնելով հասարակության մեջ դժվարությամբ է ձուլվում հասարակությանը: Վերջիվերջո, գիշերօթիկ դպրոցը տեսակ մը բանտ է կամ գաղութ, եթե բանտին եւ գաղութին հիմնական հատկանիշը մարդկային հասարակությունե, լավ կամ վատ, առանձնանալն է: Կամաց-կամաց մենք այնպես էինք օտարանում մեր անցյալեն, որ նույն իսկ չէինք էլ մտածում վերադառնալ այն տեղը, որտեղից եկել էինք: Մելգոնյան գիշերօթիկը իր փշալարերուն մեջ փակված մի շատ փոքր, բայց կատարյալ Հայաստան էր: Այս պատճառով էլ, եթե մենք փնտրում էինք մի նոր տեղ, դա էլ պետք է ըլլար զուտ հայերով լեցուն ավելի մեծ տարածություն մը, որ պարզապես կրնար ըլլալ մեր հայրենիքը՝ Հայաստանը: Չէինք գիտեր ինչ էր այդ հայրենիքը, բայց ինքի համար այդ հայրենիքում էր բնակվում Ակսել Բակունցը՝ իր «Խոնարհ աղջիկով», իր «Դիլան դայի»-ով, իր «Սեւ ցելերի սերմնացանով»: Բայց իմ վիճակիս ինչ անուն տամ, որ բանի նման, որ երբ կարդում էի Ակսել Բակունցի «Սեւ ցելերի սերմնացան» գիրքը, Հակոբ Կոջոյանի հրաշալի ձեւավորումով, կամ Գուրգեն Մահարիի «Մանկություն» հրաշալի ամենահուզիչ գիրքը, կամ Չարենցի երկերը, սկիզբը վարպետ Սարյանի թեեւ ոչ գունավոր արտատպությամբ, բացառիկ տպավորիչ եւ ազդող, ես, խեղճ պատանիս, որ երազում էի Մելգոնյանից ուղիղ տեղափոխվիլ Հայաստան, չէր իմանում, որ այդ մարդիկ, մեր նոր ժամանակներու սուրբերը կամ ախորավայրում տանջվում էին ամենազզրելի ձեւով, կամ էլ արդեն սպրոբար սպանված էին: Եվ ես երազում էի Հայաստանում պրիլ: Կարո՞ղ է մարդ Թումանյանի «Գիքորը» կամ բանաստեղծությունները կարդալուց հետո չուզենա պրիլ Թումանյանի մոտ:

Հ. Հակոբյանը Փարիզում, 1953 թ.:

Սա էր մելգոնյանական իմ հայկականությունս: Ինչպես բոլոր ընկերներուս: Եւ պատահական չէ, որ 46-47 թվականներու հայրենադարձներու մեջ Մելգոնյանը ավարտած շատ ընտիր տղաք կային: Ես այդ ժամանակ չկրցա գալ, չբերին: Բայց անհամբեր սպասելով, 15 տարի հետո, 1962-ին եկա Հայաստան, ձգտած դեպի իմ հայկականությունս:

Այս հոդվածին մեջ, որքան որ ալ ես իմ մասիս եմ պատմում, բայց իմ բուն նյութս հայկականությունն է, որ մեր հազարամյակներու հայկականության մեկ կաթիլն է: Բայց այդ է ինքի վիճակվածը:

1941-ին առանց կարենալ ավարտելու դպրոցը պատերազմի ժամանակ վերադարձա Եգիպտոս, ընտանիքիս մոտ, հիվանդ հայկականությամբ, հաստատ համոզված, որ Հիսլերը պետք է պարտվի եւ օտարության մեջ ապրող հայերը պատերազմից հետո վերադառնալու են իրենց հայրենիքը: Ես այդ բանին հավատալով էի ապրում, ինչպես հարյուր հազարավոր հայեր: Անշուշտ, ոչ մի բան չգիտեի սովետական ռեժիմին մասին, բայց Հրաչյա Քոչարի «Գեներալի ոտքը» կարդում էի ու լաց լինում:

Ինչպես որ սպասելի էր, Մելգոնյանի այդ գիշերօթիկի ռեժիմեն անցնիլ Եգիպտոսի կյանքին, ուրկե հեռացել էի մանկությանս, շատ դժվար էր, մանավանդ կիսատ ուսումով երիտասարդիս համար: Արդեն երիտասարդ էի դառնում: Սկսում էի ծանոթանալ Եգիպտոսի հայ բնակչությանը: Ինչպես սփյուռքի բոլոր գաղութներում հայերը ոչ թե միայն պայքարել էին Եղեռնեն հետո ոտքի կանգնելու եւ ֆիզիկապես իրենց պաշտպանելու, այլ նաեւ չէին անտեսում հայկականությունը, հայուն հոգեւոր կյանքը: Կահիրեում, Ալեքսանդրիայում կային հայկական ամենօրյա դպրոցներ, եկեղեցիներ, ակումբներ, որոնք հայրենակիցները պահում էր միմյանց հետ հարաբերության մեջ: Հայերը ունեին հայկականության օջախներ, հենարաններ, գեղարվեստական կյանք, մարզական կյանք: Բայց անշուշտ, բազմամիլիոնանոց քաղաքներու մեջ հայերը փոքր թիվ էին, եւ հայկականությունն ալ չէր կարող շատ խորը ըլլալ: Անշուշտ, տակավին հայերու միտքին մեջ թարմ էր հիշատակը իրենց բնաջխարհին եւ հիշատակները փոխանցվում էին նոր սերունդին, բայց օտարությունը մնում էր օտարություն եւ հայը ապրում էր ինքն իր մեջ խաբված, մանավանդ Եգիպտոսի մեջ, ինչպես Միջին Արեւելքի արաբական մյուս երկիրներուն մեջ, ձուլումը տակավին վտանգ մը չէր: Մանավանդ կրոնական տարբերության առկայությամբ: Տեղական լեզուն սկսում էին գեթ-աղեկ յուրացնել: Իսլամ կառավարությունները մեծ հանդուրժողականություն էին ցուցաբերում հայերու հանդեպ՝ հայկական եկեղեցիներ, ակումբներ, դպրոցներ, օրաթերթեր: Հայերը նկատվում էին իբրեւ կրոնական համայնք, որ ուներ ազգային եւ մշակութային ավանդույթներ, որոնք նկատի առնվում էին պետության կողմե եւ իրենց տրվում էր որոշ հարցերում ինքնուրույն գործելու թույլտվություն, տեսակ մը ինքնավարություն: Հայ եկեղեցին ուներ իր հավատացյալները, ուներ իրավունք ամուսնական, ամուսնալուծական հարցերը կարգավորելու, եկեղեցական անձեռնմխելի կալվածներու, որոնք գոյացած էին նվիրատվություններով, եկամուտները տնօրինելու, հայկական դպրոցներու «բյուջեները» կարգավորելու, բարեսիրական եւ աղքատախնամ կազմակերպությունները հովանավորելու: Մեկ խոսքով, գոնե իմ գիտցած եգիպտահայ գաղութը, որը հաշվվում էր 35-40000 անդամ, ուներ որոշ կազմակերպված կյանք: Մի քանի տարին մեկ ընտրություններով որոշվում էին եկեղեցիի կողքին գաղութի զանազան հարցերը կազմակերպող թեմական ժողովի ղեկավար անդամները, որ առիթ էր դառնում միջկուսակցական պայքարի՝ աթոռների տիրանալու համար: Գաղութը ուներ որոշ կազմակերպվածություն, որուն նպատակն էր գաղութի հայկականության պաշտպանությունը: Տարին գոնե երկու անգամ հայկական եկեղեցիներու բակերը լեփ-լեցուն էին լինում հայերով՝ Սուրբ Ծնունդին եւ Սուրբ Զատիկին:

Համաշխարհային երկրորդ պատերազմը դարձել էր ամբողջ մարդկության ուշադրության առարկան: Ֆաշիզմը մի կողմից, դաշնակիցները եւ Սովետական Միությունը մյուս կողմից, որուն բանակներուն մեջ կռվում էին հարյուր հազարավոր հայորդիներ: Հայ տղանդավոր հրամանատարներու սխրագործությունները, հայ մարշալներու համաշխարհային համբավը բոլոր հայերու սիրտերը ուրախությամբ ուռեցնում էին: Ամբողջ հայ ժողովուրդը սփյուռքով մեկ ուշի ուշով հետեւում էր պատերազմին եւ իր օգնությունը չէր զլանում: 15 թվականի Եղեռնից հետո աշխարհով մեկ ցրված հայությունը հպարտությամբ էր գլուխը բարձրացնում: Նորից հայրենի հողին վրա ապրելու հույսերը հայ մարդուն հայրենի հողին վրա հաստատվելու եւ գործելու նոր իրական հեռանկարներ էր բացում: Շատերը հավատում էին, որ այս անգամ հայ ժողովրդի հանդեպ եղած ոճիրները, հայ ժողովրդի այս անգամ էլ իր բերած 350.000 զոհերով կարող էր արդարորեն վարձատրվիլ, գոնե հազարավոր տարիներ իրենց պատկանած հողերուն մեկ մասը միացնելով նոր հայրենիքին: Արդարության իրականացման էին սպասում հայերը:

Ես ալ ապրում էի այն երազով, որ գրեթե մտասեւեռում էր դարձել, որ անդայման շուտով պիտի երթամ հայրենիք: Հայերեն գիրը ինքի համար ամենամեծ մխիթարությունն էր: Այն ատեն Կահիրեում էր ապրում 1915 թվի Եղեռնից բախտով ազատված սփյուռքի ամենամեծ հայ բանաստեղծը, հասարակական գործիչը, Ռամկավար ազատական կուսակցության «Արեւ» օրաթերթի խմբագիրը: Ես ամեն շաբաթ անհամբեր սպասում էի «Արեւի» կիրակնօրյա համարին, ուր պետք է լույս տեսներ մեծ բանաստեղծին առաջնորդող խոսքը՝ ամենագեղեցիկ արեւմտահայերենով գրված: Շաբաթական այդ մի հոդվածը ինքի համար ամենահարգի սնունդն էր հայկականության: Այստեղ ըսեմ, որ Կիպրոսի Մելգոնյան վարժարանում մեծ բանաստեղծը հրավիրված էր 1935-1936 թվականներուն նոր հիմնված մանկավարժական բաժինը տնօրինելու: Վահան Թեքեյանը բառիս բուն իմաստով պատերազմեն առաջ Մելգոնյանի աշակերտներուն պատելին էր: Թեքեյանի գիրքերը ամբողջ տարի մը յոթերորդ դասարանի «մենաշնորհն» էր դառնում, չէր վերադառնում գրադարան: Թեքեյան անգիր արտասանելը արդեն չգրված օրենք էր ամեն տարի յոթերորդ դասարան մտնող աշակերտներուն համար:

Պատերազմը ավարտված էր, մարդկությունը սկսել էր ազատ շունչ քաշել: Եգիպտոսի հողը, մի կերպ մեծ զոհողություններով պաշտպանվելով նացիստ բանակներու գրավումեն, զերծ մնաց ֆաշիստներու խժդժություններից: Մարդիկ ուրախ էին, մարդկությունը փրկված էր դժոխքեն: Հայաստանը հաղթող երկրներու շարքին էր, հայ զինվորները առաջիններից էին, որ մտել էին նացիզմի որջը: Ճիշտ է, նորից մեր ժողովուրդը շատ ծանր կորուստներ էր տվել: Հարյուր հազարավոր ընտանիքներ սուգի մեջ էին: Բայց հայերն ալ հաղթողներու շարքին էին: Եւ հանկարծ հայերուս համար մեծ պայթյունը՝ լուր, որ սկսվում է հայրենադարձությունը: Հայաստանի կառավարությունը պատրաստվում է ընդունել օտարության մեջ ապրող իր հայրենաբաղձ որդիներին:

Տես էջ 9

Էջեր օրագրից

ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԵՆՅԱՆ

7 մայիս -1968 - Մի քանի օր է՝ պառկած եմ գրիպով: Ընդհատվեց «Կարամազով եղբայրներ»-ի թարգմանությունս, որ ավելի քան երկու տարի անում եմ անդադար, ո՛չ կիրակի, ո՛չ տոն: Այդպես եմ միշտ, երբ տարվում եմ սիրելի գործով: Վիքխարի վեպից մնաց 200 էջ՝ ավարտելու թարգմանությունը: Առաջին հատորը անցյալ տարի եմ հանձնել Պետհրատ՝ պատրաստ տպագրության: Զգում եմ, որ մեծ գործ արեցի, կատարելով դեռ պատանեկան օրերի երդումս, երբ Դոստոեվսկու այս վեպը խորապես ցնցել էր ինձ: Հասնում եմ նոպատակիս. այսպիսի տիտանական գլուխգործոցը, որ «վեպ» հասկացությունից շատ ավելին է ամեն ինչով, **նաեւ հայ գրականության փառս դառնա:** Անպատեհ էր այս հիվանդությունը հիմա, սովորական գրիպ կարծես, բայց ծանր եմ տանում այս անգամ: Վերջին վեց-յոթ ամիսների նյարդային գերլարվածության հետեւանքն է: Քանի տարի է արդեն վարձով ենք ապրում կնոջս ու երեխայիս հետ, իսկ գետնահարկի այս սենյակը, ուր ստիպվեցինք տեղափոխվել, ոչ միայն կիսամութ է, այլ մանավանդ՝ աղմուկ, աղմուկ ամեն կողմից: Աշխատում եմ ականջներիս ձայնամեկուսիչ բամբակ թխմած, որ շատ էլ չի օգնում: Օգնում է այն միայն, որ սուզվում եմ վեպի աշխարհը եւ տարվում աշխատանքով, համառորեն անտեսելով աղմուկը, բայց դրա դեմ էլ երբեմն հանկարծ սիրտս է բողոքում անկանոն ուսուցումներ կատարելով: Թողնում դուրս եմ գալիս, թափառում մի ժամ: Կորչող ժամանակս ափսոսալով վերադառնում եմ նույն համառությանս, ճարս ինչ: Էլ ուրիշ տեղ սենյակ փնտրելու ուժ էլ չմնաց...

9 մայիս- Այս առավոտ լավ էի զգում արդեն, կարծեցի՝ լրիվ առողջ, բայց... դա անկողնում էր: Տրամադրված վեր կացա, որ աշխատեմ, չկարողացա: Դեռ թույլ եմ, անկողինը քաշեց կրկին, հաճելի էր պառկելը: Բայց նախ դրի Շուբերտի Դո-մաժոր մեծ սիմֆոնիան, որը շատ եմ սիրում, ինչքան լսեմ՝ չեմ կշտանա: Կատարումն էլ հոյակապ՝ Ֆուրտվենգլերը դիրիժոր, արխիվային ձայնագրություն կենդանի համերգից: Վերջանալուց հետո սիրտս ուզեց վերընթերցել Շումանի սմանչելի հոդվածը Շուբերտի այս սիմֆոնիայի մասին: Քանիցս արդեն, եւ նույն հաճույքով: Ու նաեւ աչքերիս արցունք բերող այն ուրախությամբ, որով հուզում է ինձ ճշմարիտ բարության, ազնվության որեւէ մեծ կամ փոքր արարք, երբ տեսնում եմ կյանքում կամ գրականության մեջ: Երիտասարդ կոմպոզիտոր ու երաժշտական քննադատ Շումանի այս հոդվածը ոչ միայն գրական փայլուն էջ է ուղղակի, այլեւ հենց բարոյա-գեղագիտական ազնվագույն ապրում է ներշնչում ընթերցողին, հավերժորեն կենդանի դաս է նաեւ, թե ինչպիսին կա-

Լի Բո. չին բանաստեղծ (701-762):

ող է լինել արվեստագետների ճշմարիտ եղբայրակցությունը: Վաղուց, դեռ Մելգունյանում, երաժշտության մեր ուսուցիչ պրն Պետելյանից լսելով, ինձ շատ է հուզել այդ պատմությունը. թե ինչպես Շումանը, երբ գալիս է Վիեննա, այցելում, ծաղիկներ է դնում Բեթհովենի եւ Շուբերտի «սուրբ շիրիմներին» ու երկար կանգնում նրանց առջեւ, հետո վաղամեռիկ Շուբերտից մնացած բազմաթիվ ձեռագրերի դեզերում, նրա եղբոր մոտ, գտնում է այս հանճարեղ սիմֆոնիան, որ հայտնի չէր ոչ ոքի, ուղարկում է Լայպցիգ, ուր Մենդելսոնը, հիացած, ինչեցնում է նորահայտ գլուխգործոցը Գեւանդհաուսի նվագախմբով, այնուհետեւ երաժշտասերների ամենասիրելի երկերից է դառնում Շուբերտի այս մեծ սիմֆոնիան, մի ուրիշ տեղ ավելի եւս ուշ հայտնաբերված նրա մյուս գլուխգործոցի՝ «Անավարտ» սիմֆոնիայի հետ: Եվ ինձ համար էլ, դեռ պատանեկությանս օրերից, ոչ միայն երաժշտարվեստի, այլեւ ընդհանրապես արվեստի ամենասիրելի երկերից են այդ երկու սիմֆոնիաներն էլ՝ իրենց գեղեցկությամբ այնքան դյութիչ, ասես մարդածայն խոսունությամբ այնքան հոգեհույզ ամեն անգամ, երբ լսում եմ:

Ահա այս ռուսերեն կանաչ սիրունիկ հատորում, 1957-ին, երբ նոր էր լույս տեսել, առիթն ունեցա առաջին անգամ կարդալու բուն իսկ Շումանի այս հոդվածը, որ նա գրել է, ինչպես ասում է վերջում,- եւ սա էլ, ո՞վ գիտե, լոկ պատահականությո՞ւն, թե՞ անդրոշեն նշանակալից խորհուրդ,- գրել է Բեթհովենի դամբանաքարի վրա գտած գրիչով, որը, ասում է, սրբությամբ է պահում եւ օգտագործում է հանդիսավոր առիթներով միայն, եւ ահա այս հոդվածը՝ հանդիսավոր առիթ: Եվ ամբողջ այդ եղելությունը, ժամանակի ավելի քան մեկդարյա խորքում կատարված եւ իր իսկ խոսքով անմիջականորեն պատմված, ինչպես նաեւ իր հիացիկ արտահայտությունները սիմֆոնիայի մասին (ինչ դիպուկ է մանավանդ «ասպվածային երկարաբանություններ» հրաշալի բնորոշումը),- այդ

Ֆրանց Շուբերտ (1797-1828), ավստրիացի կոմպոզիտոր:

բոլորը այնպես խոսեցին երեւակայությանս, որ կենդանի պատկերացնում էի այդ եղելության պահերն ու ամբողջ մթնոլորտը: Ու ցանկություն եկավ արտահայտելու պատկերագրածս էստե-պատմվածքի ձեւով, միահյուսելով իմ ապրումների ու խոհերի հետ, ու նաեւ խորքում, ասես անդրաշխարհից, ոգեկոչելով Շուբերտի կենդանի կերպարը: Ափսոս, այդ ցանկությունս էլ, ինչպես ուրիշ մտահղացումներ, մնաց օդի մեջ, իբրեւ երազանք միայն, ու հանգավ...

Այս հիվանդ օրերիս գոնե մի քիչ հագեցնում եմ ընթերցելու ծարավս (հաճախ, անշուշտ, ականջներիս բամբակ թխմած): Առաջին երկու օրերի բարձր ջերմությունից հետո, ահա մի շաբաթ է արդեն, անկողնում ամփոփված, առավոտից գիշեր կարդում եմ Վագների ինքնակենսագրությունը, որ գնել եմ Մոսկվայում բուկինիստական խանութից: Թարգմանված ֆրանսերեն՝ երեք հատոր: Հասել եմ երկրորդ հատորի կեսը: Ժամանակին կարդացել եմ Բեղիոզի ինքնակենսագրությունը, ավելի ճիշտ՝ հուշերը, մի հաստ հատոր: Դեռ համենում է իմ մեջ տպավորությունը Բեղիոզի գրից՝ ոմն ավելի աշխույժ, վիրելու տաղանդ, հույժ արտահայտիչ նկարագրություններ, հոգեբանական խորացումներ, երբեմն նաեւ խորունկ մտքեր, գրավիչ հումոր, ռոմանտիկ շունչ եւ միաժամանակ իրատես աչք: Անմոռանալի գիրք է, ինչպես իր Ֆանտաստիկ սիմֆոնիան: Ունի որոշ այնպիսի էջեր, որոնց տակ,- հիշում եմ այդ տպավորությունս,- կարող էր մեծ գրողն էլ ստորագրել: Այդ գրքի համը, այսպես ասած, մնացել է բերանս, կուզեի վերընթերցել մի օր: Վագների ոճը ավելի միագիծ է, պատմելու եղանակը՝ ավելի հանգիստ ու միաղաղաղ (գուցե թարգմանությունի՞ց է որոշ չափով այդպես), բայց համընթաց այդ միաղաղաղության մեջ կա մի լայն շունչ, որ գրավիչ է: Ունի նույնպես գեղեցիկ էջեր, մարդկային տիպերը որսալու եւ նկարագրելու դիտողական շնորհ, իսկ մտքի անակնկալ փայլատակումներ կամ խորացումներ քիչ կան: Մինչեւ հիմա՝ այս երկրորդ հատորի կեսը, ամենաուժեղ տպավորությունն ստացա դեռի Լոնդոն իր ծովային ճամփորդության նկարագրությունից, որ իսկապես հոյակապ է, հնչում է բուն իսկ վագներյան երաժշտության նման, չնայած իր պատմողական հանգիստ եղանակին: Մի խոսքով, սա էլ մեծ հաճույքով եմ կարդում, ինչպես Բեղիոզի գիրքը ավելի երիտասարդ օրերիս: Երկու դեպքում էլ այս հանճարեղ կոմպոզիտորները ոչ միայն իրենց երաժշտությամբ, այլեւ գրական ստեղծագործությամբ հաղորդակից են դարձնում իրենց մեծ անհատականությանը, իրենց աշխարհին:

19 մայիս- Վաղ առավոտյան իմ սովորական մեկժամյա պտույտին գնում եմ դիմացի սարալանջը: Այս օրերին ավելի երկար մնում եմ այնտեղ, ոչ թե գրիպից հետո կազդուրվելու պահանջով, ինչպես մի շաբաթ առաջ, այլ որովհետեւ բնությունը լրիվ ծաղկած՝ շատ գեղեցիկ է առավոտյան արեւի լույսով: Ակացիաներից ողկույզ-ողկույզ կախվել են ծաղիկները՝ սպիտակ կանթեղների նման, որ իրենց զգլխիչ բույրն են ճառագում: Բացվել են մասրենիները՝ ճերմակ-ճերմակ եւ նուրբ վարդագույն: Կակաչների վառ կարմիր բաժակները այստեղայնտեղ՝ կանաչ խոտի եւ այլ դեղին, ճերմակ, մանուշակագույն կամ նուրբ կապտավուն ծաղիկների մեջ: Եվ թռչունների ուրախ ճռվողյունը ամեն կողմից: Եվ լռություն, այսինքն ոչ մի մարդկային անտարբեր ձայն ու դեմք: Միայն հեռու ներքեւից՝ զարթնող քաղաքի դեռ տարտամ մրմունջը: Ջորի վերեւում հրվանդանի նման մի ժայռ կա, որի վրա մի պահ նստում եմ՝ վեր ու վար կածաններով քայլելուց հետո, դիտում եմ շուրջս կամ հետս բերած բանաստեղծական գիրք եմ թերթում, լինի Մեծարենց կամ հին հնդկական Ռիգվեդա՝ մի քանի ընտիր էջ վերընթերցելու, ըմբոշխնումով: Այսօր հետս տարել եմ Բո Ցզյուիին:

Դեռ հիսունական թվականների սկզբից, երբ ռուսերեն թարգմանությամբ լույս էին տեսնում նրանց հատընտիրները՝ փոքրաչափ կոկիկ գրքույկներ, իսկույն սիրեցի Թան դարաշրջանի չին մեծ բանաստեղծներին՝ Լի Բո, Վան Վեյ, Դու Ֆու, Բո Ցզյուի: Ուրույն աշխարհ, հենց հայերեն դիպուկ բառով՝ չնաշխարհիկ: Անմիջական տպավորությունս այն է (տեսաբանականը չգիտեմ), որ նրանք բոլորն էլ մի յուրահատուկ ընդհանրություն ունեն. ազգային ոգին՝ բնորոշ գծերով, ավանդական կրկնվող մոտիվներ՝ բնություն, բարեկամություն, հայրենի տուն, բամբուկ եւ ուռենի, գեղ ու նավակ, ճամփորդություն, հանդիպումներ ու հրաժեշտներ, գինի խմել ու բանաստեղծություն երգել, կարեկցել ժողովրդի տառապանքներին, չարիքը ծաղկել, սեփական տվայտանքներն արտահայտել, քունքերը պատող «եղյամից» թախծել եւ այլն: Եվ մի աննման արվեստ՝ տողերի միջեւ ասես լուռ անցումներով, որոնք տրամադրություն եւ խոհ են թելադրում: Այս բանաստեղծական արվեստն աչքիդ առաջ է բերում իրեն հարազատ չինական նկարչությունը, ուր ոճավորված մի երկու ծառի, մի երկու լեռնանման բարձունքի, անկյունում տնանման կամ տաճարանման մի կառույցի, տաղավարի եւ այլ նմանատիպ պատկերների միջեւ համաչափված «դատարկություններ» են մնում, որոնք ակներեւորեն թելադրում են մի ձոր, կամ մշուշ, կամ ջրային տարածություն, կամ մի բակ եւ այլն՝ համապատասխան մթնոլորտով:

Այս բանաստեղծներից յուրաքանչյուրը, սակայն, բոլորին էլ բնորոշ այդ ընդհանրությամբ հանդերձ, ունի իր ուրույն դեմքը բնականաբար, որ երեւում է այնքան հեռավոր չինարենից թարգմանության մեջ անգամ, իսկ պատկերացնում եմ՝ ինչպես կերեւար բնագրում: Յուրաքանչյուրին հատուկ է իր զգացումների ու խոհերի ոլորտը, այսպես ասեմ՝ իր «տարածական» ընդգրկումը: Լի Բոն, օրինակ, ավելի հզոր ու վսեմաշունչ է, նրա ընդգրկումը հասնում է տիեզերականության: Շշմեցուցիչ է այն հերթվածը, ուր նա գիշերային լռության ու ծաղիկների մեջ սկսում է խմել, մեն-մենակ, բայց իր «բաժակակիցներն» է դարձնում լիալուսինն ու իր սեփական սվերը, խնջույք է անում երգելով ու պարելով նրանց հետ, մինչեւ հարբում են ու «բաժանվում» իրարից, որից հետո նա իր մենու-

Բո Ցզյուի. չին բանաստեղծ (772-846):

թյամբ պիտի դեռ կյանքում քարշ գա մինչեւ «այն» հանդիպումը ասպերի մեջ Ծիր Կաթինի մոտ: Եվ կամ այն հերթվածը, ուր բարեկամի հետ, լուռի տակ, անցյալի վիշտերը մոռանալով, խրախճանում են գինի ըմպելով ու մտերմական զրույցով, մինչեւ հոգնում են ու երկիրը թվում է անկողին, երկինքը՝ ծածկոց:

Առավելաբար սիրեցի Բո Ցզյուիին, որ VIII դարում ապրած Լի Բոյից, Դու Ֆուից եւ Վան Վեյից հետո է ապրել ու ստեղծագործել (772-846), եղել է նաեւ արքունի պաշտոնյա, գավառի կառավարիչ: Նա էլ, ինչպես Լի Բոն եւ մանավանդ Դու Ֆուն, կարեկից է ժողովրդի տառապանքներին, ավելի կոնկրետ, իրապես նկարագրելով դրանք ու ծաղկելով չարաշահումներն ու անարդարությունները իր երկրաշունչ հերթվածներում, նույնիսկ աչքի առնելով, որ արքունի պաշտոնակիցները դժգոհում են իրենից, զրպարտում, դավեր են լարում իր դեմ: Ինձ հատկապես գրավում են, սակայն, Բո Ցզյուիի քնարական քառյակները, ուր նրա ընդգրկման «տարածը» ավելի մարդկային հոգին է՝ իր զգացական ու խոհական վիճակներով, որոնք նա էլ հաճախ բնության պատկերների միջոցով է արտահայտում: Նկատելի է, որ ընդհանրապես չինական բանաստեղծությանը հատուկ այդ պատկերները ոչ թե կարծես «բանաստեղծական պատկերներ» են, ըստ մեր ընկալման, այլ բնության մի «վիճակի» նշումը սոսկ՝ խիստ լակոնական, դիպուկ եւ կայուն,- ծաղկած դեղձենի, մաքրաբույր լոտոս, սոճիների սոսափյուն, անցնող ամպ, կապույտ լեռներ, փայլող լուսին, ծղրիդի երգ, աշնանային անձրեւ, կանաչ խոտի վրա եղյամ եւ այլ բազում երանգներ, որոնք, թվում է, ավելի խորհրդանշական դեր են կատարում: Իսկ Բո Ցզյուիի պարզ, մաքուր, ստատուկ քառյակներում ավելի «շարժուն» են բնության այդ «վիճակներն» էլ, այսինքն ավելի սերտորեն միահյուսվում են մարդկային հոգու շարժումներին, հենց իր՝ բանաստեղծի առավելաբար թախծալի հոգեվիճակներին: Ակներեւորեն ավելի «հոգեբան» է այս բանաստեղծը եւ «փիլիսոփայող»: Ամեն մի քառյակ, որ ամբողջա-

Ռոբերտ Շուման (1810-1856), գերմանացի կոմպոզիտոր, դաշնակահար:

կան է իր ստեղծած զգացա-խոհական տրամադրությամբ, սովորաբար հանգում է մի այնպիսի տողի, որով այդ խորացող տրամադրությունն արձակվում է հոգուդ մեջ հուզական ու իմացական արձագանքներով, ու թեկուզ արտահայտված հոգեվիճակը լինի թախծալի՝ արձագանքները հարուցում են կեցության, կյանքի, ապրելու տրտում երանության զգացումը: Օրինակ, կարոտն է զգում իր այն բարեկամի, որի հետ միայն կարող է վերսին երգել հոյակապ տողերն այն բանաստեղծական գրքից, որը միասին են բացել ժամանակին, եւ անձրեւի տակ գնում է նրա մոտ. այդ բարեկամական կարոտի ուժգնությունն ու տրտում հմայքն առավել եւս զգում ես, ասես ինքդ էլ նման մի կարոտի ընդանք ունենալով հոգուդ արձագանքներում, երբ, քառյակի ամեն մի բառը դանդաղ ըմբոշխնումով ընկալելուց հետո, հասնում ես վերջին տողին, ուր ասում է. «Ջրափոսերի մեջ կոխելով, ցեխերի մեջ քարշ գալով ահա եկա քեզ մոտ»: Կամ այն քառյակը, որ վերնագրված է՝ «Թողնում եմ ծաղիկները»: Ծաղիկների մեջ հետս եմ ապրում, ասում է, առանց ավելորդ դժվար հոգսերի. կրկին գարուն է գալիս, այսպիսի հին գարունը ծանոթ է ինձ, գիտեմ. իսկ նա, ով մյուս տարի իմ փոխարեն կառավարելու է այստեղ... վաս չի լինի, եթե նա էլ, ինձ նման, սիրի ծաղիկները...

Խորհրդաստորեն ընդգրկուն է, մանավանդ, նրա այն փիլիսոփայական հրաշալի հերթվածը, ուր ասում է, թե օրխիդեա ծաղիկն է տնկել, բայց չի տնկել մոլախոտ, երկուսը միասին են աճում՝ արմատները միահյուսված, մեկը բուրավետ, մյուսը գարշահոտ, ուզում է քաղհանել մոլախոտը, վախենում է ծաղիկին վնասել, ուզում է ջրել ծաղիկը, վախենում է մոլախոտն էլ ջրած լինել, մտածմունքի մեջ է ընկնում՝ մենակ դժվար է լուծում գտնելը. խորհուրդ է հարցնում բարեկամդ իմ, չե՞ ասի ինչպե՞ս վարվեմ այս դժբախտության մեջ...

Ստորագրություններ

Ճակատագրին դեմ գնալ...

էջ 8-ից

Լուրը ամբողջ աշխարհում ցրված հայության կողմե ընդունվեց ամենամեծ ոգեւորությամբ: Հարյուր հազարավոր հայեր խնդում էին, որ ըլլան առաջին հայրենիք մեկնողներուն մեջ: Ամեն տեղ իրարանցում: Մարդիկ անմիջաբես ուզում էին իրենց ունեցվածքը հավաքել, փակել իրենց գործերը եւ մեծ եռանդով պատրաստվում էին մեկ ոտք շուտ հայրենիքին ճամփան բռնելու:

Հիշելով շատ բաներ մեզ՝ հայերուս հետ կապված, մտածում էի, որ արդյո՞ք սխալ չէ ճակատագրին դեմ դուրս գալ: Եթե դուն ճակատագրի դաժան կարգադրությամբ վռնդվել ես քո հայրենիքեն, կողոպտվել, բռնաբարվել, սպանվել, արդեն ծնվել ես օտարության մեջ, ապրում ես կյանքդ, ուզում ես վերադառնալ քու երկիրդ. բա ճակատագի՞րդ:

1947 թվականին 13000 հայեր արձանագրվել էին եւ պատրաստվում էին մեկնել հայրենիք, մինչդեռ հազիվ 4000 հայեր երկու նավով թողել էին Եգիպտոսը, երբ հայտարարվեցավ, որ հայրենադարձությունը չի շարունակվելու, դադարեցվում է: Կրնա՞ք երեւակայել կամ, ավելի ճիշտ, չեմ կրնար, մարդկանց հիասթափությունը, հուսահատությունը: Թեեւ արդեն սկսել էին նամակներ հասնիլ, որ համաձայնեցված նշաններով մարդիկ հասկացնում էին, որ կարիք չկա աճապարել հայրենիք գալու կամ ընդհանրապես պետք է չիքեր անգամ այդ մասին:

Ձեզ եմ հարցնում, տիկիններ եւ պարոններ, լավ, ինչո՞ւ այսքան դժբախտություններ հետապնդում են հայերին: Տո, սար սովետական կառավարություն, ինչ էիր ուզում հայերից: Ուզում էիր շարունակե՞լ թուրքերու սկսած գործը եւ մի քանի հարյուր հազար ալ դուն ոչնչացնեիր քու հողիդ վրա, սիբիրներ ախոռելով: 1915 թվականի եղեռնից հազիվ պրծած, հազիվ վերքերը սկսել էին սպիանալ, Արեւմտահայաստանի մնացորդը այս անգամ էլ իր հողին վրա էր ենթարկվում ցեղասպանության: Սովետական իշխանությունը պարզ հասկացնում էր արեւմտահայերուն, սփյուռքահայերուն, որ իրենք Հայաստան հայրենիքի մեջ տեղ չունին: Ավելի ուշ, 60-ական թվականներուն ստեղծվում էր Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն՝ խաղալով օտարության մեջ ապրող հայերու անուղղելի հայրենասիրական մղումների հետ: Դա էլ սարության շարունակությունն էր: Անդունդը, որ բացվել էր Խ. Հայաստանի եւ սփյուռքահայության մեջ այնքան լայն էր, որ այդ անդունդին վրա կամուրջ կառուցելու կարողություն չուներ Խ. Հայաստանը, ավելի ճիշտ՝ նպատակ չուներ: Եթե պետություն մը իր հպատակներուն վրա թքած ուներ, պիտի մտահոգվե՞ր եւ սիրե՞ր սփյուռքահայերը: Խ. Հայաստանում Սփյուռքը անկեղծ սիրողներ կային, որոնք տասնյակ լիքը ճամպրուկներով վերադառնում էին սփյուռքում կեղծ հայրենասիրությունը որպես ապրանք թանկ գներով վաճառելուց հետո: Հայրենադարձությունը հայու հոգեւոր կյանքի ամենավսեմ, հայրենիքի հանդեպ ամենաանկեղծ եւ անշահախնդիր դրսեւորում էր: Դա ֆիզիկական վիճակ չէր, դա զուտ հոգեկան ընթացք մըն էր, որ 100.000 հայերը իբրեւ սկիզբ մատուցում էին հայրենիքին: Խ. Հայաստանը սպանեց հայկականությունը սփյուռքահայերու մեջ եւ վերջնականապես թաղեց հայրենադարձությունը: Մեռածը չի ողջնար: Հայրենադարձությա՞ն եւ սպասում, էի, որեւ ուզե՞ք սպասեցե՞ք: Ձեր երազին մեջ անգամ չեք տեսնելու:

Վերադառնամ Սփյուռքին: 1915 թվականից, երբ իրենց հողերուն վրա չսպանված հայերը հայտնվեցին օտար երկրներու մեջ՝ օտար լեզու, օտար սովորույթներ: Հայության համար սկսում է փորձության եւ քննության բռնելու մի շրջան, որը պահանջում էր ֆիզիկական եւ բարոյական արժեքներու պաշար, ժառանգականություն՝ հաղթական դուրս գալու համար իր գոյությունը պաշտպանելու գոյակռվին մեջ: Կողոպտված իր կուսական հարստութենեն, գրեթե մերկ, հայերը հայտնվեցին աշխարհի տարբեր երկրներու մեջ՝ հաճախ իբրեւ նորեկներ եւ գաղթականներ, արժանանալով արհամարհանքի, նույնիսկ՝ թշնամանքի: «Կեղտոտ հայեր» - Ֆրանսիա, «Սոված հայեր» - Միացյալ Նահանգներ: Բայց հպարտությամբ կարող ենք հայտարարել, որ հայ մարդը արժանապատվությամբ ապրեցավ եւ ոչ միայն կրցավ իր գոյությունը պահպանել օտարին հետ մրցակցության մեջ, այլեւ հաճախ հաղթող դուրս եկավ: Ոչ երկար ժամանակ հետո հայերը նախանձելի դիրքերու հասան եւ սիրելի օտարներուն իրենց հարգանքել: Անշուշտ, եթե մի օր գրվի սփյուռքի հայության պատմությունը, մենք այնտեղ պիտի գտնենք հպարտանալու շատ-շատ օրինակներ: Կուզեմ հիշել այստեղ օրինակ մը. 1965 թվին, 1915 թվականի ցեղասպանության հիսնամյակին առթիվ, երբ Կալիֆոռնիայի Մոնթեբելլո քաղաքում ամերիկահայերը թույլտվություն ստացան եղեռնի զոհերու հիշատակին հուշարձան մը կառուցելու, հուշարձանի բացման հանդիսությունը նախագահող՝ նահանգի գլխավոր դատախազը իր ելույթում կնշե, որ հայերը եթե արժանացան ամերիկյան հողի վրա հուշարձան բարձրացնելու, ինչ որ օրենքով չի թույլատրվում օտարներուն, բայց հայերը նվաճել են այդ պատիվը, որովհետեւ, հայտարարում է դատախազը, վերջին 20 տարիներու ընթացքին Մ. Նահանգներու ամենամեծ նահանգին մեջ ոչ մի հայ դատարան չի բերված հանցագործության համար:

Երեւի այս պատմությունը անպայման չհուզի մեր ընթերցողներին, որովհետեւ վերջին 10 տարվա ընթացքին հազարավոր հայեր, նույնիսկ խոսում են 10000-ի եւ ավելիի մասին, մանավանդ մեր հայաստանցի հայրենակիցները իրենց «պատվավոր» տեղը ունեն Կալիֆոռնիայի բանտերուն մեջ: Ինչ կա որ: Երբ 1962-ին ներգաղթեցի Հայաստան, հաճախ ինձ ցույց էին տալիս մարդիկ, որոնց մասին խոսում էին երկյուղածությամբ: Գիտե՞ս ինչ տղա է, օ՜, բանս նստած կամ «օրինական» գող: Այն ժամանակ զարմանում էի եւ վախենում: Կուզեմ ուրիշ օրինակ մըն ալ հիշել: Սա էլ բացառիկ է: Երբ յոթանասունական թվականներուն հայերը սկսեցին թուրք դեսպաններ սպանել եւ թուրքական կառավարությունը կասաղությամբ ասամներն էր կրճտում, մի հայ ժուռնալիստ՝ Մ. Նահանգներից, Էդի Պողոսյան, ունկնդրություն է խնդրում այդ ժամանակվա Հյուսիսային Կիպրոսը նվաճող տխրահռչակ էջեւիթեն՝ Թուրքիո վարչապետեն եւ անմիջապես հրավեր է ստանում ներկայանալու: Այդ ժամանակ Հայաստանի մամուլում ոչ մի տեղ այդ մասին խոսք չեղավ: Էդի Պողոսյանը պատմում է, որ էջեւիթը առաջին անգամ առաջ է քաշում այն միտքը, որ 1915 թվականի Օսմանյան պետությունում կատարված դեպքերը քաղաքացիներու շրջանում քննարկվելու հարց չէ, ճիշտը այն է, որ պատմաբանները զբաղվեն այդ հարցերով եւ իրենց եզրակացությունները ներկայացնեն: Հետո, ավելացնում է էջեւիթը, ինքը լավ ծանոթ է հայերուն, գիտի հայերուն արժանիքները եւ կարողությունները, ունի հայ ծանոթներ, եւ ասում, որ նույնիսկ, երբ ուսանող էր Մ. Նահանգներում, ինքը գնումներ էր անում մի հայ նպարավաճառ կնոջից: Ինքը հայ ծանոթներ է ունեցել: Հիմա, ասում է, ես գիտեմ, որ ուր որ հայեր կան աշխարհի վրա, բոլորն էլ հաջողություններու մեջ են: Էհ, ինչ են ուզում հայերը, հայերուն ուզածը ինչ է: Մի քանի տասնամյակ էլ որ հայերը շարունակեն օտարության մեջ լավ վիճակի մեջ ապրել, այլեւս ոչ մի հայ չի հեռանա իր ապրած երկրից, ոչ մի պահանջատիրություն չի մնա: Հետո, հարցնում է՝ ո՞ւմ հետ է գնալու խոսակցությունները, հայերը ապրում են տարբեր երկրներում, կան զանազան կուսակցություններ, կարծեմ հիմա էլ կա «Հայ դաս» եւ «Հայկական համագումար» պահանջատեր կազմակերպություններ: Այդ ժամանակվա Խ. Հայաստանի կառավարությունը իրավունք չուներ որեւէ օտար երկրի հետ հարաբերություններ մշակելու: Իրենք մեր պատմությունը մեզանից լավ գիտեն, եթե սրանք իրար հետ ամենաոխերիմ թշնամիներուն պես են վարվում, սրանց ինչից վախենանք: Թեեւ իրենք մեզնից լավ գիտեն, եթե ասում են, որ «եթե նույնիսկ թշնամիդ մրջյուն է, էլի զգուշացիր»: Մենք է, որ ոչ ոքից չենք վախենում:

Հայերը սփյուռքի մեջ 90 տարվա ընթացքին իսկապես հասան նյութական, բարոյական եւ մտավորական մեծ նվաճումներու՝ դրամ, հարստություն, կրթություն, արվեստ: Չկա մի բնագավառ, ուր հայերը մոտեցած չըլլան բարձրագույն դիրքերու իրենց ապրած երկրներուն մեջ, որոնց նաեւ հպատակներն ու քաղաքացիներն են: Այս բոլոր հաջողությունները հիմնականում ապացույցն է հայ մարդուն բնատուր հանճարին: Բայց դժբախտաբար հայ մարդը հակառակ թուրքերեն ստացած մահացու հարվածին, հակառակ իր հաջողություններուն եւ լավ անունին, ունի իր վրա սեւ բիծ մը, որ կեղտ է անշուշտ մեր մաքուր անունին վրա: Կարող է օտարները չիմանան, թեեւ անոնք, որոնք, մանավանդ, մեր թշնամիները, մեզի հետեւում են, գիտեն, որ 90 տարի օտարության մեջ հայ գաղութները պառակտված մնացին, եւ, մենք մեզ չխաբենք, շարունակում ենք պառակտված մնալ: Սփյուռքում ստեղծված արժեքները, որ թվում էր որ հայ ժողովուրդին հարստությունն են, դառնում են գրեթե ոչինչ: Հայկականության համար աշխատելով միաժամանակ երկուքի բաժանված եկեղեցիներով, ակումբներով, դպրոցներով, մենք մեզ ենք խաբում իբրեւ հայ: 90 տարի սփյուռքը կեղտոտված է, ինչպես օդն է կեղտոտվում: Կեղտոտված է կուսակցական անօգուտ թշնամություններով: Զզված հայերու մեծ մասը, որոնք կուսակցական չեն, ավելի հեշտությամբ են հայկականությունից հեռանում: Սփյուռքը ծերանում է, սփյուռքը 90 տարեկան է: Ծերության վերջը մահն է: Մեկ միլիոն կամ երկու միլիոն հայերու հիվանդ (հայրենիքը լողի) արյունը չի կարող երիտասարդացնել օրեցօր օտարացող ծերին: Ասեն մըն ալ հայերը կմնան հայ՝ անգլիախոս հայ, ռուսախոս հայ, ֆրանսախոս հայ, հունախոս հայ, արաբախոս հայ, պարսկախոս հայ եւ վերջ: Հայրենիքի մեջ ալ «մեկ ազգ, մեկ մշակույթ» բառալե առաջ սփյուռքի մեջ 90 տարիե ի վեր երկու հայ իրարու հետ կողք կողքի չեկան՝ հիշելու, որ իրենք նույն հայ ազգին են պատկանում: Նույն մշակույթը ունեն, սակայն չկրցան մի բաժակ սուրճ կամ գարեջուր խմել իրարու հետ, բայց պատրաստ են իրարու արյուն խմելու:



Մեկ ազգ, մեկ մշակույթ. ավելի ճիշտ չէ՞ ըսեմ՝ «մեկ ազգ, մեկ ամերիկյան մշակույթ»: Հեռատացույցից երգում է աղջիկը, հարցնում եմ կնոջս. Մարի, ականջս ի՞նչ մը ծանրացած է, հայերե՞ն է երգում, թե՞ ուրիշ լեզու է: Այս է եղածը: Գալով մեր նորանկախ հայրենիքին, ով որ հայրենիքում ապրում է, տեսնում է, գիտե, իսկ դուրսեն եկողին համար ալ օրը օրի ավելի կատարյալ սրճարաններ, ռեստորաններ, խաղատներ, հանրատներ են բացվում: Օտար բոզերու համին առել են, հիմա հայ բոզերու համն ալ թող նային: Կյանքը մեկ անգամ է տրվում մարդուն: Ոչինչ, նոր աշխատատեղեր պետք են, չէ՞: Այս երկրին վրա նստած է սովետական հրեավոր ռեժիմին արյունը եւ անեծքը միլիոնավոր մարդկանց: Ճիշտ են ասում, 15 տարին շատ ի՞նչ է պետություն կառուցելու համար: Շատ ավելի ի՞նչ է, որպեսզի անցյալեն մեզի հետ գոյատեւող այդ «մեսասազներեն» մարդի հայկականությունը: Եթե կարողանա:

Կարծում էի, որ ավարտել եմ ըսելիս, բայց երեւի այդքան շուտ չի ավարտվի հայկականության մասին խոսքը: Երբ երիտասարդ էի, գիտեի անշուշտ, ինչ խստանելի աղետ էր եկել մեր ժողովուրդի գլխին: Մեծ հորս՝ Սարգիս Եսայանի լուսանկարը մեր տանը կախված էր: Փառավոր մի տղամարդ՝ ծնված Այնթաբ քաղաքում եւ խողխողված մարդասպաններու ձեռքերով Տեր-Զորում: Մինակը չէր մեր ընտանիքեն, ուրիշներ ալ զոհվեցան, մի մասն ալ փրկվեց, ապրելով եւ դիմանալով ախորժ դժոխքին: Բայց ես գիտեի, որ Խ. Միությունում կա Հայաստան, Երեւան, Էջմիածին, Արարատ, Սեւան: Այնտեղ ապրում են հայեր եւ երկիր ունին: Ուրեմն անպայման պետք էր թողնել օտար երկրները եւ հասնիլ Հայաստան: Վերջը այդպես ալ եղավ: Ես իմ հայրենիքիս մեջ եմ, ոտքիս տակի հողը իմ հայրենիքն է: Բայց երբ առաջին անգամ, մի երեսուն տարի առաջ, բախտը ունեցա Անիի դիմաց մոտենալ պետական սահմանին եւ աշտարակի վրայից դիտել, նոր միայն հասկացա, որ ինչու սովետական իշխանությունը թույլ չէր տալիս, որ հայերը մոտենան սահմանի փշալարերուն: Որովհետեւ ես տեսա, որ Հայաստան ըսվածը՝ «մեր հայրենիքը» ավելի մեծ է, քան 29 հազար քառակուսի կիլոմետրը, եւ հրեային էր, որ ես իրավունք չունեի Ախուրյանը անցնելու եւ Անիի պարիսպներից ներս մտնելու՝ հայոց մայրաքաղաքը, որուն այնքան մոտեցել էի: «Արմենիա» հյուրանոցից Մինիստրներու սովետ:

Այն, ինչ որ թուրքերը արեցին Արեւմտահայաստանում, մեկ խոսքով՝ մարդկության պատմության ամենա... բառը չեմ գտնում որակելու, ոճիրն է: Իմ սիրտս ալ լեցուն էր թուրքերուն հանդեպ վախով, վրեժի թույնով, անկարողությունից ստորացած էի: Բայց ես ուզում եմ ապրիլ իմ երկրիս մեջ, ստեղծագործել, մշակել երկիրս, գեղեցկացնել, հարստացնել եւ, մանավանդ, բարիդրացիական հարաբերությամբ՝ հարեւան երկրներու հետ: Աշխարհում շատ երկրներու հետ հարաբերություններու մեջ ենք, բայց չէ՞ որ ինձ ամենամոտ երկիրը Թուրքիան է: Ամերիկայում հայեր շատ կան, Ֆրանսիայի մեջ հայեր շատ կան, Ռուսաստանում, Պարսկաստանում, բայց ո՛չ Ամերիկան, ո՛չ Ռուսաստանը, ո՛չ Ֆրանսիան Հայաստան չեն, որտեղ ալ որ այնտեղ շատ հայկական «լոբբի» կամ չեմ գիտեր ինչ զահրումար կա: Ժամանակները փոխվում են, կյանքը փոխվում է: Մեր աչքի առաջ չէ՞ր, որ աշխարհի ամենահզոր, սարսափազդու երկիրը 70 տարի միլիոնավոր մարդկանց աշխատցնելով, միլիոնավոր սարուկներ փորում էին, հա փորում հին աշխարհը, որպեսզի հասնեին «սա հին աշխարհի մինչեւ հիմերը», եւ մի օր էլ պարզվեց, որ ինքը ընդհանրապես հիմք չունի, իր առածը եղել է պարզապես իր սեփական գերեզմանը փորելը: Որեւէ մեկը որեւէ մեկից հաշիվ պահանջե՞ց: Եվ մենք՝ հայերս, տակավին ապրում ենք այն հույսերով, որ ուրիշները մեզի լավություն կանեն, այսինքն՝ հավատում ենք «արդարության» հայտնվելուն: Չհավատա՞նք: Չեմ գիտեր: Ավելի ճիշտ չէ՞ր ըլլար, որ մենք ավելի շատ մտածենք մեր տունը կարգի բերելու մասին: Սովետական ռեժիմը բանն էր՝ «երկաթե վարագույրով»: Հիմա ազատվեցանք այդ բանտեն: Ազատ ենք, բայց երբ որ տեսանք, որ ազատ ենք, երեւի մտածեցինք, որ ամեն մարդ, ես ալ իրենց հետ միասին, իրավունք ունինք անելու ինչ որ ուզենանք, ինչ որ մեր խելքին փչե: Երկրի մը քաղաքացիները եթե այդպես կարող են դատել ազատության մասին, երկրի ղեկավարները կդառնան իսկական գողեր, մարդասպաններ, խաբեբաներ: Լավ չեմ հասկնար քաղաքականութենե եւ պետական գործերեն բան չեմ գիտեր, ինչ օգուտ դատողություններ անելուց, եթե չես կարող առաջարկություններ ընել: Բայց չեմ էլ կարող անտարբեր մնալ որոշ բաներու հանդեպ, ավելի ճիշտ՝ չուրախանալ կամ չտխրիլ: Չեմ կարող չմասնակցել իմ հայրենակիցներու կյանքին:

Վերջերս դիտում էի, թե ինչպես մի բուք «քաղաքական գործիչ» ղեկավար հեռատացույցից մի հարցազրույցի ժամանակ ինքնագոհ, ճարպոտ փորը տնկած, պատմում էր, թե իր օտար կոլեգաները ինչպես իրեն նախանձում են, որ մենք սփյուռք ունենք: Ինչ հարստություն, որքան բախտավոր ժողովուրդ ենք եղել եւ չենք իմացել: Իսկ նրանք սփյուռք չունեն: Այսպես ինքնամոռաց բլբլացնում էր մեր մանկլավիկը: Ես աղբած լսում եւ մտածում էի. «Չերթանք Թալեաթ փաշային գերեզմանին վրա մոմ չվառենք, որ հայերուս այսքան մեծ լավություն է արել՝ սփռելով հայերը աշխարհով մեկ... Չե՞ս ասի. «Ողբամ զքեզ, հայոց աշխարհ...»: Ցավզակությունն ալ չափ ու սահման պիտի ունենա: Տխրելու պատճառներ շատ կան:

Մի լուսանկար կա, որ պատկերված է մի գեղեցիկ տղամարդ, հասուն տարիքի, գլուղացու հագուստով, ձիու վրա, ձեռքին հրացան՝ ազդրին հենած: Նայվածքը եւ ամբողջ կերպարը ինքնավստահ, բայց ոչ մի ցուցադրականություն: Մարդը հոն է իր ամբողջ ունեցածովը, որովհետեւ ցուցադրելու ուրիշ բան չունի՝ ընդամենը ինքը, իր ձին, իր հրացանը՝ փամփշտակալով: Բայց գիտեմ, որ ունի մի բան, որ լուսանկարել կարելի չէ, ունի ամենամեծ հայկական սիրտը, որ լեցուն է սիրով եւ քաջությամբ: Հայերը ուրիշ ոչ մեկին, միայն Կոմիտաս վարդապետին այնպես մեծ սիրով են սիրել, սիրում են եւ սիրելու են: 20-րդ դարում շատ-շատ նշանավոր եւ արժեքավոր մարդկանց մեջ ինքն է այդ պարզ մարդը, որ պաշտելի դարձավ հայերուս: Ուրիշներ շատ գովելի եւ անմոռանալի գործեր արել են, բայց ինքն է, որ մեզ հիշեցրեց, որ ամենադաժան բռնապետության տակ ալ հայը պետք չէ մոռնա իր արժանապատվության մասին: Ժողովուրդը գինքն հռչակեց «Հայրենիքի տեր ու պաշտպան»: Ան իր ձեռքեն եկածը ըրավ իր ժողովուրդին համար եւ հուսահատ երբ տեսավ, որ գալու են երբայրասպան կոիվները եւ ամեն ինչ կորելու է «արյան ծովի» մեջ, զենքը հանձնեց Ամենայն հայոց հայրապետին ու թողեց գնաց հայրենիքեն օտարության մեջ մահանալու: Այդ մարդուն արձանը, հուշարձանը Երեւանում, մայրաքաղաքի ամենաաչքառու մի տեղ, նոր կաթողիկեի հարեւանությամբ դրվեց: Եթե չասեն ում արձանն է, պիտի կարծվի, որ կրկեսի ակրոբատի արձան է:

Տես էջ 9

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Երաժշտություն

Հիասքանչ եւ անմոռաց Տիգրան Լեւոնյանը

ՎԱՐՄԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Էր այր մի գեղեցիկ, որ Տիգրան կոչեր: Գեղեցիկ էր նա ու գեղեցիկ էին նրա աչքերը, ձեւերը, մտքերը, գործերը», այսպես կգրեր հնօրյա պատմիչը, իսկ մենք, որ նրա կողքին ենք աղրել, շարունակ հիացել ու լիացել նրանով եւ հիմա նրա կորստի ցավը գնալով ավելի անփարատ է դառնում, մենք ի՞նչ կգրեինք... Չէ՞ որ մեր աչքի առջեւ հառնեց այդ հրաշամանուկը՝ 1954 թ. հանրապետական թատերական սուլգաստեսից եւ, իր բեմական վառ ու առինքնող անհատականությամբ, անմիջապես դարձավ թատերական աշխարհի ուշադրության առարկան: Երկու տարի անց հանդիպեց իր երազների թագուհուն՝ հանրության կուռքը դարձած Գոհար Գասպարյանին եւ այնուհետեւ նրանք միասին դարձան մեր երազանքների ու խոյանքների դրոշակակիրը, հոգեւոր նեցուկ եղան մեզ եւ մեր հոգիները տարան շողափայլ հեռուները: Նրանք փառք ու պատիվ բերին մեզ հեռուներից, բազմապատկեցին մեր ու օտարների աչքում հայի շնորհները: Նրանք «աստղեր իջեցրին երկնից» ու իրենք էլ աստղ դարձան, շարունակ նրբացնելով մեր հոգին եւ հղկելով ճաշակը՝ մարդկության ստեղծած լավագույնի սեփական արարչությամբ: Եվ կարեւորագույնը. նրանք դարձան մեր նորածին պետության առաջին մունետիկները՝ օտար երկնքների տակ, լինելով հայ մտքի ու տաղանդի շողարձակումները, բարու եւ գեղեցիկի, համամարդկայինի առաքելության անկորնչելի հաստատումը: Սա էր նրանց՝ ճշմարիտ արվեստագետների բոլոր ոգեշնչումների ակունքն ու խթանը: Անհնար էր զատել երկուսին, քանզի նրանք իրենց կյանքով ու արարումով մի ամբողջություն դարձան, այնքան հզորացան, որ թվում էր թե գերմարդ են... Մենք տեսնում էինք նրանց արարած արտաստվոր մտքի, զգացումի անհատներին, եւ մեր սիրտը ուռչում էր հպարտությունից... Օթելլո եւ Դեզդեմոնա, Անուշ եւ Սարո, Վիոլետա եւ Ալֆրեդ, Օլիմպիա եւ Տիրիթ, Նորմա եւ Պոլիոն, Լյուչիա եւ Էդգար, ի՞նչ աշխարհ, ի՞նչ ճակատագրեր... Գոհարին՝ Ջուլիետ եւ Ռոզին, Լաֆմե եւ Ֆիլդա, Տիգրանին՝ Կավարադոսի եւ Դոն Կարլոս, Գերման, Կանիո եւ Դոն Խոզե: Հարա միջավայրի գույներով, միգանսցենի իմաստավոր լուծումով, զգացումի բնականությամբ ու խորքով առանձնացող նրա բեմադրությունն՝ը, որոնցից միայն «Անուշ»-ն ու «Պողիկսոսը» բավական են՝ բեմադրիչի երաժշտական եւ գեղանկարչական լուծումների թափն ու մասշտաբները ըմբռնելու համար... Տիգրանն ամբողջ կյանքում օգաստ էր փնտրում եւ այն ամենն, ինչ հնարամտում էր՝ օգաստ էր մե՛զ համար...

... Բեյրութում նրանց կոչում էին գեղեցիկների ընտանիք: Գեղեցկուհի Շաֆեն հրաշալի ձայն ուներ, ու մասնագետներն օպերային երգչուհու առագա էին գուշակում, բայց երեխաները փոքր էին. առայժմ նրանց պիտի խնամեր, հոգար, իսկ նրանց օրորոցային համաշխարհային դասականներն էին, օպերային հերոսուհիների խինդն ու տվայտանքը: Այսպես տան փոքրիկ գեղեցկուհին՝ Աստղիկը եւ կրտսեր եղբայրը՝ Տիգրանը մանկական գեղգեղանքներում հնչյունի ու մեղեդու ընտրյալներին էին հաղորդվում: Մանչուկը վաղ սովորեց կիթառ նվագել, իսկ նրա պարային հակումներն իսկույն նկատեց մի օտարազգի հայտնի պարուսույց եւ նրան տարավ իր խումբը: Մարդիկ մինչեւ օրս հիշում են զարմանահրաշ տղեկի պարերը, իսկ հատկապես «Ցեչեոտկան»: Պատահական չէր, որ երբ ընտանիքը որոշեց հայրենիք գնալ՝ ամենից շատ վշտացել էր մանուկը. «Գիտե՞ք, թե տղան ինչ է կորցնելու»:

1946-ին եկան Երեւան եւ հանգրվանեցին Քաղաքի ծայրամասի (Նոր Բութանիա) խարխուլ մի սենյակում, որն անգամ անձրեւից չէր պատսպարում... Ամբողջ խնայողությունը ծախսվեց տեղից տեղ փոխադրվելու վրա. ելք չկար՝ փխրուն երեխաների առողջությունը վտանգի տակ էր... Տիգրանն սկսեց հաճախել պարարվեստի դպրոց եւ իսկույն էլ մասնակից դարձավ օտարերկրյա թատրոնի բալետային ներկայացումներին: Մարդիկ չեն մոռացել նրա դերաստարը «Բժիշկ Այբոլիտ»-ում: Սա նրա առաջին մուտքն էր օպերային թատրոն ու թեեւ առողջության պատճառով կիսատ թողեց պարարվեստի դպրոցը, սակայն ճակատագիրը նրան նոր մուտք ու շարունակություն էր կանխորոշել: Անբաժան էր գրքից ու կիթառից: Գիրքը բացում էր ու ձեռքից ցած չէր դնում՝ մինչեւ չավարտեր: Շուտով սկսեց ասել մաթեմատիկական առարկաները եւ դրանց ժամերը համարել ժամանակի կորուստ: Վեցերորդ դասարանում դպրոց չգնաց. ավելի ճիշտ, ամեն առավոտ վեր էր կենում, պայուսակն առնում, տնից դուրս էր գալիս, բայց գնում էր ոչ թե Աբովյանի անվան դպրոց, այլ... հանրային գրադարան: Սպասարկողները զարմացել էին նրա արագաթռիչ ընթերցումից, իսկ պատվիրած գրականության մեջ ոչ միայն գեղարվեստականն էր, այլեւ պատմականն ու փիլիսոփայականը: Դպրոցական երեկոների զարդ, բարեկիրթ, իր երգ ու նվագով ամենքին գերող տղային բոլորը սիրում էին եւ բացակայությունը բացատրելով առողջական վիճակով, չէին ուզում անհանգստացնել: Բայց մի օր դասղեկը որոշեց այցելել ու զվարթեց: Մայրը շանթահար էր եղել. ուրեմն ո՞ւր է գնում տղան ամեն օր... Զույգն անկեղծ էր. Տիգրանն ասաց, որ ինքը չի ուզում ժամանակ կորցնել. կզբաղվի նրանով, որն իրեն պետք է: Ելք չկար. կանայք համակերպվեցին, եւ որոշվեց, որ տղան ժամանակից շուտ հանձնի քննությունները եւ ավարտի տասնամյակը: Նույնիսկ մաթեմատիկական առարկաների ուսուցիչները չզլացան նվազագույն նիշ նշանակել, եւ տղան երկու տարում «թռնելով» ավարտեց դպրոցը եւ սկսեց մասնակցել մոսկա մշակույթի տան եւ պատանի հանդիսատեսի թատրոնի ներկայացումներին... Արդեն նկատվել էին Տիգրանի ոչ մեծ դերակատարումները «Սուվորովականներ» եւ ուրիշ ներկայացումներում: Շատ բարենպաստ եղավ Արաբկիրի մշակույթի տան (նո. 3) մթնոլորտը: Այստեղ հավաքվել էին դերասանականն ավարտած համակողմանի օժտված երիտասարդներ, որոնք իրենց էին որոնում: Մշակույթի տան դիրեկտորը, որ նույնպես դերասանական սաներից էր՝ Երեւանի ամենագեղեցիկ երիտասարդը՝ Լազար Ներսիսյանը, լավ մթնոլորտ էր ստեղծել դասընկերների համար: Նրանցից Հայկ Վարդանյանն ու Կարոիս Հոգանյանը շուտով ընթերցողի սեղանին դրին իրենց առաջին գրքերը, իսկ դեռեւս դպրոցական ամենակրտսերի՝ Պերճ Զեյթունցյանի անդրանիկ գիրքն արդեն տպարանում էր: Իշխան Ղարիբյանը, որ Սունդուկյանի անվան թատրոնի դերասան էր, այստեղ պատրաստում էր Հայաստանում առաջին սիրողական կինոնկարը (նրա «Շաֆարաբլիթ» ժապավենը արժանացավ կինոսիրողների համամիութենական մրցանակին), ռեժիսորական եւ սցենարական ուշագրավ փորձեր էր անում Երվանդ Մանարյանը, գրական փորձեր էր անում եւ Զարե Տեր-Կարապետյանը (ինչ անց նրա եւ Հայկ Վարդանյանի սցենարով «Հայֆիլմը» նկարահանեց «01-99» կարճամետրաժը): Ամեն ինչ շնչում էր արվեստով, եւ Տիգրանն ավագ արվեստակիցների միջավայրում ուղղակի փթթում էր: Առայժմ նա հանդես էր գալիս իր կիթառով ու երգով, նաեւ թատերական ներկայացումներում դերերով:

Հրաշալի զույգը՝ Տ. Լեւոնյան եւ Գ. Գասպարյան:

Կարելի է ասել, որ այստեղից սկսեց նրա ճանաչումը: Մշակույթի տան «Ցարբլը Արթին աղա» ներկայացումն արժանացավ թատերական հանրապետական սուլգաստեսի մրցանակին եւ խաղացվեց Երեւանի մյուս մշակույթի տներում եւ պալատներում: Ամենուր խոսել սկսեցին արտասովոր օժտված, բեմական շահեկան արտաքին ունեցող երիտասարդի մասին: Երաժշտական թատրոնի գլխավոր ռեժիսոր Վարդան Ամեմյանը՝ նրա ամենաերիտասարդ երկու մասնակիցներին հրավիրեց թատրոն: Մերի Շահբազյանը գնաց թատրոն եւ մինչեւ օրս այնտեղ է, իսկ Տիգրան Խանտիկյանը հրաժարվեց, քանի որ ուրիշ երազանքներ ուներ... 1955-ից Հայաստանի արվեստի օջախները սկսեցին պատրաստվել հաջորդ տարվա մոսկովյան տասնօրյակին, ուր Տիգրանը մասնակցում էր մասսայական տեսարաններին:

1956-ը ճակատագրական էր լինելու երիտասարդի համար, եւ ոչ միայն նրա... Սակայն մինչեւ այդ ուրիշ իրադարձություններ եղան: 1947 թ. ամառը բոլորիս կյանքը խուժեց մի զարմանահրաշ երեւույթ. ավելի ճիշտ՝ երգչուհի: Ամառային ֆիլհարմոնիայի դահլիճի խառը համերգի վերջում նրա ելույթը լույսի պես ճառագեց, եւ այնուհետեւ Գոհար Գասպարյան անունն ամենքիս շուրթերին էր: Գեղեցիկի իդեալի ծարավ մեր հոգիները գտան իրենց իդեալը եւ փարեցին այնպես, որ օրն ի բուն վազվզում էին ամենուր, որտեղ կարող էին նրան տեսնել կամ լսել: Դիմում էինք մեզ ծանոթ կոնսերվատորիայի ուսանողներին, աղաչում-պաղատում էինք՝ ճարել նրա երգերի նոտաները ու միմյանցից խլելով, արտագրում էինք ու մեկ մատով դաշնամուրով ճշտելով, փորձում երգել... Ինչ երջանկություն էր, երբ մեզ ինչ-որ բան հաջողվում էր: Ես գիտեմ, թե մեր իրականության մեջ մարդկության ստեղծած երաժշտական մշակույթը ինչեցնելու համար շատ բան են արել մեր երաժշտական արվեստի երեւելիները (լույս նրանց հիշատակին), սակայն դասական երաժշտությանը, մասնավորապես օպերային արվեստը ճանաչելու եւ ընդունելու գործում Գոհար Գասպարյանի դերն ու ծառայությունը եզակի ու անգերազանցելի է: Ինչպե՞ս չհիշեմ Թաքուլ Ալթունյանի եւ Վահրամ Արիստակեսյանի, ժյուրիի անդամներիս ապտանը, երբ Աշտարակի շրջանային օլիմպիադայի ժամանակ (57 թ.) ամբողջ դահլիճն սկսեց վանկարկել. «Սոխա՞կ, սոխա՞կ» եւ բեմ բարձրացավ մի նուրբ ու թխադեմ աղջիկ եւ սկսեց... Այլաբեւի «Սոխակը»: Տարակույս չկար. աղջիկը գերվել էր Գոհարի երգով, ճարել էր տեքստն ու նոտաները եւ սովորել... Երեւի ոչ միշտ է ընդօրինակումը մերժելի: Գոհարին ընդօրինակել հնարավո՞ր է առանց մեծ երաժշտականության, լսողության, ճաշակի եւ ի վերջո, ձայնական ոչ սովորական տվյալների... Շտապեմ ասել, որ «նորահայտ Գոհարի» մասին մեր հանձնախումբն իսկույն իրազեկեց կոնսերվատորիայի ղեկավարությանը, եւ աղջիկը եկավ Երեւան (ավաղ, եկավ ու փոքրած ետ գնաց. նրա ձայնը մշակել էր սկսել մեկը, որը նրա մեջ մեցցո սոպրանո էր փնտրում): Այս օրինակը հիշեցի, որպեսզի ցույց տամ, թե որքան մեծ էր Գոհարի ազդեցությունն ու պաշտամունքը: Մենք պաշտում էինք Գոհարին, հետեւում նրան ամենուր եւ ամենաանշան նորույթին երեւույթի կրիո տալով, պատմում էինք միմյանց, ուղղակի հալվում երանությունից: Մենք առիթ էինք ունենում հաճախ նրա համար հուզվելու, փոթորկվելու: Մեկ էլ լսում էինք, թե նրան հրավիրել են Մեծ թատրոն, Ռոզին է երգել («Սեւիլյան սափրիչ») եւ առաջարկել են մնալ այնտեղ: Գժվո՞ղ էինք, գնդվո՞ղ զայրույթից, մտածում ստորագրահավաք անել, ըմբոստանա՞լ... Հետո իմանում էինք, որ Գոհարը պատասխանել է, թե՝ եկել է իր հայրենիքո՛ւմ երգելու, մերժել է արտասահմանյան ելույթների հեռանկարները եւ վերադարձել... Դե եկ ու մի պաշտիր նման երգչուհուն ու հայուհուն: Ահա այսպիսի բացառիկ անհատականության հանդիպելու բախտավորություն էր ունեցել մեր սիրելի Տիգրանը: Ավելին. ուշադրությունը, համակրանքը շահելու: Միանգամայն չընդունվեց նաեւ այս լուրը: Նրանք, ովքեր գիտեին, ճանաչում էին Տիգրանին, ուրախացան, բայց եւ մտահոգվեցին. տարիքային տարբերություն կար, բայց չուզեցին նշանակություն տալ դրան: Փոխարենը՝ գերադրական նշանակություն տվին ու զգուշությամբ զբաղվեցին շատերը եւ առիթը բաց չթողեցին թունավորելու... Երկուսն էլ հայեցի, պարկեշտ դաստիարակություն ունեին. ջանացին, որքան հնարավոր է չհանդիպել եւ այստեղ սկիզբ առան նրանց սքանչելի նամակները, որոնց պատահմամբ ծանոթանալով մի պատկառելի թատերագետ, վճիռ արձակեց, որ դա «Ռոմեոյի ու Ջուլիետի սեր է. չի՛ կարելի մթագնել»: Բարեկամներն ուրախացան, չարակամները՝ մոլեգնեցին...

1956 թ. մոսկովյան տասնօրյակն օգաստ եղավ՝ իրենց օգտին գտած զույգի համար: Այդտեղ էլ որոշեցին գրանցել իրենց միությունը եւ այստեղ էլ պարզեցին, որ ծնվել են միեւնույն համաստեղության տակ. նույն օրը՝ դեկտեմբերի 14-ին: Քանի՞-քանի թերթիկ պատռեց գրանցող աղջիկը, կարծելով, թե ինքը շարունակ ստիպում է տվյալները: Ո՞ւմ մտքով կանցներ նման զուգադիպություն. ուրեմն ճակատագի՛ր էր: Մոսկովյան խաղերից հետո օպերային թատրոնը հրավիրվեց Լենինգրադ եւ այստեղ գործնական քայլեր եղան նորատակ զույգին պահելու համար: Երկուսն էլ կաշխատեն օպերային թատրոնում, իսկ Տիգրանը միաժամանակ կսովորի կոնսերվատորիայում: Նույնիսկ Նեւսկի պողոտայի վրա մի հսկայական բնակարան տրամադրեցին... Բոթը (իսկական բո՛թ էր) լսում ենք ու ցնորվում... Մեզ կողոպտո՞ւմ են... Օպերայում էլ խուճապ է. ամբողջ խաղացանկը Գոհարի վրա է, մարդիկ նրա համար-են օպերա գալիս... Մի իսկական համազգային ալեկոծություն, որին բնականաբար ականջալուր եղավ Կենտկոմի առաջին քարտուղարը (Ս. Թովմասյան) եւ ուղղակի այցելեց նրանց կացարանը, խոստացավ շուտափույթ բնակարան, առավ մեկնումի տոմսերն ու պատռեց. «Ոչ մի տեղ էլ չեք գնա»: Մինչ բնակարանը կլիներ, նրանք մնացին փոքրիկ սենյակում՝ մի ամբողջ տիեզերքի երգ ու երջանկություն տեսնելով նրա մեջ: Այստեղ էլ սկսեց մեր բարեկամությունը: Վերը հիշած երիտասարդների շրջանակը նրանց առավ իր մեջ ու երանելի դարձրեց ամեն ինչ: Մենք հալվում էինք Գոհարի պարզությունից, դյուրահաղորդ պահվածքից, բարությունից, բարյացակամությունից: Մենք հանդիպում էինք Մանարյանների տանը, որը տիկին Ժենյայի շնորհիվ դարձել էր ջահելներիս բաղձալի վայրը: Ամանորի երկրորդ եւ մյուս տոնական օրերը պարտադիր հանդիպումի օրեր էին, իսկ ամռանը՝ այգում՝ ուրախ խաղերի ու խորովածի հետ: Մեր երեկոներն ունեին որոշակի ծրագիր: Հումորի բաժինը վարում էին՝ Լեւոն Բուդաղյանը, որ կինոստուդիայի սցենարական բաժնում էր աշխատում եւ նրա օպերատոր Կոստյան, որը միաժամանակ լուսանկարում էր մեզ: Երվանդ Մանարյանն էլ ուներ իր համարները, որոնցից մեկը՝ «Թավրիզցի աշուղը», նա նվիրում էր թեհրանահայ ընկերոջը՝ Զարեին: Ամենայն լրջությամբ նա առնում էր տիկ Ժենյայի տան ավելը, սազի պես հպում կրծքին եւ սենյակի մի ծայրից մյուսն անցնելով, «նվագում ու երգում էր»... Այսպիսի արտառոց ու անհեթեթ պատկերներ ու տողեր ուներ աշուղը. «Անձրեւ ու կարկուտ գլխիս են թափվում, իսկ երկնքում շողում է արեւը, նաեւ լուսնյա՞կը...»: Ամեն անգամ, երբ նա տրանսի մեջ հասնում էր Զարեի մոտ, վերջինս միանում էր նրա կրկներգին...

Տես էջ 2

Երաժշտություն

Տիգրանի առաջին դերը՝ «Չարբըլը Արթին աղա», խաղընկերներն են՝ Մերի Շահբազյանը եւ Լազր Ներսիսյանը:

Քրիջ, ուրախություն... Ամենից հեսարրրականը նմանակումներն էին, որով հանդես էր գալիս Տիգրանը՝ Մանարյանների կրսեր որդու՝ Արմանի նվագակցությամբ: Ճիշտն ասած, այս առիթով ես զգացի, թե որքիսի՞ ձայնական տվյալներ ունի նա, քանի որ նա նմանակում էր ժամանակի բոլոր հայտնի տենորներին:

Երբ Տիկոն շատ էր ոգեւորվում, ու մենք քրիջից պայթում էինք, կարծես ինչ-որ տեղ դիմչում էր արվեստագետի պատվախնդրությունը: Գոհարն աննկատ մոտենում էր, առնում Տիգրանի ձեռքը եւ մեղմ շոյում էր... Տիգրանն անմիջապես սթափվում էր, համարյա ծնողական համակ քնքշությամբ լի հայացքով պարուրում էր Գոհարին եւ ընդհատում: Զարեն գտնում էր, որ բոլոր կանայք այստեղ սովորելու բան ունեն Գոհարից... Մեր երեկոյի ճարակաղ բաժնում Նիկոլ Գալանտերյանն էր, որի երգերն այն ժամանակ Իրանից Զարեն էր բերել եւ արտակարգ ընդունելություն էր գտնում: Զարեն պատկառանքով լռում էր եւ մինչեւ թախանձողներին չէր միանում Գոհարը՝ չէր երգում: Թե Գոհարը եւ թե Տիգրանը իրենց շատ լավ էին զգում, երջանիկ ու անխռով՝ մեր միջավայրում, բայց, իհարկե, դրսում նրանց շուրջը չարությունն ու զազրախոսությունն անպակաս էր: Ոմանք նույնիսկ փողոցում չէին զլանում տհաճ բառեր նետել, եւ նրանք շարունակ սիրված էին լինում խուսափել ու կուլ տալ, իսկ ամենից շատ, ինչ-որ բան հաստատել, արդարացնել: Օրինակ, ոմանք գտնում էին, թե կարճ է տեւելու այդ միությունը, Տիգրանին վերագրում էին ինչ-ինչ գծեր... Գիտցողներս համոզված էինք, որ մեծ սեր է ու նվիրում եւ ջանում էինք շրջապատել նրանց մեր ուշադրությամբ, լինել նրանց ելույթներին ու ներկայացումներին: Հիշում եմ, թե ինչ խանդավառություն էր, երբ Գոհարը վերադարձավ ճապոնական շրջագայությունից, ուր նա գլխովին գերել էր այդ նրբաճաշակ ու պահանջկոտ ժողովրդին նույնիսկ իր Չիո-չիո Սանով... Մենք հետեւում էինք «Հայրենիքի ձայն»-ի համարներին եւ ագահությամբ կարդում Գոհարի ակնարկների շարքը: Նրա վրա տառացիորեն տեղում էին հրավերները՝ արտասահմանյան ելույթների, բայց հենց այդ ժամանակ նա ընդհատեց ամեն ինչ եւ նստեց տանը: Կրծքի տակ զորանում էր սիրո պտուղը. երջանկացնել էր ուզում սիրած մարդուն: 59-ին ծնվեց այդ պտուղը. «Փարթամ ու չքնաղ մի տղա, բայց ընդամենը երկու շաբաթ ապրեց... Չեմ մոռանա այդ օրը. Զարեն տուն եկավ մթնած-սեւացած ու հարցիս՝ հազիվ թոթովեց. փոքրիկ դագաղը գրկած տարանք... Տիկոյին չէինք կարողանում դագաղից պոկել...»: Զավակի ու ընտանեկան խաղցության հույսը կորցնելով՝ նրանք արարումի հարյուրապատիկ ջանք դրեցին: Սիրուց ու արարման տենչից նրանք մի ծաղկահյուս ելարան էին հյուսել ու մտնելով իրենց եղեմը՝ նետել էին ելարանը: Դատապարտվածներ էին արարելու... Առանց արցունքի չեմ կարող հիշել առաջին ելույթը՝ կորստից հետո: Հանդիսավոր երեկոյի վերջում էր երգելու Գոհարը: Հուզված ենք, տագնապած... Եվ ահա աջ կուլիսից հայտնվում է սեւերի մեջ, գունատ, մարմնացյալ մի Պիետա եւ դահլիճը շունչը պահում է... Կանաչյանի «Օրորոցային»-ն էր ընտրել: Աչքերը խոնարհած, ասես աչքերի առջեւ փոքրիկի վրա խոնարհված, երգեց: Երգեց՝ աչքերից հոսող արցունքով ու թվում էր հիմա ձայնը կխզվի... Յուրաքանչյուր հնչյունի մեջ արցունք կար, բայց նա գերագույն ճիգով երգը տարավ ավարտին. ինչպե՞ս կարող էր աչքի լույսին ձոնված երգը կիսատ թողնել... Լացեց իր մեծ լացը, երգն ավարտեց ու գլխահակ մնաց: Դահլիճը կարկամել էր, ոչ ոք ոչ մի ձայն չարձակեց, «բռավոներով» ու ծափողջույններով երկար ժամանակ չէր թողնում սգավոր Աստվածամորը հեռանալ...

Չի սխալվում երեւելի մարդ ու երգիչ Խորեն Պալյանը, երբ ասում է, որ Տիգրանի յուրաքանչյուր օրն արարումով էր լցված: Երկուսի՝ օրն էր այդպիսին, քանզի նրանք մի ամբողջություն էին: Տիգրանն անցավ մեր թատերական ինստիտուտում Վ. Աճեմյանի ռեժիսորական արվեստանոցը, ապա Մոսկվայում՝ օպերային ռեժիսուրայի բարձրագույն կուրսերը եւ առաջին բեմադրությամբ հաստատեց օպերային ռեժիսորի բացառիկ կարելիություն: Ավ. Տերտերյանի «Հրե օղակ» օպերան ընթերցեց չարենցյան «Դեպի արեւն էին գնում ամբոխները խելագարված» ստեղծագործության համատեքստով, բեմական կտավը հյուսելով օպերային ու բալետային արտասովոր պլաստիկ ու հախուռն բաղադրիչների զուգադրումով: Քիչ անց նա արդեն օպերային ռեժիսոր էր, իսկ 1977-ից գլխավոր ռեժիսոր, որ համարձակ ձեռք էր զարկում հին ու նոր կտավներին, անելով բեմական իր հաստատումները՝ ազգայինի ու համամարդկայինի, դասականի ու ժամանակակցի ինքնատիպ ու թարմաշունչ լուծումներով: Իբրեւ երգիչ ու ռեժիսոր նա արդեն ցանկալի հյուր է դրսերում, նույնիսկ ընդգրկվում է եվրոպական թատրոնների տնօրինության խորհրդում: Տեսնել էր պետք, թե ինչ խանդավառություն էր նրա թատրոնում, ինչպիսի՞ վերելքով էին ընթանում ամենատարողական փորձերը, ինչ նոր երիտասարդ երգիչ-երգչուհիներ էին աճում նրա ձեռքի տակ, իսկ փորձը բեմում՝ ինքնատեղծ հնարների ու խոլական իմպրովիզի դաշտ էր:

Ինչպե՞ս չհիշեմ այն օրը, երբ Անահիտ Մխիթարյանի հետ պայմանավորված, գնացի թատրոն եւ սպասեցի կուլիսում, քանի որ նա զբաղված էր բեմում. «Լեքլեբիջի»-ի փորձն էր: Հանկարծ սրահով մեկ տարածվեց ռեժիսորական խցիկից հնչող թավշյա ձայնը, որի հիշողությունը կպրի մինչեւ օրերիս վերջը: «Լեփլեբիջինե՞ր. վրդովվա՞ծ եք. առա՛ջ: Պարողներ՝ նահանջեք, երգչախումբ՝ առա՛ջ: Իսկ հիմա՝ հաջորդականությամբ ու ռիթմիկ՝ առաջ ու ետ»: Աստված իմ. ի՜նչ կախարդիչ մթնոլորտ էր նրա փորձը. թվում էր, այդ հրամանի տակ փայտն էլ կխաղա... Այս անգամ ուրիշ է. ռեժիսորի երեւակայությունը՝ «Պողիկոսի» ու «Անուշի» ողբերգական վեհությունից, ճախրել է միանգամայն հակադիր տիրույթ, ուր գրոտեսկն ու բուլեսկն են շաղվանում: Իսկ այն, ինչ արեց նախորդ երկուսում. հասավ ազգայինի ու համամարդկայինի, ժամանակակից թատերային այնպիսի մտածողության համադրության, պայմանականի մեջ՝ մետաֆորիկ գեղարվեստական այնպիսի կերպարի (կենաց ծառերի պայմանական ռիթմային շարքը («Պողիկոսը») որ յոթանասուն տարի արտասված հավատի տիրույթում՝ բարձունքին նստած եկեղեցին է («Անուշ»), որնք ի թիվս գեղագիտական նկատառումների, նաեւ մեր նոր ժամանակն են խորհրդանշում: Ահա թե ինչ է նշանակում ժամանակակից համակողմանիորեն զարգացած անհատականության պրոֆեսիոնալ բյուրեղացված սավառնում, ազգայինի ու համամարդկայինի զուգակցման այսօրյա՛ ընթրոնում: Լեւոնյանը շարունակում էր ճախրել, քանզի նա թռիչքի մեջ էր, իրականացնում էր թատրոնի մեծ ռոմանտիկի իր տեսլականը: Անստատելի չէր «Ալմաստի» եւ «Արշակ 2-րդ»-ի նկարահանումը, Զվարթնոցի կամարների տակ՝ «Պողիկոսն» ու «Անուշը» հնչեցնելու փորձերը: Որոնող անհատի երեւակայությունը սահման չի ճանաչում, բայց թռիչքի մեջ էլ նա կանգ առավ. ավելի ճիշտ, կասեցրին նրանք, ովքեր ծնվել են ոչ թռչելու համար...

Ընկավ մեր օպերային արվեստի գլխավոր սյունը, եւ նոր միայն բովանդակ խորությամբ մենք զգացինք մեր կորստի չափը եւ այն դատարկությունը, որ մնաց նրանից հետո... Կիսվեց մեր հոգեւոր սյունը, որ Գոհարն ու Տիգրանն էին պահում. հիմա միայն նրա կեսն է. Գոհարը, ում մեջ պիտի տեսնենք այն ամբողջությունը, որ մերն էր եւ որով մենք հարուստ էինք ու հզոր: Չէ՞ որ մեզ համար մութ ու ցուրտ օրերին նրանք հրաժարվեցին մի քանի տարի բարեկեցիկ կյանք ապրել արտասահմանում, որպեսզի մենք լքված չզգանք մեզ... Որքան էլ լավատեսության կառչենք, միեւնույն է, չենք կարող չզգալ, որ ընկավ մեր օպերային արվեստի գլխավոր սյունը...

Ուզում եմ ավարտել Տիգրանի հիշատակն արծարծող բազմաթիվ նյութերից մեկի ավարտական խոսքը, քանի որ այնտեղ ամենից ճիշտ ու սպառիչ է արտահայտվում նրա առաքելությունը: «Տիգրան Լեւոնյանի՝ երեւելի երգչի ու բեմադրիչի, երկրի տիրոջ բարձր գիտակցությամբ իր ամբողջ կյանքն ապրած հայրենասեր քաղաքացու անունն արդեն իսկ ոսկե տառերով է դրոշմված հայ երաժշտական մշակույթի տարեգրության մեջ»:

Միասին՝ օպերայի բեմում:

Հունգարական հողի վրա: Ձախից աջ՝ Տ. Լեւոնյանը, Գ. Գասպարյանը, հունգարացի իմպրեսարիոն եւ Է. Ոսկանյանը:

ՍՏՈՐՈՒՄՆԵՐ

Ճակատագրին դեմ գնալ...

Էջ 1-ից

Այդ հուշարձանը իր անհերքելիությամբ եւ մտահղացման տխմարությամբ իսկական դատկերն է մայրաքաղաքի մեջ տիրող բարբարական այլասերման աստիճանին: Դա Հայաստանի հողի վրա դրված ամենավատ արձանագրությունն է:

Սովետական ռեժիմն մեզի ժառանգ մնացած «խալտուրայի» գագաթնակետը: Վերջերս կարացի, որ գիշերները մարդիկ միզում են հուշարձանի դատվանդանին: Այսքան միլիոններ ծախսվեցին, գոնե հազար երեւանցիի համար մի հատ զուգարան կառուցեին, եւ մենք ալ ասեինք, որ դեսությունը շինարարությամբ ալ զբաղված է: Սրբապղծությունը եթե մենք ենք անում, թշնամիներն էլ կանեն, ո՞վ է խանգարելու նրանց:

Մեր մեծագույն հերոսին դիտի քանդակեին ինչպես որ մեզ ներկայանում է լուսանկարին մեջ, առանց դատվանդանի, իր հողին վրա, ժողովրդին մոտ, մաքրելի, որպեսզի մարդիկ մոտենային, շոշափեին, համբուրեին, փայփայեին իրենց հերոսը, որ իր կյանքի վերջին ժամանակները ապրեցավ Ֆրեզնոյում՝ բանեցնելով իր արհեստը՝ ասաղծագործությունը, իր օրապահիկը շահելով, ուրիշներու ձեռք չմեկնելով: Հարա իր ձին, իր մարտական հավատարիմ ընկերը: Ալեքսանդր Մակեդոնացիի ձիուն անունը Բուկեֆալ էր, հիշվում է մինչեւ այսօր: Որքան որ գիտեմ մեր հերոսը չլքեց իր ձին, չէր կարող բաժանվել իր մարտական ընկերեն, իր հետը տարավ Մ. Նահանգներ: Չէ՞ որ այդ ձին ալ անուն ունի եւ մեր ժողովրդի դատվության մեջ դիտի հիշվի՝ Դիլիբոզ: Փոխան այդ ձիուն քանդակագործը փորձում է ազգային հերոսին բարձրացնել դիմացից որ նայես՝ անծանոթ անասունի գլխով երկու ձիու վրա: Երեւի կրկեսում է տեսել այդ տեսակ քաջագործություն: Ժամանակը անցնում է, սիյուռքը օր օրի գնում է դեպի մահ: Այսօր մեր ժողովուրդը իր նորանկախ երկրին մեջ դժվար օրեր է ապրում: Թուրքերը եթե մարդ են, եթե մարդկություն եղել է իրենց մեջ եւ ոմանց մեջ մնացել է, գոնե ընդունեին նախ, որ հայերը ապրել են Օսմանյան կայսրության մեջ: Ասում են, որ Եղեռնի մասին դեսք է խոսք ասեն ոչ թե դեսական գործիչները, այլ դատմաբանները: Եթե թուրքերը մինչեւ այսօր դարգարես ժխտում են 1915 թ. իրենց ոճիրը, որ կոչվում է ցեղասպանություն, բայց գոնե ընդունո՞ւմ են, որ Կոստանդնուպոլսում իրենց հայտնվելուց առաջ հայերը ապրում էին այնտեղ: Իրենց կայսրության հիմնաքարն ի վեր, հարյուրավոր տարիներ, իբրեւ հդաստակ հայերը ապրել են: Ի՞նչ էին անում հայերը: Հիշեցնեմ. հայերը եղել են հողագործներ, արհեստավորներ, վաճառականներ, արվեստագետներ: Իրենց վստահվել են դալատում բարձրագույն դատասխանատու դաշտոններ, կառուցել են երկիրը: Առավել բռնությամբ իրենց մաքուր արյունը վերցվել է խառնելու համար թուրք կեղտոտ արյունին՝ շատացնելով այդ ոճրագործ արյունը: Նույնիսկ հոչակվել են կայսրության ամենահավատարիմ եւ վստահելի հդատակները: Այդ բաներն ա՞լ չեն իմանում թուրք դատմաբանները: Ուրեմն Օսմանյան կայսրությունում ընդհանրապես հայ գոյություն ունեցե՞լ է, թե՞ չի ունեցել: Ուրեմն թուրք դատմաբանները ինչո՞վ են զբաղված. փաստաթղթերը, դատությունը կեղծելով:

Իսկ հայ դատմաբանները: Եթե հարց տան՝ մի ինչ դատմեք ձեր դատությունը, մենք գիտե՞նք հարյուրավոր տարիներ ինչպես են ապրել Թուրքիայում, ի՞նչ են արել, ինչե՞ր են ստեղծել հայերը: Մեր դատմաբանները գիտե՞ն, մեր մտավորականությունը գիտի՞, մեր համալսարանը իմանո՞ւմ է: Եթե թուրքերը եւ հայերը խոսելու են իրարու հետ, հապա ինչի՞ մասին են խոսելու: Եթե, անշուշտ, թուրքերը ուզենան մեզ հետ խոսիլ: Երբ այսպես խոսում էի մտերիմ մեծ դատմաբանի մը՝ Սիմոն Կրկյաշարյանի ներկայությամբ, նա ներողամիտ իմ թեթեւամտությանս հանդեպ տխուր մռմնջաց՝ «Մշակույթը, ըսավ, սիրելիս, թանկ հաճույք է..., եթե հոգեւոր ոլորտի նվիրյալներուն մուրացկանից դակաս ենք հարգում. ինչո՞ւ, մուրացկանը օրական մի երկու դոլար չի վաստակո՞ւմ: Ով դիտի գրե մեր դատությունը եւ մեզի սովորեցնի. սոված մեռնի՞ հայրենասերը: Անշուշտ, դատմաբանը դիտի մտածի, որ ժողովուրդը իրեն կարիքը չունի, եթե առանց դատմաբանի որեւէ հավականություն կարելի է ժողովուրդ կոչել»: Ամոթով եմ հիշում իր խոսքերը: Ես ինչ գործ ունիմ ամերիկացիին հետ, ռուսին հետ: Մեր երկու դեսություններու հողը նույն հողն է՝ բաժնված մի քանի փալարներով: Ժամանակը չէ՞, որ հայերն ալ մտածեն, որ գործելու հին մեթոդները, հին ծրագրերը մինչեւ հիմա ոչ մի օգուտ չեն բերել հայության, ոչ մի օգուտ չեն բերել նորանկախ հայրենիքին: Պետք չէ՞ մտածենք նոր ձեւեր ստեղծել հարաբերելու մեր հարեւաններու հետ, լեզու գտնելու, միասին գործելու: Մինչեւ ե՞րբ դոփելու ենք նույն տեղը: Եթե չենք կարող, չենք կարողանալու, վայ մեզ ուրեմն: Մեր գլխին կախված սուրը իր տեղում է: Կյանքիս ընթացքին, երբ հարցը վերաբերվում է մեր դարդերուն, մեր բնամիներուն, մեր գլխին եկած դժբախտություններուն, ամենաշատ լսածս բառերն են՝ խաբվեցանք, խաբեցին... Չենք հիշում ուրիշ բառ մը ալ, որ նույն առաքից է՝ ինքնախաբեություն:

Կերտվածքներ

Արշիլ Գորկի եւ նկարելու արարքը

ԱԼԵՔՍԱՆ ՊԵՐԵԶԻԲԼԵՆ

Բարեկամս, փարիզաբնակ նկարիչ եւ արվեստաբան Ալեքսան Պերեզիբլյանը (Պերլյան), որն իր գեղարվեստական կրթությունը ստացել է Իտալիայում եւ Արշիլ Գորկու ստեղծագործությանը նվիրված մի շարք ուսումնասիրությունների ու մենագրության հեղինակ է, այս հոդվածը գրել է 1999-ին, իմ խնդրանքով, որպես Արշիլ Գորկու ցուցահանդեսի կատալոգի առաջաբան, ցուցահանդես, որ նախատեսել էի կազմակերպել Հայաստանի Ազգային պատկերասրահում: Դժվարությունների պատճառով 1700-ամյակի մշակութային միջոցառումների ծրագրում ընդգրկված այդ ցուցահանդեսը չիրականացավ: Այժմ, երբ Վեհափառ հայրապետ Գարեգին Բ-ի նախաձեռնությամբ ու ջանքերով մոտ է նախատեսված ցուցահանդեսի գործերի էջմիածին հանգրվանումը, հարկ համարեցի հոդվածը հանձնել «Ազգին»՝ տպագրության:

ՇԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արշիլ Գորկիէն մեզի հասած առաջին գործերը ցոյց կու տան իր նախընտրութիւնը նկարչական մածուկին, կենսունակ վրձնահարուածին, անմիջական, որոնք ժառանգուած են տպատրաստաբար եւ բնաստաբար կերտերէն, 19-րդ դարու վերջերուն եւ 20-րդ դարու սկիզբներուն լայն կիրարկում գտած: Քսան տարեկանին, Գորկիի ձեռք բերած արդիւնքները ուշագրաւ են. ասոնք նկարչական խոր զգայունութիւն եւ հասկացողութիւն կը յայտնեն, նոյնիսկ եթէ Գորկիի այդ շրջանի, ինչպէս եւ յաջորդող տարիներու երկերը, իրենց նկատելի տուրքը կու տան այլազան վարպետներու:

Ընթացքը զոր Գորկի կ'որդեգրէ, կը հիմնուի այն նոյն ըմբռնումին վրայ զոր իր աւակերտներուն կը փոխանցէ, երբ, 1920-ական տարիներուն, դասատուի պաշտօն կը վարէ: Հանս Բըրհարթ, մէկը անոնցմէ, որոնք իր ուսմունքին հետեւած են, անոր հետեւեալ խօսքերը կը նշէ. «Երբ դադրիք սորվելէ, ասիկա որպէս արուեստագէտ ձեր վերջը կը նշանակէ: ...Օգտուեցէք այն բաներէն զորս մեծ վարպետները ամբողջ կեանք մը անցուցին սորվելու համար: Առէք անոնցմէ այն բոլորը որ կրնաք, զայն իւրացուցէք, ապա շարունակեցէք՝ այս կէտէն մեկնելով» (1):

Ընկալման այս ձեւով, արի՝ որովհետեւ Գորկի պէտք է դիմագրաւէր պարզ պարզ կարկոտ մը նկատուելու հարցը, ինք ամենայն ջերմութեամբ եւ հաստատամտութեամբ կը նուիրուի իր նախընտրած մեծ վարպետներու ուսումնասիրման: Ասիկա լոկ արտաքին երեւոյթներու վրայ հիմնուած տեսական ուսումնասիրութիւն մը չէ, այլ՝ փորձառական: Իրեն համար, մեծ նկարիչի մը ստեղծագործական գործընթացը ըմբռնելու եւ անոր հետեւելու լաւագոյն ձեւը անոր նման նկարելն է, մինչեւ այն աստեն որ դեռ իրը չէ գտած: Այսպէս, այլազան վարպետներու շունչը, անցեալի եւ ներկայի, Գորկիի վաստակին ընդմէջէն այնպիսի ազատութեամբ մը կ'անցնի, որ կրնայ դիտողը զարմացնել եւ զայն մղել նկարիչին այդ շրջանի ստեղծագործական կարողութիւնները հարցականներու ենթարկելու: Սակայն, այս մէկը խաբկանք է միայն, որովհետեւ ան, իր կատարած ընտրութեան խոր կերպով գիտակից, նոյն ատեն հնութեան կ'ենթարկէ, թերեւս ներշնչորդն, դիտողին հասկացողութիւնը, այս իսկապէս իւրայատուկ ընթացքին եւ գործակման գծով: Կեղծ երկեր չեն զորս Գորկի կը նկարէ. ընդօրինակութիւններ ալ չեն, այլ՝ ըստ այնինչին ոճով նկարուած գործեր, հաւանաբար մտածելով թէ, ասիկա օր մը անպայման արդիւնքի մը պիտի յանգի, իր ձգտումներուն տարողութեան համապատասխանող:

Նկարելու այս ըմբռնումին Գորկիի փարելու աստիճանաչափին մասին գաղափար մը ունենալու համար հարկ է նկատի ունենալ այն վճռականութիւնը, որով ան իրեն ուղղուած յարձակումներուն դէմ կը դնէ, նոյնիսկ եթէ ասոնք հիւմորով պարուրուած են: Հարոլդ Ռազենբերգ կը գրէ. «Երբ 1937 թուականին, Պիկասոյի կարգ մը գործերը Նիւ Եորք հասան, որոնց մէջ սպանացին թոյլ տուած էր որ ներկը կաթկթի, ցուցադրութեան ընթացքին կարգ մը արուեստագէտներ առիթ գտան Գորկիի հետ իրենց սովորական կատակը ընելու: «Ճիշդ այն ատեն երբ լքած էիր Պիկասոյի յստակ գիծերը, ըսաւ մէկը խայթող համակրանքով մը, «ան կը սկսի ներկը հոսեցնել»: «Եթէ ինք կը կաթեցնէ՝ ես ալ կը կաթեցնեմ», պատասխանեց Գորկի հպարտօրէն» (2):

Անյողդողդ Գորկի կը շարունակէ այն ուղղութեամբ, որ իրեն ճիշդ կը թուի: Այսպէս, երբ Պաբլօ Պիկասոյի յղացքը իւրացնելէ ետք Խուան Միրոյինը կ'որդեգրէ, նախորդ տարիներու երկայնքին իր տնաջան աշխատանքին արդիւնքը հետզհետէ կը զսպուի, 1930-ական տարիներու երկրորդ կէսին ծնունդ տալով աւելի անձնական իրագործումներու, որոնք սկիզբ կ'առնեն «Արեւամուտին մարտ՝ կորեկի աստուածին հետ»էն եւ կը հասնին նշանաւոր «Պարտէզ Սոչիի մէջ» շարքին, անցնելով «Արկուլա»էն, որոնք բոլորն ալ, գէթ որպէս արում, Հայաստան ադրած իր մանկութեան յիշատակներէն կը սերին:

Երկարատեւ համբերութեամբ կերտուած այս նուաճումը ձեռք բերելէ առաջ, հանգրուանները, որոնք խան տարուան ընթացքին Գորկիի աշխատանքը կը բնորոշեն, իմաստալից են, ուր տարբեր յղացքներ կը գոյակցին, առանց որ Գորկի, ըստ երեւոյթին, անոնց հակասութիւններուն գծով մտահոգութիւն ցուցաբերէ: Այսպէս, 1920-ական տարիներու երկրորդ կէսի ընթացքին, մէկ կողմէ կ'որդեգրէ Փոլ Սեզանի վրձնահարուածն ու համադրական կառուցականութիւնը, միւս կողմէ եւ միաժամանակ, կը նկարէ գործեր զսպեալ խորանարդաշաբութեան եւ Անրի Մատիսի ոճերով: Ապա, 1930-ական տարիներուն, Գորկի կը կեդրոնանայ գլխաւորաբար Ժորժ Բրաքի, Ֆերնան Լեժէի եւ Միրոյի նկարչական լեզուներու իւրացման վրայ, յիշելու համար միայն անոնք, որոնք այդ շրջաններուն իր վրայ ամենէն աւելի ազդեցութիւն կը բանեցնեն, Պիկասոյի կողքին:

Մաքքայինը կը յայտնէ (6): Այս գծով, իրեն օրինակ կը ծառայեն Իվ Թանկիի, Անդրէ Մասոնի եւ նոյնիսկ Մաքքայի նկարչական աշխարհները: Գորկի կը յղանայ ձեւեր, երկդիմի եւ բազմիմաստ խորհրդանշական արարածներ, որոնք փոխակերպման եւ ակնարկումներու իրենց յատկութեամբ, իրեն կ'ընձեռեն կարելիութիւնը ազատօրէն ներկայացնելու կեանքի այլազան երեւոյթները: Բայց եւ այնպէս, հարկ է նշել, թէ Գորկին կենսաձեւային պատկերման ուղղութեամբ արդէն գործած էր 1930-ական տարիներու սկիզբներէն իսկ, տնտեսական Մեծ տագնապին վրայ հասնելով: Այս աղէտը Գորկիի վիճակը աւելի դիտաբեկ կը դարձնէր եւ, որպէս օտարական, յաւելեալ կերպով վտանգուած, ինչ որ զինք կը մղէր ինքն իր վրայ աւելի կծկուելու: Ներկայացման եւ պատկերման այս ձեւը կատարեալ կերպով իր հոգեվիճակին կը համապատասխանէ, ինքնութեան իր հարցին, որպէս «ծոցում»ի կերպ մը գտնէ, ընկերութեան մը մէջ, որ կասկածով կը նայէր Արեւելքէն եկող գաղթականներուն: Ուրեմն, երբ Գորկի Մաքքայի կը հանդիպի, կենսաձեւային պատկերման գծով ինք կը գտնուի յառաջացած հանգրուանի մը մէջ, թէկուզ Պիկասոյի եւ Միրոյի ազդեցութեամբ դրդուած: Սակայն, անոր ասակ նկարչական լեզուի մը կազմումը, որ կարենար այդ տիպի կերպարներուն ձկունութիւնը փոխանցել, որոշ ժամանակ պահանջեց, նախքան որ Գորկի հեղուկ ներկի եւ սահուն մակերեսի անցնի:

Այս հանգրուանին Գորկիի մէջ կը ծլարձակին հանճարի բոլոր սերմերը, որոնք, մինչ այդ, որպէս ընդյատակեայ արգելակուած շարժումներ, կարծէք կը փորձին ելք մը գտնել, ուրկէ դուրս ժայթքէին: Այս նոր նուաճումով Գորկիի առջեւ կը բացուի տեսողական եւ նկարչական աննախընթաց դաշտ մը, որ զինք կը տանի մեծ թելադրականութիւն եւ բանաստեղծականութիւն զգեցող արուեստի մը, նրբութիւններով եւ ակնարկութիւններով լի: Միայն ծայրօրէն յղկուած գեղարուեստական ոգի մը եւ հազուագիւտ կերպով վայելուչ գեղագիտական զգայութիւն մը կրնային զանոնք ձեռք բերել: Այս հոլովոյթով, Գորկի կը յայտնաբերէ ծորուն նկարչութիւնը, բիւրեղացած եւ ինքնիշխան գիծին արտայայտութիւնը, գերիրապաշտ ինքնագործական յղացին առընչուած: Սակայն, գերիրապաշտներու երեւակայական տարածութիւն-միջոցը Գորկի կը փոխարինէ նկարչականով, այսինքն՝ տարածութիւն-միջոցով մը, ուր ստեղծագործական արարումը կ'ենթարկուի նկարչական մտածողութեան կոտրտեան, անոր յատուկ հրամայականներուն եւ ոչ թէ տեսիլքին նկարագրական պատկերման:

Այս բարեբաղդումը քայլ առ քայլ կ'ընթանայ: Այսպէս, ըստ իր սովորական գործընթացին Գորկի, նախքան անծանօթ, նոր բնագաւառ մը մուտք գործելը կամ դէպի անյայտը ուղղուիլը, կը «յենի» վարպետի մը, որպէս առաջնորդ որ զինք հովանաւորէ, որպէս տոկուն գետին մը, որուն վրայ ինք կարենայ իր ոտքը հաստատել: Այսպիսի պարագայ մը տեղի կ'ունենայ նաեւ 1942 թուականի ամրան, երբ Գորկի, իր կնոջ ընկերակցութեամբ եւ երջանկութեամբ համակուած, արձակուրդի շրջան մը կ'անցընէ իր նկարիչ բարեկամներէն Սոլ Շարիի մօտ, Նիւ Եորքէն հեռու, բնութեամբ շրջապատուած: Այս նոր առիթը պատճառ կը դառնայ, որ բնութիւնը իրեն երեւայ որպէս վերայայտնաբերուած հարազատ մը, իր մանկութեան յիշատակները վերակենդանացնող, հովուերգական մանկութիւն մը, Վանայ լիճին շրջակայքը, որուն ինք անմոռանալի կերպով կապուած կը մնայ: Այժմ, Քընեթիքըթի մէջ, բնութեան առթած արբեցումէն թափանցուած Գորկին Հաուզոթոնիք գետին ջրվէժային տեսարանէ մը նկարելու նիւթ կը քաղէ: Այս առթիւ սեզանեան ոճով կատարուած գծանկարներէն մէկն է որ, որպէս նախափորձ, հիմք կը ծառայէ «Ջրվէժ» խորագրուած շարքին, իր նոր նկարչութեան սկիզբը հանդիսացող:

Այս գծանկարէն մեկնելով, Գորկի կ'իրագործէ առաջին իսկանկար մը, որպէս նկարելակերպ կիրարկելով իրեն այնքան ծանօթ խումի դրոյթը: Յաջորդող հանգրուանի մը այլ պատասխան մը կը նկարէ, որուն մէջ կը ներկայացնէ նոյն բնանիւթին հիմնական ու զսպուած գիծերը որպէս անկախ էութիւններ, բայց որոնք շօշափելի կապ մը կը պահեն սկզբնական համադրումին հետ: Նորին մէջ տարրերը, որոնցմով տեսարանը կազմուած է, ձեռք կը բերեն յատկութիւն եւ ճշգրտութիւն, մանաւանդ վերի մասին գտնուող երկու դերակատարները. մին՝ արական (որ կը սերի «Գիշեր, մղձաւանջ եւ կարոտ»էն) (7), միաը՝ կանացի, որ կ'առընչուի 1935 թուականի շուրջ իրագործուած երկերու, ինչպէս «Անձնատրութիւն»ը: Այս երկու էակները կրնան զոյգ մը ներկայացնել, թերեւս նոյնինքն Գորկին եւ իր կինը, իրենց արձակուրդի շրջանին: Գորկիի վարին ինքնակենսագրական բովանդակութիւնը այլազան հեղինակներու կողմէ արծարծուած է: Այս ծիրով, մինչեւ իսկ «Հէն»ը (այդ շրջանին մշակուած իր երկու տարբերակներով, որ Լիվիի կողմէ սխալ մեկնաբանուած է՝ իբրեւ թէ ան Գորկիին շունը ներկայացնէ) (8), մաս կը կազմէ այն բնանիւթերուն, որոնք իրենց խորհրդանշական ակնարկութիւններով կը թուին Գորկիի կեանքին առընչուիլ (9):

Նախորդ տարբերակներուն մէջ համադրումը աւարտական ձեւով կազմելէն եւ գտնելէն ետք, Գորկի կ'անցնի շարքի վերջինին, «Ջրվէժ»ի իրագործման, հեղուկ գոյներով: Գոյնի «յորձանք» մը պատասխին մակերեսը կը ծածկէ, գեսային տեսարանի մը խոնատութեան զգայութիւնը շեշտող, թաւ կանաչով շրջապատուած, որ դուրս կը ցցէ կարմիրները, դեղիններն ու սպիտակը, որոնք տեսարանը կը լուսաւորեն: Այս կէտին, հակառակը կարգ մը կանխող գործերու՝ այլ նկարիչներու կողմէ իրագործուած, յատկապէս Միրոյի, Մաքս Էրնսթի եւ Մաքքայի, հեղուկ եւ հոսող գոյները կը դադրին, աւելի կամ նուազ չափով, պարզ օժանդակ միջոց մը ըլլալէ (որպէս յարացուցական տարր, կամ դիպուածի եւ նկարիչին գիտակից «անհոգութեան» արդիւնք) ու կը վերածուին նկարչական ուրոյն լեզուի: Այս իմաստով, Գորկիի վաստակը չի ներկայանար միայն որպէս իրմէ առաջ յղացուած այլազան ուղղութիւններու եւ գործարկումներու եզրայանգում մը,այլ որպէս աննախընթաց նուաճում, որ Մատիսէն եւ Վասիլի Կանդինսկիէն ետք նոր սլացք մը կու տայ գոյնի արտայայտչական կարելիութիւններուն, գոյնը,որ կը շնչէ, կը սողայ եւ կը տարածուի: Այսպէս՝ հեղուկ գոյնի հոսքը զարկ կու տայ թովչանքի զգայութեան: Միջոցին մէջ իր թափանցումով, ան կը յառաջացնէ շարունակական բայց նոյն ատեն դադրած շարժումի մը տպատրութիւնը, իբրեւ թէ ժամանակը կանգ առած ըլլայ: Այստեղ, նոր նկարչութիւն մը հեղինակատրաւեսումը կը կատարէ: Նկարելու արարքը, պատասխին համընդհանուր մակերեսին վրայ սփռուող, իտրաանչիտ կէտին արտայայտչական նոյն կարեւորութիւնը կ'ընծայէ, որպէս նկարչական նորովի երկնում մը,որ Գորկիի մօտիկ բարեկամին՝ Ուիլրըմ դը Քունինկի, Ջեքսոն Փոլլոքի, Սէմ Ֆրենսիսի, Ջոն Միչելի եւ այլոց գործերով, քանի մը տարի յետոյ ինքզինք պիտի պարտադրէ որպէս նկարչական նոր դպրոց մը, վերացական արտայայտաբերութիւն եւ շարժուձեւի նկարչութիւն կոչուած:

Գորկիի նկարչական այս յայտնագործ լեզուն կը զուգահեռի Կանդինսկիի գաղափարին, զոր այս վերջինը իր առաջին գիրքին մէջ բանաձեւած էր սակայն եւ զայն մասնակիօրէն կիրարկած: Արդի ժամանակներս ներդաշնակութեան եւ անոր նկարչական արտայայտութեան գծով Կանդինսկի կը գրէ.

«Համադրումը որ կը հիմնուի այս ներդաշնակութեան վրայ, յարակցութիւն մըն է գունատրուած եւ գծուած ձեւերու, որոնք որպէս այդ ունին անկախ գոյութիւն մը՝ յառաջ եկած ներքին պահանջքէն ու, անկէ ծնած համակեցութեամբ, կը կազմեն ամբողջութիւն մը, որ կը կոչուի նկար»:

Այս «ներդաշնակութիւնը հիմնուած է ամենէն առաջ հակադրումներու օրէնքին վրայ», ուր «Արտօնուած կամ արգիլուած բաղկացութիւններ, գոյներու պատճառած ցնցում, երանգի մը հնչականութեան ծածկոփլը ուրիշ երանգով մը, հակադրում մը՝ որու բերմամբ գոյն մը աւելի ուշադրութիւն կը գրաւէ քան ուրիշ մը, գունային բիծին շեշտատրումը, գոյնի մը տարրալուծումը այլ գոյներու եւ այլոց լուծումը մէկ գոյնի մէջ, գծային սահմանին ի գործ դրումը՝ պարփակելու համար գունային բիծը, որ կը տարածուի, այս բիծին զեղումը այդ սահմանէն դուրս, միջթափանցումներ. ահա այնքան կարելիութիւններ, ամբողջովին նկարչական, որոնք կ'անհետանան անհուն մանրամասնութիւններու ցանցի մը մէջ»:

Տես էջ 5

«Պատկեր Խորգոմից», 1936 թ., յուղանկար:

Գրականություն

Մարկ Լեւի. «Ես իդեալիստ եմ, բայց ոչ պարզամիտ»

Վերջին տարիներին գրական ասպարեզ իջած ֆրանսիացի հեղինակների մեջ առանձնանում է գրող, սցենարիստ Մարկ Լեւիի անունը, որի առաջին երեք գրքերը տարբեր լեզուներով հրատարակվեցին ընդհանուր առմամբ 4 մլն օրինակ տպաքանակով, իսկ 2004 թ. լույս տեսած «Հաջորդ անգամ» վեպը քննադատներն անվանում են ինտերնետի դարաշրջանի «Ռոմեո եւ Ջուլիետ»:

Մարկ Լեւին ծնվել է 1961 թ.: 18 տարեկանում անդամագրվել է ֆրանսիական Կարմիր խաչին, Փարիզի շրջակա նահանգներից մեկում 6 տարի զբաղվել վթարված ավտոմեքենաներից մարդկանց ազատման գործով: Զուգահեռաբար սովորել է Փարիզի համալսարանում եւ աշխատել: 1983 թ. հիմնել է «Լոժիստիք-Ֆրանս» ընկերությունը, 1984-88 թթ. անցկացրել ԱՄՆ-ում, վերադառնալուց հետո՝ 1990 թ. հիմնել ճարտարապետական-շինարարական մի ընկերություն:

1998 թ. հրատարակեց իր առաջին՝ «Իսկ եթե դա ճիշտ է» գիրքը, որի բոլոր 500 հազար օրինակները 1999 թ. 2 մլն դոլարով գնեց հոչակավոր կինոբեմադրիչ Սթիվեն Սփիլբերգը: Գիրքը թարգմանվել է 30 լեզվով: 2001 թ. լույս տեսավ «Որտե՞ղ ես» գիրքը: «Յոթ օր հավերժության համար» գիրքը հրատարակվեց 2003 թ.:

«Պարի-մաչ» հանդեսը տեղեկացնում է, որ ներկայումս Լեւին կինոգործիչ Ռաշիդա Բրաֆիի հետ մեկտեղ ավարտում է իր առաջին կարճամետրաժ ֆիլմի նկարահանումները, որոնք իրականացվում են «Միջազգային նեռում» իրավապաշտպանական կազմակերպության պատվերով: Վերջերս Լեւին երկու սցենար է գրել եւ մտադիր է սեփական լիամետրաժ ֆիլմ նկարահանել:

Ներկայումս կանանց պաշտելի գրողը դարձած Մարկ Լեւիի վեպերը Ֆրանսիայում վաճառվում են ամենամեծ տպաքանակներով: Նա փախչում է բարձրաշխարհիկ զվարճանքներից, իսկ ֆրանսիական սրտաբացության կարոտը նրան սփոփեց, որ Լոնդոնում որոշ ժամանակ ապրելուց հետո 14-ամյա որդու հետ վերջերս վերադառնա Փարիզ, որտեղ այժմ բնակվում է ժողովրդական թաղամասերից մեկում՝ 6-րդ շրջանում:

Քննադատներից ոմանք Մարկ Լեւիին ամբաստանում են գրագողության մեջ եւ ենթադրություններ են անում, թե իրականում ով կարող է լինել նրա ստորագրությունը կրող գրքերի հեղինակը: Լեւին առանձնակի կարեւորություն չի տալիս նման հեղուրանքներին, դրանք ի չիք դարձնելով իր բարեկրթությամբ եւ մեղմ ժպիտով:

Ինչ վերաբերում է անձնական կյանքին, շատ է խոսվում Լեւիի եւ երգչուհի Միլեն Ֆարմերի սիրային կապի մասին: Բայց Լեւին շատ զուսպ մարդ է եւ որեւէ ձեւով չի հաստատում այդ ասեկոսեները: Նա սիրում է զբաղվել խոհանոցի գործերով, ճամփորդել եւ աշխատել երաժշտություն լսելով: Երջանկությունը, ներդաշնակությունը եւ սերը նրա՝ խաղաղացու եւ գրողի, իդեալներն են:

Ստորեւ որոշ կրճատումներով ներկայացնում ենք «Պարի-մաչի» թղթակցին նրա տված հարցազրույցը:

- Ձեր գրքերը, որպես կանոն, վաճառվում են մեծ հաջողությամբ: Ինչպե՞ս է դա Ձեզ հաջողվում:

- Ինձ համար շատ դժվար է պատասխանել նման հարցի: Ես սիրում եմ գրել ու պատմություններ պատմել, եւ աներեւակայելի պատահականությամբ, իմ առաջին գիրքը հաջողություն ունեցավ: Կյանքումս հանդիպել եմ բազմաթիվ մարդկանց (տաղանդավոր կամ անտաղանդ), որոնք լուրջ էին վերաբերում իրենց աշխատանքին: Բայց համոզված եմ, որ աշխատանքը նրանց բնավ հաճույք չէր պատճառում: Իմ բախտը բերել է, որ ուզածս գործն եմ անում: Գրքերիս հաջողությունը չեմ պայմանավորում ինչ-որ հատուկ բաղադրատոմսի գոյությամբ:

- Ուզում եմ ասել, որ ամեն առավոտ նստում եմ գրասեղանի մոտ եւ աշխատում, առանց գրելիքը հստակ պատկերացնելու:

- Իհարկե, ոչ: Գլխումս պատմությունների գաղափարներ կան: Դրանք հայտնվում են, երբ զբոսնում եմ, մարդկանց լսում: Ես ամաչկոտ եմ, քիչ եմ խոսում, ուստի հաճույքով ավելի շատ լսում եմ, դիտում, քան զուցում կամ ինձ ցուցադրում: Այն ամենը, ինչ տեսնում եմ շուրջս, փոխակերպվում է վեպի մտահղացման:

- Հաճախե՞ք եք գրելու դասընթացների:

- Բնավ: Դպրոցում չեմ փայլել առաջադիմությամբ, բացառությամբ ֆրանսերենի: Պաշտում էի պոեզիան եւ շատ էի կարդում: Երեւակայականին առնչվող ամեն ինչ հետաքրքրում էր ինձ: Իմ առաջին վճարովի գործն ամռան ամիսներին Փարիզում նոր հայտնված վիդեո ակումբներից մեկում կատարես գանձապահի աշխատանքն էր: Խենթանում էի կինոյի եւ ամերկյան վեպերի համար: Ֆրանսիան այն ժամանակ դեռ (չնչին բացառություններով) նորավեպերի ազդեցության տակ էր:

- Անորոշությունը, երեւակայության պակասը չե՞ն նեղում Ձեզ:

- Երբեք: Ամենասկզբում փորձելու նպատակով իմ պատմությունը պատմում եմ երկու-երեք ընկերների: Զույգի պահին անսպասելիորեն խոսքս ընդհատում եմ եւ սկսում մի ուրիշ պատմություն: Բայց պատմելու համար էլ քաջություն է հարկավոր:

- Ինչ-որ տեղ կարդացել եմ, որ Դուք հրաժարվում եք Ձեզ գրող անվանել: Ինչո՞ւ:

- Ես 38 տարեկանում մուտք գործեցի գրական միջավայր եւ ցավով համոզվեցի, որ ֆրանսիական գրականության ու մշակույթի պաշտպանությանը կոչված անձիք իրականում արդում են միջնաբերդում, նոր տաղանդներից դժգոհ եւ նրանց հանդեպ նախանձով լի: Ինձ տալիս էին հարցեր, որոնք չէին տա որեւէ բեմադրիչի կամ երաժշտի:

- Օրինակ...

- Օրինակ, երբ արդեն երրորդ գիրքս էի գրել, ինձ հարցնում էին. «Դուք գրո՞ղ եք»: Պատկերացնո՞ւմ եք, որ իր երգերի երրորդ ալբոմը հրատարակած երգչին հարցնեն, թե երգի՞չ է արդյոք ինքը: Ես եզրակացրի, որ Ֆրանսիայում գրող լինելը ոչ թե դեր է, այլ տիտղոս: Եվ քանի որ միայն պակասամիտները կարող են իրենց տիտղոսներ շնորհել, ես մշտապես պատասխանում էի, որ իմ գրող լինել-չլինելը պետք է որոշեն ուրիշները: Կինոն ապացուցել է, որ հնարավոր է փողոցում գտնել մի հրաշալի դերասան եւ նրան տանել Կաննի փառատոն: Անձամբ ես նախընտրում եմ ինձ համարել հեղինակ:

- Երբեւէ պատկերացրե՞լ եք, որ մի օր կարող է ամեն ինչ կանգ առնել:



- Անշուշտ: Գիտեմ, գրելն իմ չորրորդ զբաղմունքն է: Կյանքումս երբեւէ անգործ մնալու տագնապը չեմ ունեցել: Եթե վաղը հանկարծ աշխատանք չունենամ, կգնամ ռեստորանում ամանեղեն լվանալու: Իմ եկամուտներն ինձ թույլ են տալիս հանգիստ ապրել եւ գրել նոր գրքեր:

- Ինչ ձեւով եք ծախսում Ձեր դրամը:

- Առավելապես հագեցնում եմ ճանապարհորդելու ծարավս: Բայց չունեմ շքեղ ավտոմեքենա, թանկարժեք ժամացույց կամ կալվածք: Հաճույքով ճակատագրեր եմ կազմակերպում իմ սիրելի մարդկանց համար, շաբաթավերջին որեւէ տեղ մեկնում, ընծաներ նվիրում: Ես իդեալիստ եմ, բայց ոչ պարզամիտ: Այսօր իդեալ ունենալը, այն արտահայտելը եւ իրագործել ձգտելն ավելի մեծ համարձակություն են պահանջում, քան ցինիկ լինելը: Արդի հասարակության մեջ կոպիտ եւ ստոր լինելը շատ ավելի դյուրին է, քան հակառակը: Կարծում եմ նույնիսկ, որ ցինիկներն իրենց կարծածից շատ ավելի պարզամիտ են, քանզի միամտություն ունեն հավատալու, թե իրենք կարող են այդպիսով երջանիկ լինել:

- Գրքեր գրելը կարո՞ղ է արդյոք բարելավել աշխարհը:

- Այո: Եթե գրելը ժամեր տեւող հաճույք, ֆիզիկապես, լավ տրամադրություն է պատճառում, դա ինձ համար է: Ես սիրում եմ ներդաշնակությունը: Թերեւս դա է իմ գրքերի հաջողության պատճառը:

Պատրաստեց Պ. ԲԵՐԲԵՐՅԱՆԸ

էջ է-ից

Այս տեսարանը կը կազմակերպուի «շօշափելի մակերես»ին վրայ տեղադրելով այլ «մտային մակերես մը, օգտագործուած ոչ միայն որպէս հարթ մակերես մը, այլ որպէս եռաչափական միջոց մը: Գիծին հաստութիւնը կամ բարակութիւնը, ձեւին դիրքը՝ նայած մակերեսին, ձեւի մը մասնահատումը ուրիշով մը, ահա այնքան օրինակներ որոնք ցոյց կու տան ընդլայնումը՝ որուն կրնանք ենթարկել միջոց մը՝ գծայղացին ընդմէջէն: Գոյնը կ'ընծեռէ նոյն արդիւնքները: Զայն կիրարկելով ըստ յարմարութեան, ան առաջ կամ ետ կ'երթայ եւ պատկերը կը դարձնէ օդին մէջ ծփացող էութիւն մը–ինչ որ համազօր է միջոցին ընդլայնումին՝ նկարչութեան միջոցով» (10):

Այս զուգահեռը, թէեւ ակամայ, կը թելադրէ թէ հակառակ գերիրապաշտ ինքնագործութեան հետ Գորկիի առընչութեան, յղացքը զոր կը կիրարկէ, հանգամանօրէն հակակշռուած է եւ աւելի մօտ՝ Կանդինսկիի գաղափարին: Իսկութեամբ, յարաբերումները զորս Գորկի կը ստեղծէ գոյներուն, անոնց եղանակաւորումներուն եւ ներթափանցումներուն միջեւ, համադրումները զորս կը կառուցէ (որոնք ընդհանրապէս կը հիմնուին նախապատրաստական մէկ կամ աւելի գծանկարներու վրայ), ցոյց կու տան իր մտահոգութիւնը ոչինչ ձգելու դիպուածին, անոր վրայ լիովին իշխելու: Նոյնիսկ «Թէ ինչպէս մօրս ասեղնագործ գոգնոցը կը տարածուի կեանքիս մէջ»ի եւ «Մէկ տարեկան կաթնախոտը»ի նման երկար նկատի առած (որոնց մէջ ձեւերը կը հալին եւ գոյներու անձրեւ մը կը ծածկէ պատասխաններուն մակերեսը), տիրող ներդաշնակութիւնն ու նկարելու արարքը, բովանդակ միջոցին վրայ տարածուած, կը մատնանշեն Գորկիի ծայրագոյն վարպետութիւնը, հեղուկ գոյներու դիպուածային շեշտերը կամ բանումը համարկելու իր կարողութիւնը, իր կեդրոնացման ուժը՝ պատասխանի դիմաց, որ կը նմանի չինացի նկարիչներու կիրարկածին, տեսարանին առջեւ երկար խոկումէ ետք, որպէս ոգեկան արարողութիւն մը: Այսպէս, ոգեկանութիւնը, որ իրարու կը միացնէ անցեալի արուեստը եւ ներկայի արուեստները Կանդինսկիի եւ Գորկիի, կը յառաջացնէ յաւիտենականութեան այն զգայութիւնը զոր կ'ունենանք գործերու դիմաց, որոնց տաքած կախարդական «հանդարտութիւն»ը մեր առջեւ կը բանայ դուռը անժամանցին, հաղորդումը անկապտելի ոգիներու, ներկայ բայց անտեսանելի: Այս պատճառով, Գորկին կը կանխէ կարգ մը ամերիկացի ու եւրոպացի արուեստագէտներու հետաքրքրութիւնը չինական արուեստին նկատմամբ, վրձինին ձգած հետքին տալով արտայայտչական գերազանց կարեւորութիւն, որպէս նկարչական արարքին նշանը, որպէս նոյն արարքին, նոյն արարողութեան մարմնացումը:

«Ջրվեժ», 1943 թ., յուղանկար:

1944 թուականը Գորկիի նկարչական ամենաբեղուն տարին եղաւ, որուն ընթացքին գլուխգործոցներ ստեղծուեցան ինչպէս «Ծաղկած ջրաղացի ջուր»ը, «Ծրագրել, դիւթել»ը, «Թէ ինչպէս մօրս ասեղնագործ գոգնոցը կը տարածուի կեանքիս մէջ»ը, «Մէկ տարեկան կաթնախոտը»ն, «Առողջութեան կորեկի դաշտ»ը, «Նկար»ը եւ ուրիշներ: Այս խորագիրները բառերու յարակցութեամբ յղացուած են, Անդրէ Բրեթոնի մասնակցութեամբ, որուն Գորկին նոր ծանօթացած էր (11): 1945 թուականի իր անհատական ցուցահանդէսի պրակին յառաջաբանը գրուած է նոյնինքն Բրեթոնի կողմէ, որ Գորկիի արուեստին նորութիւնը կ'ողջունէ, որուն «կիրարկած միջոցներուն բացարձակ բիւրեղութիւնը, ի սպաս տպատրութիւններու անխաբարելի թարմութեան մը եւ անսահման զեղումի մը ծիրին, կրնայ յառաջացնել ոստում մը՝ գիտցուածի արահետներէն դուրս եւ, լոյսի անեղծ նետով մը, ցոյց տալ ազատութեան իսկական իմաստը» (12):

Սակայն, հին եւ նոր արուեստներուն հանդէպ Գորկիի ցուցաբերած շեշտակի փարումը, թանձրախիտ նկարչութեան իր սէրը եւ անոր երկարատեւ կիրարկումը, մեծ մասով խոհական եւ խիստ կերպով մշակուած աշխատանքի իր ընթացքը, իր կասկածները, իր հակասական ձգտումներն ու անաղտոհութեան զգացումին իր մէջ արմատացած ըլլալը արգելք հանդիսացան, որ ինքզինքն նուիրուի իր ձեռք բերած նկարչական լեզուին յաւելեալ լրումին: Այստեղերծ, ուղղակի բացաւ գերազանցօրէն բերրի է, աւելի բերրի քան ինչ որ կը կարծուի, նոյնիսկ գործերով, որոնք մեծ թիւ չեն ներկայացներ, ինչպէս իրմէ առաջ Վերմէր վան Տելֆթի եւ Ժորժ Սեորայի պարագաներուն: Գորկիի նկարչական յայտնաբերումը, անոնցմէ նման, հիմք է եւ ուղենշան, որ տակաւին չէ գտած իր լրիւ ճանաչումը:

Թերեւս ժամանակի հարց է:

1. Karlen Mooradian: GARDENER FROM EDEN, Ararat, A Decade of Armenian-American Writings, New York, 1969, p. 302.

2. Harold Rosenberg: ARSHILE GORKY : The man, the time, the idea, Horizon Press Inc., New York, 1962, p. 66.

3. Mooradian, p. 305.

4. Ethel K. Schwabacher: ARSHILE GORKY, published for the Whitney Museum of America Art by Macmillan Company, New York, 1957, p.54.

5. Ibid, p.26.

«Թէ ինչպէս մօրս ասեղնագործ գոգնոցը տարածուած է իմ կեանքիս», 1944 թ., յուղանկար

6. CONCERNING THE BEGINNINGS OF THE NEW YORK SCHOOL: 1939-1943, An interview with Peter Busa and Matta, conducted by Sidney Simon in Minneapolis in December 1966, Art International, volume XI - 6, Summer 1967, p. 19.

7. Harry Rand: ARSHIL GORKY: THE IMPLICATIONS OF SYMBOLS, Allenheld and Schram (Montclair) - George Prior (London), 1980, p. 63.

8. Julien Levy: ARSHILE GORKY, Harry N. Abrams, New York, 1966, p. 26.

9. Ջիմ Մ. Ջորդան իրաւացիօրէն կը հաստատ, թէ այս բնանիւթին համադրումը ուղղակիօրէն կը սերի «Մայր եւ երախայ» (1935-1937) պատատէն, երբ ան 90 աստիճան դէպի ձախ թեքուի: Տե՛ս Jim M. Jordan and Robert Goldwater: THE PAINTINGS OF ARSHILE GORKY - A CRITICAL CATALOGUE, New York University Press, New York and London, 1980, p.340. Թուականը, որուն ընթացքին Գորկի «Հէն»ը կը յղանայ, կը համապատասխանէ իր առաջին աղջկան Մարոյի ծնունդը կանխող ամիսներուն: Բնանիւթի իր այս ընտրութիւնը կրնայ տաղ մը ըլլալ այս եղելութեան նուիրուած:

10. Wassily Kandinsky: DU SPIRITUEL DANS L'ART ET DANS LA PEINTURE EN PARTICULIER , traduit de l'allemand par Pierre Volboudt, Denoel/Gonthier, 1969, p. 143.

11. Jordan, p. 446 (lettre citee d'Agnes Gorky a Jeanne Reynal de 10 janvier, 1945).

12. Andre Breton: LE SURREALISME ET LA PEINTURE , Brentano's, Inc., New York, 1945, p. 198.

Յասեր Արաֆաթ. «Պայքարում ենք, որպեսզի աշխարհը, ինչպես հայերին, մեզ չմոռանա»

Պաղեստինյան հեղափոխության լեգենդար ղեկավարի եւ հայ նորագույն ազգային-ազատագրական պայքարի նախաշեմնողներից մեկի ողիսականը

1965թ.-ին, երբ հայ ժողովուրդը ինչպես սփյուռքում, այնպես էլ մայր հայրենիքում ոգեկոչում էր ցեղասպանության 50-ամյակը, Եգիպտոսում եւ Հորդանանում ծնունդ առավ Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը (ՖԱԹՀ), որի ղեկավարը մինչեւ իր մահը մնաց Պաղեստինի ամենահեղինակավոր ընտանիքներից մեկի՝ Հյուսեյնիների զավակ Յասեր Արաֆաթը: Նա փաստորեն շարունակեց պաղեստինցի ազգային հերոս Աբդ Ալ-Գադեր Հյուսեյնիի շարժումը, որ կանգ էր առել 1948 թ.-ին, զինվորական պատմական առաքելությանը նվիրված հատուկ ոստազդներ տպագրվեցին եւ փակցվեցին Բեյրութի փողոցներում: Դրանցում պատկերված էին հայ եւ պաղեստինցի ֆիդայիներ՝ «Վերքերով լի ջան ֆիդայի» վերտառությամբ:

Մի տարի հետո, 1969թ.-ին, երբ Հորդանանում Հյուսեյն թագավորի զորքերը եւ իսրայելյան բանակի միավորները հարձակվեցին պաղեստինյան գաղթականների վրա, սպանվեց Արաֆաթի հիմնական ռազմական գործակից Աբու Ալի Իյյադը: Նույն օրերին, պաղեստինցիները կորցրեցին իրենց եւ արաբ ժողովրդի ազգայնական շարժման ռահվիրա, Եգիպտոսի նախագահ Կամալ Աբդ էլ Նասերին, որն հանկարծամահ եղավ Կահիրեում:

Ամերիկյան ռազմական հետախուզությունը, թիկունքից հարվածելու համար Հորդանան զրահատանկային ուժեր ուղարկած սիրիական օգնությունը, կազմակերպեց 1970թ.-ի Հաֆեզ Ալ-Ասադի ռազմական հեղաշրջումը Դամասկոսում, որի պատճառով Արաֆաթն ու իր զինակիցները ծանր պարտություն կրեցին Հորդանանում եւ Կահիրեի համաձայնագրով մեծ մասամբ անցան Լիբանանի հարավային շրջանները, Սիրիա, Իրաք, որտեղ արդեն նոր մութ ամպեր էին կուտակվում: Լիբանանում նրանց ներկայությունը աղետ եղավ այդ երկրի համար: Բեյրութում, Լիբանանի Առաջադիմական ճակատին ունենալով որպես գլխավոր դաշնակից, որը գլխավորում էր Լիբանանի առաջադիմական-սոցիալիստական կուսակցության նախագահ Կամալ Ջոմբլաթը, Յասեր Արաֆաթը բնական դաշնակիցներ գտավ նաեւ հայերի մեջ, որոնց հայրերը որպես իրենց տուն ու տեղից երիցս էված գաղթականներ՝ բնակություն էին հաստատել Լիբանանում: Այնպես որ, 1973թ.-ի արաբ-իսրայելյան պատերազմից եւ Լիբանանի քաղաքացիական պատերազմի պայթելուց հետո ՖԱԹՀ-ի ղեկավարի եւ զինակիցներ անմիջական օգնությամբ հիմնադրվեցին Հայաստանի Ազատագրության Հայ գաղտնի բանակը (ASALA), Արեւմտյան Հայաստանի Ազատագրության ճակատը, որոնց դաշնակիցները դարձան 1980թ-ին Թուրքիա եւ Սիրիա աղատանած ֆուդ, ադեմը, որը հայերի, քրդերի, հույների, ասորիների դեմ ցեղասպանություններ գործադրելուց հետո՝ զանգվածային տանջանքների, կախաղանների էր «արժանացրել» նաեւ թուրք առաջադեմ մտավորականությանը: Հիշեցնենք, որ առանց Յասեր Արաֆաթի, Աբու Ջիհադի, Աբու Այադի, Աբու Շաֆեր Բսիսոյի, Աբու Ալ-Հոլի, Հավարիի (ՖԱԹՀ), Ջորջ Հաբաշի (ՊԱԺԵ), Նայիֆ Հավաթմեի (ՊԱՌԵ), Աբու-Ալ Աբբասի (ՊԱԵ), Դալաղ Յագուբի (ՊԱԵ) եւ այլոց ռազմական, նյութական, բարոյական օժանդակության անկարելի էր հայ ժողովրդի եւ թուրքիայի տառապյալ ժողովուրդների արդար դատերը վերսին համաշխարհային պահանջատիրության սեղանին վերադարձնել: Վերոհիշյալ ղեկավարներից շատերը որպես «պատիժ» իրենց հավիտենական հանգիստը գտան դաժան նահատակության ճանապարհին: Անկարելի է մոռանալ՝ որ 1978թ.-ին «Միթ»-ի եւ «Մոսադ»-ի գրգռությամբ Բեյրութի հայկական թաղամասերի վրա հարձակում կազմակերպած Լիբանանի ֆալանգիստական զինված ուժերին դիմակայելու գործում հայերը նեցուկ սատան Յասեր Արաֆաթի հրետանային միջամտությունից:

Տասնամյակներ շարունակ զինյալ պայքարից խաղաղական պայքարի անցած պաղեստինյան ինքնավարության նախագահ Յասեր Արաֆաթին առանձնացնելու, հերոսանկարգելու փորձերը ԱՄՆ-ի ու Իսրայելի կողմից՝ հանգեցրին իսլամական ծայրահեղականության զարգացմանը, որը երեկի ձախակողմյան-մարքսիստական գաղափարախոսությունից անցել է միջնադարյան հետադիմականությանը՝ հանձին «փրկիչ» Բեն Լադենի: Այդ ահաբեկիչներն այժմ գոյատեւում են նույնքիսի արյան բաղնիքներ սարքելով, ինչպես իրենց հակառակորդները:

Կյանքի անթիվ-անհամար փորձություններ ապրած, անհաշիվ մահափորձերից վերապրած, բազմիցս մեկուսացված, բայց զարմանալիորեն այդ բոլորը վերապրած Յասեր Արաֆաթի 75-ամյա կյանքի թելը կտրվեց նախորդ օրը: Հունադավան քրիստոնյա տիկնոջից ունեցած միակ դստերը որպես ժառանգ թողած Պաղեստինի բյուրավոր որբերի հայր նկատված Արաֆաթը իր կյանքի մայրամուտով անորոշության մեջ է թողնում Մեծավոր Արեւելքի չլուծված հարցերը: Ինչպես ինքն էր ասել ժամանակին՝ «Պաղեստինցու համար մեծ հարց է ո՞ր ծնվելը, բայց ավելի ծանր հարց է ո՞ր թաղվելը»:

ՀԱՄՊ ՄՈՍԿՈՓՅԱՆ

ՍՐՏԱԲԻՆ ՄՐՑԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղայնության եւ կրոնական գործոնը Ուկրաինայի ընտրություններում

Երկրորդ փուլից առաջ երկիրը բաժանվել է «արեւելյան» եւ «արեւմտյան» ճամբարների

Վլադիմիր Պուտինի այցը Կիեւ Ուկրաինայի նախագահական ընտրությունների նախօրեին, ըստ սոցիոլոգների, լուրջ ազդեցություն չթողեց առաջին փուլի արդյունքների վրա: Ռուսաստանի նախագահի «հովանավորյալ» թեկնածուն՝ գործող վարչապետ եվ կրկնակի բանտարկված Վիկտոր Յանուկովիչը կես տոկոսով զիջեց նախկին վարչապետ եւ կոռումպացված գործչի համբավ վայելող Վիկտոր Յուշչենկոյին:

Նոյեմբերի 21-ին տեղի է ունենալու երկրորդ փուլը: Իսկ երեկ եւ այսօր Ուկրաինա է մեկնել Պուտինը: Ռուսական լրատվամիջոցներն ընտրություններն այնպես են լուսաբանում, կարծես խոսքը ոչ թե անկախ Ուկրաինայի, այլ, ասենք, Կրասնոդարի երկրամասի մասին է: Յուշչենկոյի կողմնակիցները նշում են, որ Պուտինի երկրորդ այցը եւս որեւէ ազդեցություն չի թողնի, թեեւ «Ռուսաստանի նախագահը այցելության այնքան էլ հարմար ժամանակ չի ընտրել»:

Ռուսաստանն անչափ շահագրգռված է արեւմտամետ Յուշչենկոյի պարտությամբ եւ, ըստ էության, նախագահ Պուտինի մակարդակով հարեւան երկրում մասնակցում է նախընտրական քարոզարշավին: Սա, անշուշտ, չի նշանակում, թե Յանուկովիչի հաղթանակը կանխորոշված է: Եթե այդքան միանշանակ լիներ, ապա Պուտինը դժվար թե երկու շաբաթվա ընթացքում երկու անգամ այցելեր Ուկրաինա:

Առաջին փուլում Յուշչենկոն ստացել է քվեների 39,87 տոկոսը, Յանուկովիչը՝ 39,32: Սոցիալիստների ղեկավար Ալեքսանդր Մորոզը եւ կոմունիստ Պյոտր Սիմոնենկոն հավաքել են (յուրաքանչյուրը) ձայների 5 տոկոսից ավելին, իսկ Առաջադիմական սոց. կուսակցության առաջնորդ Նատալյա Վիտրենկոն՝ 1,5: Մորոզն իր կողմնակիցներին հորդորել է քվեարկել Յուշչենկոյի օգտին:

Ընտրությունների երկրորդ փուլից առաջ երկրի բաժանումը երկու հակամարտող ճամբարների՝ արեւելյան եւ արեւմտյան, ավելի է խորանում: Յանուկովիչին աջակցում են Ուկրաինայի ռուս եւ ռուսախոս բնակչությունը, տնտեսական կլանները՝ գործող նախագահ Լեոնիդ Կուչմայի գլխավորությամբ, ինչպես նաեւ Ռուսաստանը: Յուշչենկոյին աջակցում են Ուկրաինայի արեւմուտքը, հիմնական ուկրաինախոս բնակչությունը, Սորոսի ֆինանսավորած «Պորա» երիտասարդական շարժումը (վրացական «Կմարա»-ի օրինակով), ինչպես նաեւ արեւմտյան երկրները, առաջին հերթին՝ ԱՄՆ-ը:

Եթե ԱՊՀ երկրներում, այդ թվում Հայաստանում, ընտրությունները կեղծվում են հոգուս գործող նախագահի, օգտագործելով հիմնականում «վարչական ռեսուրսը», ապա Ուկրաինայում այդպես չէ: Հստակ նկատվում է, որ 48 մլն բնակչություն ունեցող եվրոպական այս երկրում կարեւոր են տեղայնության եւ կրոնական գործոնները: Այսպես, ընտրությունների առաջին փուլում Յուշչենկոն հաղթեց 27 շրջաններից 17-ում, այդ թվում՝ մայրաքաղաք Կիեւում, իսկ Յանուկովիչը՝ ընդամենը 10-ում: Սակայն քանի որ Ուկրաինայի արեւելքը շատ խիտ է բնակեցված, ընդհանուր առմամբ Յանուկովիչը զիջեց ընդամենը կես տոկոսով: Օրինակ, Դոնեցկի մարզում, որի նահանգապետն է եղել Յանուկովիչը, կենտրոնացած է ընտրողների 10 տոկոսը:

Ուկրաինայում հայտնի քաղաքագետ Վլադիմիր Ֆեսենկոն ընտրություններում կարեւոր է համարում նաեւ կրոնական գործոնը: Երկրի արեւմտյան ուկրաինախոս շրջաններում ժողովուրդը կաթոլիկ է, արեւելյան շրջաններում ամուր է Մոսկվայի պատրիարքությանը ենթակա Ուկրաինայի ուղղափառ եկեղեցին, իսկ կենտրոնական շրջաններում՝ ուղղափառ եկեղեցու Կիեւի պատրիարքության դիրքերը: 1994 թ. նախագահ Կուչման ընտրություններում հաղթեց արեւելյան եւ հարավային շրջանների բնակչության քվեների հաշվին: Նկատենք, որ ընտրողների 45 տոկոսը կենտրոնացած է երկրի արեւելքում եւ հարավում, 30 տոկոսը՝ կենտրոնական շրջաններում եւ միայն 25 տոկոսը՝ արեւմուտքում:

Երկրորդ փուլից առաջ երկրի արեւելքի եւ արեւմուտքի միջեւ հակասությունները հասնում են ատելության աստիճանի, եւ քաղաքագետները կարծիք են հայտնում, որ երկրորդ փուլի ավարտից հետո երկիրը կարող է ներքաշվել սոցիալ-տնտեսական անկայունության մեջ: Առաջին փուլում ԵԱՀԿ-ն, եվրոպական կառույցները հայտարարեցին, որ ընտրությունները չեն համապատասխանել միջազգային չափանիշներին: Ընդդիմության առաջնորդ Յուշչենկոն տարբեր առիթներով նշել է, որ ինքը հաղթել է առաջին փուլում:

Սոցիոլոգիական հարցումները ցույց են տալիս, որ ինչպես առաջին փուլում, այնպես էլ երկրորդում թեկնածուներն ունեն հաղթելու գրեթե հավասար հնարավորություններ, եւ ամեն ինչ կարող է վճռել ընտրողների ակտիվությունը: Յուշչենկոյի կողմնակիցները սպառնացել են, որ երկրորդ փուլում եւս կեղծիքներ թույլ տալու դեպքում փողոց կհանեն հարյուր հազարավոր մարդկանց: Սերբական «Օտպոր»-ի եւ վրացական «Կմարա»-ի օրինակով Ուկրաինայում ձեւավորվել է «Պորա» երիտասարդական ագրեսիվ շարժումը: Ավելորդ չէ հիշեցնել, որ միլիարդատեր Սորոսի ֆինանսավորած այս շարժումներն առանցքային դեր կատարեցին 2000 թ. Սերբիայում իշխանությունից Միլոշեւիչին հեռացնելու, իսկ անցյալ տարվա նոյեմբերի 23-ին Վրաստանում Շեւարդնաձեին տապալելու գործում:

ԹԱԼԱՏՈՒ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանում ծխելն արգելվում է աշխատավայրում եւ մի շարք այլ վայրերում

ՌԴ Պետդուման 3-րդ ընթերցմամբ ընդունել է «Ծխելը սահմանափակելու մասին» օրենքի ուղղումները, որոնք ընդլայնում են ծխելու արգելքները: ՌԻԱ գործակալությունը նշում է, որ նոր օրենքով ծխել չի թույլատրվում աշխատավայրում, քաղաքային եւ մերձքաղաքային տրանսպորտում, 3 ժամը չգերազանցող չվերթերի օդանավերում, փակ մարզակառույցներում, առողջապահության եւ մշակույթի կազմակերպություններում, կրթական հաստատություններում, պետական իշխանության մարմիններում՝ բացառությամբ ծխելուն հատկացված վայրերի:

Բացի դրանից, ուղղումներն արգելում են ծխախոտ վաճառել առողջապահության, մշակույթի հիմնարկներում, մարզական կազմակերպություններում, կրթական հաստատությունների տարածքում եւ հարկաբաժիններում, ինչպես նաեւ դրանցից մինչեւ 100 մետր հեռու:

Հոկտեմբերի վերջերին Պետդուման ընդունել էր օրենք «Հասարակական վայրերում գարեջրի եւ դրանից պատրաստվող խմիչքների մանրածախ վաճառքի ու սպառման սահմանափակումների մասին»: Այդ փաստաթուղթն արգելում է գարեջրի վաճառքը մանկական, կրթական, բժշկական կազմակերպություններում եւ դրանց հարող տարածքներում:

ԳՐԵԳՈՐԻ ՓԵՔ. «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼ», ԹԵ՞ ՓԱՍՏ

«Premiere» կինոհանդեսի մոսկովյան հրատարակության հավաստիացմամբ, հոլիվուդյան լեգենդար կինոասող Գրեգորի Փեքը, որն իր մահկանացուն կնքեց անցյալ տարի, հայկական ծագում ունի:

Սա հին պատմություն է: 1916-ին Լա Ջոլլայում (Կալիֆոռնիա) ծնված Փեքի ազգային պատկանելության հարցը վաղուց է հոլովվում:

Արծվի Բախչինյանն իր «Հայերը համաշխարհային կինոյում» սվար հաստատում, որ լույս տեսավ վերջերս, անդրադարձել է 40-50-ականներին բռնկված այն «սնապարծ ախտին», երբ սփյուռքահայ մամուլում «գրչի մի հարվածով հայկական ծագում է վերագրվել» նշանավոր շաս կինոդերասանների: «Այս պախարակելի գործում, գրում է հեղինակը, մեծ դեր է ունեցել բելգիաբնակ Արման Մասիսը: Թեեւ նրա ազգանունը եղել է Ճշմարտախոսյան, սակայն իրականում նա ամբողջովին հորինել է այս կամ այն թխահեր եւ թխաչ կինոասողի հայազգի լինելը՝ մոլորության մեջ գցելով հայ մամուլին, որը շատրել է թարգմանաբար արտատպել նրա «թխվածքները»: Այս Մասիսը 1950-ականների սկզբին Փարիզի «Այսօր-առաջայ» թերթի չորրորդ՝ ֆրանսերեն էջում թեթեւ ձեռքով «հայացրել է» մի քանի նշանավոր կինոդերասանների: Այսպես՝ ըստ

նրա, Գրեգորի Փեքի իսկական ազգանունը Փեքմեզյան է»:

Իսկ «մեկ ուրիշի հայտնագործմամբ», նշում է Արծվի Բախչինյանը՝ նկատի ունենալով 1953-ի «Քուլիսի» (Պոլիս) հրապարակումը, Փեքի հայկական ազգանունը Իփեկյան է, եւ «նրա ծնողներն իբր Ամերիկա են գաղթել Անատոլիայից»:

Դժվար է կարծել, թե «Premiere»-ն ուսումնասիրել է 50-ականների սփյուռքահայ մամուլը, բայց այս տարվա թիվ 70-ում որպես «փաստ» տեղեկացնում է, որ «թոռակի տարիքին մոտենալով՝ Գրեգորի Փեքը մտաբերել է արմատները եւ հայերեն սովորել. նրա նախապատը եղել է կաթողիկոս»:

Ոչ ավել, ոչ պակաս:

Ստացվում է, որ վերոհիշյալ Ճշմարտախոսյանը այնքան էլ անճշմարտախոս չի եղել:

Ինչեւէ, եթե անգամ ընդունենք, թե «Premiere»-ի մատուցած սենսացիոն «փաստը» Փեքի անվանն առնչվող «հայկական առասպելի» հարությունն է ի մեռելոց, նման կենսունակությունը պիտի որ քիչ թե շաս հիմնավոր պատճառներ ունենա: Ծուխն անկրակ չի լինում:

Ամեն դեպքում, ռուսական «Premiere»-ի հավաստումը հազիվ թե կարելի է բացատրել Փեքին «հայացնելու» արմանմասիսյան մարմաջով:

ՀԻՆԳ ՏԱՍՆԱՄՅԱԿ, ՈՐ ՓՈԽԵՑԻՆ ԿԻՆՈՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԸ

Սկիզբը՝ նոյեմբերի 6-ի համարում

80-ԱԿԱՆՆԵՐԻ 20 ԳԼԽԱՎՈՐ ՖԻԼՄԵՐԸ

1. «ԿԱՏԱՂԻ ՑՈՒԼԸ»
1980, ԱՄՆ, ռեժ.՝ Մարտին Սկորսեզե, գլխ. դերերում՝ Ռոբերտ Դե Նիրո, Ջո Պեշի, Դայան Լեյն:
2. «ՓԻՂ ՄԱՐԴԸ»
1980, Մեծ Բրիտանիա, ռեժ.՝ Դեյվիդ Լին, գլխ. դերերում՝ Էնթոնի Հոփքինս, Ջոն Հըրթ:
3. «ՓԱՅԼԱՏԱԿՈՒՄ»
1980, Մեծ Բրիտանիա, ռեժ.՝ Սթենլի Կուբրիկ, գլխ. դերերում՝ Ջեք Նիքլսոն, Շելի Դյուվոլ:
4. «ԻՆԴԻԱՆԱ ՋՈՆՍ. ԿՈՐՈՒՍՅԱԼ ՏԱՊԱՆԸ ՈՐՈՆԵԼԻՍ»

«Հիմնական բնազդը»

1981, ԱՄՆ, ռեժ.՝ Սթիվն Սփիլբերգ, գլխ. դերում՝ Հարիսոն Ֆորդ:
5. «ԱԾԵԼՈՒ ՍԱՅՐԻՆ ՎԱԶՈՂԸ»
1982, ԱՄՆ - Մեծ Բրիտանիա, ռեժ.՝ Ռիդլի Սքոթ, գլխ. դերերում՝ Հարիսոն Ֆորդ, Ռութգեր Հաուեր:
6. «ԹՈՒԹՍԻ»
1982, ԱՄՆ, ռեժ.՝ Սիդնի Փոլաք, գլխ. դերերում՝ Դասթին Հոֆման, Ջեսիկա Լանգ:
7. «ՍՊԻԱՎՈՐ ԴԵՄՔԸ»
1983, ԱՄՆ, ռեժ.՝ Բրայան Դե Պալմա, գլխ. դերերում՝ Ալ Պաչինո, Սթիվն Բաուեր, Միշել Փֆայֆեր:
8. «ԹԵՐՄԻՆԱՏՈՐ»
1984, ԱՄՆ, ռեժ.՝ Ջեյմս Քեմերոն, գլխ. դերում՝ Առնոլդ Շվարցենեգեր, Լինդա Համիլթոն, Մայքլ Բին:
9. «ԱՄԱԴԵՈՒՍ»
1984, ԱՄՆ, ռեժ.՝ Միլոշ Ֆորման, գլխ. դերերում՝ Թոմ Հալս, Ֆ. Մյուրեյ Աբրահամ:
10. «ՄԻ ԱՆԳԱՄ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ»
1984, ԱՄՆ, ռեժ.՝ Սերջո Լեոնե, գլխ դերերում՝ Ռոբերտ Դե Նիրո, Ջեյմս Վուդս, Էլիզաբեթ Մակգովերն:
11. «ԲՐԱԶԻԼԻԱ»
1985, ԱՄՆ, ռեժ.՝ Թերի Գիլիամ, գլխ. դերերում՝ Ջոնաթան Փրայս, Ռոբերտ Դե Նիրո:
12. «ԿԱՊՈՒՅՏ ԹԱՎԻՇ»
1986, ԱՄՆ, ռեժ.՝ Դեյվիդ Լինչ, գլխ. դերերում՝ Քեյլ Մակլահլեն, Իզաբելլա Ռոսելլինի, Դենիս Հոփեր:
13. «ՈՒՌԼ ՍԹՐԻԹ»
1987, ԱՄՆ, ռեժ.՝ Օլիվեր Սթոուն, գլխ. դերում՝ Մայքլ Դուգլաս:
14. «ԲԵՌԼԻՆԻ ԵՐԿԻՆՔԸ»
1987, Գերմանիա - Ֆրանսիա, ռեժ.՝ Վիմ Վենդերս, գլխ. դերերում՝ Բրունո Գանց, Օթո Զանդեր, Սոլվեյգ Դոմարթին:
15. «ԿԱՆԱՅՔ ՆՅԱՐԴԱՅԻՆ ԽԱՆԳԱՐՄԱՆ ԵԶՐԻՆ»
1988, Իսպանիա, ռեժ.՝ Պեդրո Ալմոդովար, գլխ. դերերում՝ Կարմեն Մաուրա, Անտոնիո Բանդերաս, Խուլիետա Սերրանո:
16. «ԱՆՋՐԵՎԻ ՄԱՐԴԸ»
1988, ԱՄՆ, ռեժ.՝ Բարի Լեւինսոն, գլխ. դերերում՝ Դասթին Հոֆման, Թոմ Քրուզ:
17. «ՎՏԱՆԳԱՎՈՐ ԿԱՊԵՐ»
1988, Մեծ Բրիտանիա - ԱՄՆ, ռեժ.՝ Սթիվն Ֆրիրզ, գլխ. դերերում՝ Ջոն Մալկովիչ, Գլեն Քլոուզ, Միշել Փֆայֆեր:
18. «ԲԵԹՄԵՆ»
1989, ԱՄՆ, ռեժ.՝ Թիմ Բարթոն, գլխ. դերում՝ Մայքլ Քիթոն, Ջեք Նիքլսոն, Քիմ Բեսինգեր:
19. «ՍԵՔՍ, ԿԵՂԾԻՔ ԵՎ ՏԵՍԱԺՊԱՎԵՆՆԵՐ»
1989, ԱՄՆ, ռեժ.՝ Սթիվն Սոդերբերգ, գլխ. դերերում՝ Ջեյմս Սպեյդեր, Էնդի Մակդաուել, Փիթեր Գալահեր:
20. «ՄԵՌԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ»
1989, ԱՄՆ, ռեժ.՝ Փիթեր Ուիր, գլխ. դերում՝ Ռոբին Ուիլյամս:

90-ԱԿԱՆՆԵՐԻ 20 ԳԼԽԱՎՈՐ ՖԻԼՄԵՐԸ

1. «ԳԱՌՆԵՐԻ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ»
1991, ԱՄՆ, ռեժ.՝ Ջոնաթան Դեմի, գլխ. դերերում՝ Ջոդի Ֆոսթեր, Էնթոնի Հոփքինս:
2. «ԹԵՐՄԻՆԱՏՈՐ 2»,
1991, ԱՄՆ, ռեժ.՝ Ջեյմս Քեմերոն, գլխ. դերերում՝ Առնոլդ Շվարցենեգեր, Ջեյմի Լի Քերթիս:
3. «ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆԱԶՂԸ»
1992, ԱՄՆ, ռեժ.՝ Փոլ Վերհովեն, գլխ. դերերում՝ Մայքլ Դուգլաս, Շերոն Սթոուն:
4. «ԽԱՂԱՍՄՈԼԸ»
1992, ԱՄՆ, ռեժ.՝ Ռոբերտ Օլթման, գլխ. դերում՝ Թիմ Ռոբինս:
5. «ԱՐԻԶՈՆԱՅԻ ԵՐԱԶԱՆՔ»
1992, ԱՄՆ, ռեժ.՝ Էմիր Կուստուրիցա, գլխ. դերերում՝ Ջոնի Դեփ, Ֆեյ Դանըուեյ, Լիլի Թեյլոր:
6. «ՖՈՐԵՍԹ ԳԱՄՓ»
1994, ԱՄՆ, ռեժ.՝ Ռոբերտ Զեմեկիս, գլխ. դերում՝ Թոմ Հենքս:
7. «ՔՐԵԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԵԼԻՔ»
1994, ԱՄՆ, ռեժ.՝ Քուենթին Տարանտինո, գլխ. դերերում՝ Ջոն Տրավոլտա, Ումա Թուրման, Բրուս Ուիլիս:
8. «ՄԵՌՅԱԼԸ»
1995, ԱՄՆ, ռեժ.՝ Ջիմ Ջարմուշ, գլխ. դերում՝ Ջոնի Դեփ:
9. «ՖԱՐԳՈ»
1996, ԱՄՆ, ռեժ,՝ Ջոել Քոեն, գլխ. դերում՝ Ֆրենսիս Մակդորմանդ:
10. «ԱՍԵՂԻ ՎՐԱ»
1996, Մեծ Բրիտանիա, ռեժ.՝ Դենի Բոյլ, գլխ. դերերում՝ Յուան Մակգրեգոր, Ռոբերտ Քարլայլ, Ջոնի Լի Միլեր:
11. «ՇԻՉ»
1996, ԱՄՆ, ռեժ.՝ Ուես Քրեյվեն, գլխ. դերերում՝ Դեյվիդ Արքեթ, Նիվ Քեմբլ:
12. «ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ»
1997, ԱՄՆ, ռեժ.՝ Քերթիս Հենսոն, գլխ. դերերում՝ Ռասել Քրոու, Գայ Փիրս, Քեւին Սպեյսի, Քիմ Բեսինգեր:
13. «ՏԻՏԱՆԻԿ»
1997, ԱՄՆ, ռեժ.՝ Ջեյմս Քեմերոն, գլխ. դերերում՝ Լեոնարդո Դի Կապրիո, Քեյթ Ուինսլեթ:
14. «ՓՐԿԵԼ ՇԱՐՔԱՅԻՆ ՈԱՅԱՆԻՆ»
1998, ԱՄՆ, ռեժ.՝ Սթիվն Սփիլբերգ, գլխ դերերում՝ Թոմ Հենքս, Մեթ Դեյմոն:
15. «ՎԱԽՆ ՈՒ ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԼԱՍ ՎԵԳԱՍՈՒՄ»
1998, ԱՄՆ, ռեժ.՝ Թերի Գիլիամ, գլխ. դերերում՝ Ջոնի Դեփ, Բենիսիո Դել Տորո:
16. «ՄԱՏՐԻՑԱ»
1999, ԱՄՆ, ռեժ.՝ Էնդի եւ Լարի Վաչովսկի, գլխ. դերերում՝ Քիանու Ռիվզ, Լորենս Ֆիշբըրն, Քերի Անն Մոս:

«Վտանգավոր կապեր»

17. «ԱՄԵՆ ԻՆՉ ՄՈՐՍ ՄԱՍԻՆ»
1999, Իսպանիա, ռեժ.՝ Պեդրո Ալմոդովար, գլխ. դերերում՝ Սեսիլիա Ռոս, Մարիզա Պարեդես:
18. «ՄԱՐՏԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ»
1999, ԱՄՆ, ռեժ.՝ Դեյվիդ Ֆինչեր, գլխ. դերերում՝ Էդուարդ Նորթոն, Բրեդ Փիթ, Հելենա Բոնեմ Քարթեր:
19. «ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ»
1999, ԱՄՆ, ռեժ.՝ Սեմ Մենդես, գլխ. դերերում՝ Քեւին Սպեյսի, Անեթ Բենինգ, Ուես Բենթլի, Թորա Բերչ:
20. «ՎԵՑԵՐՈՐԴ ՁԳԱՅԱՐԱՆ»
1999. ԱՄՆ, ռեժ.՝ Մ. Նայթ Շիամալան, գլխ. դերերում՝ Բրուս Ուիլիս, Հեյլի Ջոել Օսմենթ:

«Կանայք նյարդային խանգարման եզրին»

ԱՐԺԵ ԴԻՏԵԼ

16 նոյեմբերի, 22.40 Ֆ1
«Գաղտնի գործակալները»* Ռեժիսոր՝ Ֆրեդերիկ Շյոնդորֆեր: Դերերում. Վենսան Կասել, Մոնիկա Բելուչչի, Անդրե Դյուսոլյե: Ֆրանսիա, 2004:

Գաղտնի գործակալների ամուսնական զույգը համակվում է հոգեկան խռովքով:

18 նոյեմբերի, 23.30 Ֆ1
«Հենրի Ֆուլ»** Ռեժիսոր՝ Հել Հարթլի: Դերերում. Թոմաս Ջեյ Ռայան, Ջեյմս Ուրբանիակ, Փարեր Փոուզի: ԱՄՆ, 1998:

Խղճուկ աղբահավաքի մեջ արթնանում է հանճարեղ բանաստեղծը:

19 նոյեմբերի, 00.40 Նոր ալիք
«Կնոջ լոկսը»** Ռեժիսոր՝ Կոստա-Գավրաս: Դերերում. Իվ Մոնտան, Ռոմի Շնայդեր, Ռոմոլո Վալլի, Լիլյա Կեդրովա: Ֆրանսիա - Իտալիա - Գերմանիա, 1979:

Հոգեբանական դրամա՝ ըստ Ռոմեն Գարիի վեպի, կյանքի ծանր հանգամանքներում հայտնված տղամարդու եւ կնոջ մասին:

19 նոյեմբերի, 23.15 Культура
«Աշխարհի վերջը մեր ամուսնական մահճում մի անձրեւտ գիշեր»** Ռեժիսոր՝ Լինա Վերտմյուլեր: Գլխավոր դերում՝ Ջանկառլո Ջաննինի: Իտալիա, 1978:

Սիրային դրամայի եւ ֆարսի խառնուրդ:

20 նոյեմբերի, 16.20 1-ին կանալ
«Բարբարոս Քոնանը»* Ռեժիսոր՝ Ջոն Միլիուս: Դերերում. Առնոլդ Շվարցենեգեր, Սանդալ Բերգման, Ջեյմս Էրլ Ջոնս: ԱՄՆ, 1982:

Արկածային ֆանտաստիկա, որ ցուցափեղկ է դարձել Շվարցի մկանների համար:

21 նոյեմբերի, 23.35 Культура
«Հայելի»*** Ռեժիսոր՝ Անդրեյ Տարկովսկի: Դերերում. Մարգարիտա Տերեխովա, Օլեգ Յանկովսկի, Ալլա Դեմիդովա: ԽՍՀՄ, 1975:

Սյուռռեալիստական դրամա, ուր միահյուսվել են ռեժիսորի անձնական հուշերն ու տեսիլները:

Էջը պատրաստեց ՀԱՍԿԱՆ ԲՈՅԱՋՅԱՆԸ

Հայ շախմատիստների «սեւ» օրը

Հունաստանում ընթացող շախմատի աշխարհի պատանեկան առաջնության 9-րդ տուրը չափազանց անհաջող էր Հայաստանի պատվիրակների համար: Մեր շախմատիստներից 11-ը պարտվեց, 5-ը պարտիաներն ավարտեց ոչ-ոքի եւ միայն 5 հանդիպումներում ճաշակեց հաղթանակի քաղցրությունը: Ցավալին այն է, որ անհաջողությամբ մասնվեցին հիմնականում բարձր դիրքեր զբաղեցնող հայ շախմատիստները: Նրանցից միայն վանաձորցի Սամվել Տեր-Սահակյանին հաջողվեց հաղթանակ տոնել: Սամվելը մինչեւ 12 տարեկանների մրցաշարում 6,5 միավորով 11-րդ տեղում է: Իսկ նրա թիմակից Հայկ Վարդանյանը 2-րդ անընդմեջ պարտությունը կրեց ու զրկվեց մեդալների համար պայքարելու հնարավորությունից: Հայկ Թամազյանն իր պարտիան ավարտեց ոչ-ոքի: Իսկ աղյուսակը 8 միավորով գլխավորում է չին շախմատիստ Ցժաո Նանը:

Մինչեւ 16 տարեկանների մրցաշարում էլ առաջատարների թվում գտնվող Ավետիք Գրիգորյանը զիջեց ՖԻԴԵ-ի վարպետ Մարկոս Ռաջեկը 7-ական միավորով գլխավորում են Վալենտին Յոտովն ու Մախիմ Ռոդշտեյնը:

Անհաջողության մատնվեցին մինչեւ 16 տարեկանների մրցաշարի առաջատարների շարքերում գտնվող Հրայր Սիմոնյանն ու Հովիկ Հայրապետյանը, որոնց միավորների քանակը (5,5) մնաց անփոփոխ: Այստեղ աղյուսակը 7-ական միավորով գլխավորում են միանգամից չորս շախմատիստներ: Էդման Փաշիկյանը (մինչեւ 18 տարեկաններ) ոչ-ոքի խաղաց ՖԻԴԵ-ի վարպետ Լուկա Շիթայի հետ եւ վաստակեց 5,5 միավոր: Այստեղ առաջատարներն ունեն 7-ական միավոր:

Մեր շախմատիստուհիներից առայժմ բոլորից հաջող է հանդես գալիս Նունե Դարբինյանը: Մինչեւ 14 տարեկանների մրցաշարում Նունեն 9-րդ տուրում ոչ-ոքի խաղաց ՖԻԴԵ-ի վարպետ Սոֆիկո Գուրամիշվիլու հետ եւ 6 միավորով շարունակում է ընթանալ առաջատարների շարքում: Այստեղ 7,5 միավորով առաջատարը ՖԻԴԵ-ի վարպետ Հարիկա Դրոնավալին է, որն այս տուրում խաղաղ դաշն կնքեց Ալիսա Մելեխինայի հետ: Վարդուհի Քալաշյանն ու Արմինե Բաբայանը պարտվեցին: Վերջին տուրերում վերելքով է խաղում Սուսաննա Սարգսյանը, որը 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց: Մինչեւ 12 տարեկանների մրցավեճում նա վաստակել է 5,5 միավոր: Մեր աղջիկներից հաղթանակ տոնեց նաեւ Լիա Մարտիրոսյանը: Իսկ մյուս շախմատիստուհիները պարտվեցին:

թյան մասնվեցին հիմնականում բարձր դիրքեր զբաղեցնող հայ շախմատիստները: Նրանցից միայն վանաձորցի Սամվել Տեր-Սահակյանին հաջողվեց հաղթանակ տոնել: Սամվելը մինչեւ 12 տարեկանների մրցաշարում 6,5 միավորով 11-րդ տեղում է: Իսկ նրա թիմակից Հայկ Վարդանյանը 2-րդ անընդմեջ պարտությունը կրեց ու զրկվեց մեդալների համար պայքարելու հնարավորությունից: Հայկ Թամազյանն իր պարտիան ավարտեց ոչ-ոքի: Իսկ աղյուսակը 8 միավորով գլխավորում է չին շախմատիստ Ցժաո Նանը:

Մինչեւ 16 տարեկանների մրցաշարում էլ առաջատարների թվում գտնվող Ավետիք Գրիգորյանը զիջեց ՖԻԴԵ-ի վարպետ Մարկոս Ռաջեկը 7-ական միավորով գլխավորում են Վալենտին Յոտովն ու Մախիմ Ռոդշտեյնը:

Անհաջողության մատնվեցին մինչեւ 16 տարեկանների մրցաշարի առաջատարների շարքերում գտնվող Հրայր Սիմոնյանն ու Հովիկ Հայրապետյանը, որոնց միավորների քանակը (5,5) մնաց անփոփոխ: Այստեղ աղյուսակը 7-ական միավորով գլխավորում են միանգամից չորս շախմատիստներ: Էդման Փաշիկյանը (մինչեւ 18 տարեկաններ) ոչ-ոքի խաղաց ՖԻԴԵ-ի վարպետ Լուկա Շիթայի հետ եւ վաստակեց 5,5 միավոր: Այստեղ առաջատարներն ունեն 7-ական միավոր:

Մեր շախմատիստուհիներից առայժմ բոլորից հաջող է հանդես գալիս Նունե Դարբինյանը: Մինչեւ 14 տարեկանների մրցաշարում Նունեն 9-րդ տուրում ոչ-ոքի խաղաց ՖԻԴԵ-ի վարպետ Սոֆիկո Գուրամիշվիլու հետ եւ 6 միավորով շարունակում է ընթանալ առաջատարների շարքում: Այստեղ 7,5 միավորով առաջատարը ՖԻԴԵ-ի վարպետ Հարիկա Դրոնավալին է, որն այս տուրում խաղաղ դաշն կնքեց Ալիսա Մելեխինայի հետ: Վարդուհի Քալաշյանն ու Արմինե Բաբայանը պարտվեցին: Վերջին տուրերում վերելքով է խաղում Սուսաննա Սարգսյանը, որը 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց: Մինչեւ 12 տարեկանների մրցավեճում նա վաստակել է 5,5 միավոր: Մեր աղջիկներից հաղթանակ տոնեց նաեւ Լիա Մարտիրոսյանը: Իսկ մյուս շախմատիստուհիները պարտվեցին:

Հովհաննես Թահմազյանի նոր նվաճումը

Հոկտեմբերի 23-ին «Բանանցի» հետ խաղում «Միկայի» 34-ամյա պաշտպան Հովհաննես Թահմազյանն անցկացրել էր Հայաստանի առաջնություններում հոբելյանական՝ 300-րդ հանդիպումը՝ առաջինը հատելով իրոք գրոսմայստերական այդ ցուցանիշը: Եվ ահա առաջնության ավարտական տուրում «Դինամո-Զենիթի» հետ խաղում Թահմազյանը նոր, էլ ավելի տպավորիչ նվաճման հասավ: Նա անցկացրեց պաշտոնական մրցումներում իր 400-րդ հանդիպումը: Հաշվի են առնվում ՀՀ առաջնություններում (Ա), գավաթի (Գ), Սոտերգավաթի (Ս), եվրոպական գավաթների (Ե) խաղարկություններում, Հայաստանի ազգային (ԱՀ) եւ երիտասարդական (ԵՀ) հավաքականներում, ինչպես նաեւ ԱՊՀ գավաթի (ԱՊՀ) մրցաշարերում անցկացված խաղերը:

Հովհաննես Թահմազյանի նվաճումն իրոք յուրօրինակ է: Ի դեպ, մինչեւ Հայաստանի ազգային առաջնությունների անցկացումը, Թահմազյանը «Շիրակի» կազմում մասնակցել է ԽՍՀՄ 2-րդ խմբի առաջնության հանդիպումներին՝ անցկացնելով 42 խաղ: Այնպես որ ֆուտբոլային կենսագրության ընթացքում նա մասնակցել է պաշտոնական 442 հանդիպման: Նշենք, որ գործող ֆուտբոլիստներից միայն Գագիկ Մարգարյանը հնարավորություն ունի հաջորդ մրցաշրջանի ավարտին իր խաղերի թիվը հասցնելու 400-ի: Դրա համար նա պետք է մասնակցի «Շիրակի» բոլոր հանդիպումներին:

Հարկ է նշել, որ պաշտոնական մրցումներում նույնիսկ 300 խաղ անցկացնելը դյուրին չէ եւ էլեր է հաջողվում հասնել նման արդյունքի: Այսօրվա դրությամբ յուրօրինակ «300-ի ակումբում» ընդգրկված են ընդամենը 14 ֆուտբոլիստներ, որոնցից չորսը՝ Տիգրան Հովհաննիսյանը, Առաս Հարությունյանը, Արթուր Ասոյանն ու Սարգիս Նազարյանն ակումբի անդամ են դարձել ընթացիկ մրցաշրջանում: Տեղեկացնենք, որ պաշտոնական մրցումներում առաջինը 300 խաղի սահմանագիծը հատել է նախկին շիրակցի Արթուր Պետրոսյանը: Հոբելյանական՝ 300-րդ խաղը նա անցկացրել է 2000 թ. մայիսի 31-ին «Առարատ»-ի հետ մրցախաղում: Հաջորդ մրցաշրջանում ակումբի անդամ դարձան Վարազդատ Ավետիսյանն ու Հովհաննես Թահմազյանը: Վերջինիս համար հոբելյանական՝ 300-րդ խաղը 2001 թ. սեպտեմբերի 23-ին Գյումրիում «Բանանցի» հետ մրցախաղն էր: Հաջորդ մրցաշրջանում ակումբի շարքերը համալրելու հիանալի հնարավորություն ունեն Կարեն Սիմոնյանը (298 խաղ), Կարեն Գրիգորյանը (295), Հարություն Աբրահամյանը (294), Ալբերտ Աֆյանը (288), Սարգիս Հովսեփյանը (286), Կարեն Բարսեղյանը (284):

Ներկայացնում ենք «300-ի ակումբի» անդամների ցուցանիշները:

	Ա	Գ	Ս	Ե	ԱՀ	ԵՀ	ԱՊՀ	Ընդ.
1. Հովհաննես Թահմազյան	303	63	4	18	6	-	6	400
2. Գագիկ Մարգարյան	281	61	3	17	-	-	6	368
3. Արթուր Մկրտչյան	237	47	5	19	24	7	6	345
4. Արթուր Պետրոսյան	214	45	2	8	69	-	6	344
5. Տիգրան Գսպեյան	255	52	1	12	13	-	5	338
6. Տիգրան Հովհաննիսյան	255	47	3	8	5	7	3	328
7. Վարազդատ Ավետիսյան	230	53	2	8	22	-	10	325
8. Գրիգոր Մկրտչյան	269	46	1	5	-	-	-	321
9. Վարդան Մինասյան	202	56	4	12	14	8	12	308
10. Առարատ Հարությունյան	216	46	3	17	7	8	6	303
11. Արթուր Ասոյան	240	48	2	6	-	-	6	302
12. Հայկ Հարությունյան	221	43	2	12	8	7	8	301
13. Սամվել Նիկոլյան	228	56	3	9	1	-	3	300
14. Սարգիս Նազարյան	251	44	-	3	-	-	2	300

Թենիսիստները կմրցեն Հյուսիսում

Այս օրերին ութ ուժեղագույն թենիսիստուհիները Լոս Անջելեսում վիճարկում են աշխարհի ոչ պաշտոնական չեմպիոնուհու տիտղոսը: Իսկ տղամարդիկ պայքարը կսկսեն երկուշաբթի: Ինչպես եւ կանանց մրցաշարում, տղամարդիկ էլ նախնական փուլում բաժանվել են երկու խմբի: «Կարմիր» խմբում հանդես կգան Մարաս Սաֆինը, Էնդի Ռոդիկը, Գիլերմո Կորիան եւ Թիմ Հենմանը: «Կարմիր» խմբում պայքարի ոլորտը կներգրավվեն Ռոջեր Ֆեդերերը, Լլեյթոն Հյուիթը, Կառլոս Մոյան եւ Գաստոն Գաուդիոն: Մրցաշարի ընդհանուր մրցանակային հիմնադրամը 3,7 մլն դոլար է: Նախնական փուլում առավել հաջող հանդես եկած թենիսիստները կպայքարեն կիսաեզրափակիչում:

Մրցակարգը ենթակա է փոփոխման

ՖԻՖԱ-ի նախագահ Զեպ Բլաթերը առաջարկել է փոփոխել Հարավային Ամերիկայի գոտու աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի անցկացման մրցակարգը: Ինչպես հայտնի է, հարավամերիկյան 10 հավաքականներ երկու շրջանով անցկացվող մրցաշարում կորոշեն 5 ուղեգրերի տերերին: Փաստորեն, հավաքականներից յուրաքանչյուրին հարկ կլինի անցկացնել 18-ական խաղ, ինչը Բլաթերի կարծիքով բավական ծանրաբեռնում է հավաքականների ֆուտբոլիստներին, որոնք իրենց ակումբներում էլ բավական շատ հանդիպումներ են անցկացնում: Ֆուտբոլի Հարավային Ամերիկայի կոնֆեդերացիան մտադիր է Բլաթերի առաջարկը ներկայացնել դեկտեմբերի 2-ին կայանալիք նիստում:

ԹԵՆԻՍ

Մերենա Ուիլյամսի երկրորդ հաղթանակը

Լոս Անջելեսում շարունակվում է կանանց թենիսի աշխարհի ոչ պաշտոնական առաջնությունը 8 ուժեղագույն թենիսիստուհիների միջեւ: Մրցումների երկրորդ օրը կենտրոնականը ռուսաստանցի թենիսիստուհիներ Սվետլանա Կուզնեցովայի եւ Մարիա Շարապովայի մրցավեճն էր: Երկուսն էլ ընթացիկ մրցաշրջանում հաջող են հանդես եկել «Մեծ սաղավարտի» մրցաշարերում: Մարիա Շարապովան հաղթող էր ճանաչվել Ուիմբլդոնում, իսկ Սվետլանա Կուզնեցովան դարձել էր թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնության չեմպիոնուհի: Մինչ լոսանջելեսյան հանդիպումը, մրցակցուհիները երկու անգամ են մրցել միմյանց հետ եւ երկու դեպքում էլ հաջողությունն ուղեկցել էր Կուզնեցովային: Սակայն այս անգամ Մարիա Շարապովան ռեւանշի հասավ: Նա հաստատեց հետաքաղաքի հասավ առաջին խաղափուլում (6-1), իսկ երկրորդը շահեց 6-4 հաշվով: Այսպիսով «սեւ» խմբում հանդես եկող Շարապովան առաջին միավորը վաստակեց:

«Սեւ» խմբում հաղթողի գլխավոր հավակնորդ ֆրանսիացի Ամելի Մորեսմոն, առանց մեծ ճիգերի, պարտության մատնեց Վերա Զվոնարյովային (6-1, 6-0): Վերջինս մրցաշարում երկրորդ պարտությունը կրելով, զրկվեց կիսաեզրափակիչի ուղեգիր նվաճելու հնարավորությունից: Իսկ ահա, «կարմիր» խմբում հանդես եկող Սերենա Ուիլյամսը հիանալի հնարավորություն ստացավ շարունակելու պայքարը ուժեղագույնի կոչման համար: Ճիշտ է, Ելենա Դեմենտեւայի նկատմամբ հաղթանակը տրվեց մեծ դժվարությամբ (7-6, 7-5):

Կրամնիկը հրաժարվեց մրցաշարից

Ռուսաստանցի գրոսմայստեր Վլադիմիր Կրամնիկը հրաժարվել է մասնակցել վաղը մեկնարկող Ռուսաստանի շախմատի առաջնության եզրափակիչ փուլին, որը բավական ուժեղ կազմ է հավաքել: Ինչպես երեւում է, Պետեր Լեկոյի հետ աշխարհի բացարձակ չեմպիոնի կոչման համար մրցախաղի կիսաեզրափակիչ հանդիպումը Կրամնիկից շատ ուժեր է խլել: Համենայն դեպս, Կրամնիկը նամակով դիմել էր մրցաշարի կազմակերպիչներին եւ տեղեկացրել, որ բժիշկների խորհրդով հրաժարվում է առաջնության մասնակցությունից եւ դեռ մի քանի ամիս էլ չի կարողանա որեւէ մրցաշարի մասնակցել: Թե որքանո՞վ են լուրջ Կրամնիկի հիմնավորումները, դժվար է ասել: Փաստն այն է, որ սա արդեն երկրորդ դեպքն է, որ Կրամնիկը հրաժարվում է հանդիպել Գարի Կասպարովի հետ, որը նույնպես մասնակցելու է ՈԴ 57-րդ առաջնությանը: Մինչ այդ էլ Կրամնիկը հայտարարել էր, որ հրաժարվում է աշխարհի առաջնության բացարձակ չեմպիոնի տիտղոսի համար մրցապայքարում մրցել Կասպարովի հետ:

Իր այս հրաժարականով Կրամնիկը դժվարին կացության մեջ դրեց առաջնության կազմկոմիտեին: Չէ՞ որ առաջնությանը մասնակցելու էին 14 շախմատիստներ, որոնք երջանային մրցակարգով պետք է վիճարկեն չեմպիոնի տիտղոսը: Կազմակերպիչները ստիպված էին հրաժարվել Ալեքսանդր Խալիֆմանի ծառայություններից եւ մրցաշարն անցկացնել 12 մասնակցով:

Եվ այսպես, առաջնության եզրափակիչ փուլին կմասնակցեն Գարի Կասպարովը (2813), Անատոլի Կարպովը (2682), Ալեքսանդր Մորոզեւիչը (2758), Ալեքսանդր Գրիշչուկը (2704), Եվգենի Բարեեւը (2715), Պյոտր Սվիդլերը (2735), Ալեքսեյ Դրեեւը (2698), Վիտալի Տեկովսկին (2577), Ալեքսանդր Մոտիլյովը (2651), Վլադիմիր Եմելինը (2599), Արյոմ Տիմոֆեեւը (2611) եւ Ալեքսեյ Կորոտիլյովը (2596): Նոյեմբերի 14-ին տեղի կունենա մրցաշարի բացման հանդիսավոր արարողությունը եւ վիճակահանությունը: Հաջորդ օրը շախմատիստները կնստեն խաղատեղաների շուրջ: Մրցաշարը կավարտվի նոյեմբերի 30-ին: Հավասար միավորների դեպքում ավելի բարձր տեղ կզբաղեցնի ավելի շատ հաղթանակներ տարած շախմատիստը: Այնուհետեւ հաշվի կառնվեն անձնական հանդիպումների արդյունքները, հետո՝ սեւ խաղաքարերով անցկացրած պարտիաներում գրանցված արդյունքները:

Հիլդեբրանդին նոր պայմանագիր կառաջարկվի

«Շտուտգարտ»-ի ղեկավարությունը սկսել է բանակցությունները թիմի դարպասապահ Տիմո Հիլդեբրանդի հետ պայմանագրի երկարաձգման շուրջ: Ակումբի ղեկավարությունը ցանկանում է 25-ամյա դարպասապահի հետ պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչեւ 2009 թ.: Պայմանագրի ժամկետը լրանում է հաջորդ տարվա ամռանը եւ շնորհալի դարպասապահով արդեն սկսել են հետաքրքրվել մի շարք թիմեր: Նրանց թվում են «Բավարիան», «Ինտերը» եւ «Մանչեսթր յունայթեդը»: Ակումբի նախագահ Էրվին Շտատտը նշել է, որ ամեն կերպ կձգտի Հիլդեբրանդին պահել թիմում: Բացի այդ, «Շտուտգարտ»-ի ղեկավարությունը

մտադիր է թիմի 37-ամյա վետերան Զվոնիմիր Սոլդոյին առաջարկել անցնել մարզչական աշխատանքի: Նա վերջերս հայտարարել է, որ ամռանն ավարտելու է ելույթները մեծ ֆուտբոլում:

Սենան որակազրկվել է 60 օրով

Իսպանական «Վիլյառեալի» բրազիլացի կիսապաշտպան Մարկոս Սենան ՈՒԵՖԱ-ի կողմից որակազրկվել է 60 օրով եւ տուգանվել 10 հազար շվեյցարական ֆրանկով՝ արգելված խթանիչների օգտագործման համար: Նրա օրգանիզմում արգելված խթանիչներ հայտնաբերվել են օգոստոսի 24-ին Ինտերտոտոյի գավաթի համար Մադրիդի «Ատլետիկոյի» հետ հանդիպումից հետո անցկացված դոպինգ ստուգման արդյունքում: Սենայի որակազրկման ժամկետը սկսվում է հոկտեմբերի 21-ից: Այդ ընթացքում 28-ամյա ֆուտբոլիստը ստիպված կլինի բաց թողնել Իսպանիայի առաջնության 7 եւ ՈՒԵՖԱ-ի գավաթի 2 հանդիպում:

Էջը պատրաստեց ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՄԱՆՈՒՖՈՒՄՆԵՐ

Հայաստան Համահայկական Հիմնադրամ

Միասին անցնենք մեր հաղթանակների ճանապարհը

Դիտեք Հ 1 ուղիղ եթերում 25 նոյեմբերի 2004 թ. 20:00-ից

TELETHON2004

Կատարեք Ձեր փոխանցումները հիմնադրամին՝ հետեւյալ հաշվեհամարներով.

ՀՀ կենտրոնական բանկ
Հաշվեհամար 103003215672 (AMD)
103003615673 (USD)
«Հայաստան» համահայկական հիմնադրամ

ԼՂՀ կենտրոնական բանկ
Հաշվեհամար 223001001559 (AMD)
«Հայաստան» համահայկական հիմնադրամ

HSBC Bank Armenia CJSC
ՀՀ ք.Երեւան, Վ.Սարգսյանի 9
Հաշվեհամար 001-002195-102 (USD)
001-002195-104 (EUR)
«Հայաստան» համահայկական հիմնադրամ

Կարող եք Ձեր վճարումները կատարել ՀՀ տարածքում գործող **ՀԱՅԽՆԱՅԲԱՆԿԻ ցանկացած մասնաճյուղում** առանց միջնորդավճարի գանձման:
ARCA և VISA քարտեր ունեցող հաղորդիները 25 նոյեմբերի ժ. 20:00-ից սկսած կարող են հեռաձայնել «Հայաստան» համահայկական հիմնադրամ
56-09-95, 58-15-51, 56-01-06 հեռախոսահամարներով, նվիրատվությունները տեղում կատարելու համար:
Խնդրում ենք նշել Ձեր նվիրատվության նպատակը՝ «Դյուսիս-Հարավ» մայրուղու կառուցում:
Մենք շնորհակալ ենք Ձեր աջակցության համար

ՀՀ Արմավիրի մարզի Արգինայի գյուղատնտեսարանը հրավիրում է բաց կրկնաճուրդի: Այն տեղի կունենա նոյեմբերի 16-ին, ժամը 13-ին, Արգինայի գյուղատնտեսարանում:
Բաց կրկնաճուրդով վաճառվում են.

1 լոտ. 4.5 հա 3-րդ կարգ ջրովի վարելահող, մեկնարկային գինը՝ 478.500 դրամ,
39.5 հա 4-րդ կարգ ջրովի վարելահող, մեկնարկային գինը՝ 3.555.00 դրամ,
226 հա 5-րդ կարգ արտավայր վարելահող, մեկնարկային գինը՝ 20.250 դրամ,
Լոտի ընդհանուր մակերեսը 270 հա, մեկնարկային արժեքը՝ 20.772.000 դրամ:
Մուտքավճարը՝ 1.038.600 դրամ:
Մեկ աճուրդային քայլը կլինի մեկնարկային գնի 1 տոկոսի չափով:
Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Արգինայի գյուղատնտեսարան:

Արգինայի գյուղատնտես՝ Ռ. Առոյան

FOR YOUR INTERNAL NEWS OF ARMENIA LOG ON TO www.azg.am IN ARMENIAN, RUSSIAN, ENGLISH AND TURKISH

ՀՀ Արմավիրի մարզի Ճենիկի գյուղատնտեսարանը հրավիրում է բաց կրկնաճուրդի: Այն տեղի կունենա նոյեմբերի 16-ին, ժամը 15-ին, Ճենիկի գյուղատնտեսարանում:
Բաց կրկնաճուրդով վաճառվում են.

1 լոտ. 88.7 հա 3-րդ կարգ ջրովի վարելահող, մեկնարկային գինը՝ 475.000 դրամ,
96.1 հա 4-րդ կարգ անջրդի վարելահող, մեկնարկային գինը՝ 3.555.00 դրամ,
14 հա 5-րդ կարգ ջրովի վարելահող, մեկնարկային գինը՝ 109.500 դրամ,
9.2 հա 5-րդ կարգ անջրդի վարելահող, մեկնարկային գինը՝ 73.500 դրամ,
61 հա 5-րդ կարգ արտավայր, մեկնարկային գինը՝ 20.250 դրամ:
Լոտի ընդհանուր մակերեսը 269 հա, մեկնարկային արժեքը՝ 80.050.950 դրամ:
Մուտքավճարը՝ 4.002.548 դրամ:
Մեկ աճուրդային քայլը կլինի մեկնարկային գնի 1 տոկոսի չափով:
Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Ճենիկի գյուղատնտեսարան:

Ճենիկի գյուղատնտես՝ Կ. Մինասյան

ՀՀ Արմավիրի մարզի Վանանդի գյուղատնտեսարանը հրավիրում է բաց կրկնաճուրդի: Այն տեղի կունենա ս. թ. նոյեմբերի 16-ին, ժամը 13-ին, Վանանդի գյուղատնտեսարանում:
Բաց կրկնաճուրդով վաճառվում են.

1 լոտ. 30 հա 3-րդ կարգ ջրովի վարելահող, մեկնարկային գինը՝ 478.500 դրամ,
451.6 հա 4-րդ կարգ ջրովի վարելահող, մեկնարկային գինը՝ 35.55.00 դրամ,
50 հա 5-րդ կարգ ջրովի վարելահող, մեկնարկային գինը՝ 109.500 դրամ,
82.1 հա 5-րդ կարգ անջրդի վարելահող, մեկնարկային գինը՝ 73.500 դրամ,
105.6 հա 5-րդ կարգ արտավայր, մեկնարկային գինը՝ 20.250 դրամ:
Լոտի ընդհանուր մակերեսը 719.3 հա, մեկնարկային արժեքը՝ 188.546.550 դրամ:
Մուտքավճարը՝ 9427327.5 դրամ:
Մեկ աճուրդային քայլը կլինի մեկնարկային գնի 1 տոկոսի չափով:
Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Վանանդի գյուղատնտեսարան:

Վանանդի գյուղատնտես՝ Ֆ. Մանուկյան

ՀՀ Արմավիրի մարզի Արեւադաշտի գյուղատնտեսարանը հրավիրում է բաց կրկնաճուրդի: Այն տեղի կունենա նոյեմբերի 17-ին, ժամը 13-ին, Արեւադաշտի գյուղատնտեսարանում: Բաց կրկնաճուրդով վաճառվում են.

1 լոտ. 170.3 հա 5-րդ կարգ անջրդի վարելահող, մեկնարկային գինը՝ 73.500 դրամ, 613.3 հա 5-րդ կարգ արտավայր, մեկնարկային գինը՝ 20.250 դրամ, 1-ին լոտի ընդհանուր մակերեսը՝ 783.6 հա, մեկնարկային արժեքը՝ 24.936.375 դրամ:
Մուտքավճարը՝ 1246818.75 դրամ:
Մեկ աճուրդային քայլը կլինի մեկնարկային գնի 1 տոկոսի չափով:
2 լոտ. 0.5 հա 5-րդ կարգ անջրդի վարելահող, մեկնարկային գինը՝ 73.500 դրամ, 31 հա 5-րդ կարգ արտավայր, մեկնարկային գինը՝ 20.250 դրամ, 5.5 հա այլ հողեր մեկնարկային գինը՝ 73.500 դրամ:
2-րդ լոտի ընդհանուր մակերեսը՝ 37 հա, մեկնարկային արժեքը՝ 1068719 դրամ:
Մուտքավճարը՝ 53436 դրամ:
Մեկ աճուրդային քայլը կլինի մեկնարկային գնի 1 տոկոսի չափով:
3 լոտ. 92.7 հա 5-րդ կարգ, արտավայր, մեկնարկային գինը՝ 20250 դրամ,
3.4 հա այլ հողեր, մեկնարկային գինը՝ 73.500 դրամ,
3-րդ լոտի ընդհանուր մակերեսը՝ 96.1 հա, մեկնարկային արժեքը՝ 2.127.075 դրամ:
Մուտքավճարը՝ 106353.75 դրամ:
Մեկ աճուրդային քայլը կլինի մեկնարկային գնի 1 տոկոսի չափով:
4 լոտ. 450 հա 4-րդ կարգ, արտավայր, մեկնարկային գինը՝ 60.750 դրամ, 284.8 հա 5-րդ կարգ, արտավայր, մեկնարկայինը գինը՝ 20250 դրամ, 0.6 հա այլ հողեր, մեկնարկային գինը՝ 73.500 դրամ, 4-րդ լոտի ընդհանուր մակերեսը՝ 735.4 հա, մեկնարկային արժեքը՝ 33.148.800 դրամ:
Մուտքավճարը՝ 1.657.440 դրամ:
Մեկ աճուրդային քայլը կլինի մեկնարկային գնի 1 տոկոսի չափով:
5 լոտ. 10.3 հա 4-րդ կարգ, ջրովի վարելահող, մեկնարկային գինը՝ 3.555.00 դրամ, 146.8 հա 5-րդ կարգ անջրդի վարելահող, մեկնարկային գինը՝ 73.500 դրամ, 491.8 հա 5-րդ կարգի արտավայր, մեկնարկային գինը՝ 20.250 դրամ, 5-րդ լոտի ընդհանուր մակերեսը՝ 648.9 հա, մեկնարկային արժեքը՝ 24.410.400 դրամ:
Մուտքավճարը՝ 1.220.520 դրամ:
Մեկ աճուրդային քայլը կլինի մեկնարկային գնի 1 տոկոսի չափով:

ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյանի գյուղատնտեսարանը հրավիրում է բաց կրկնաճուրդի: Այն տեղի կունենա նոյեմբերի 18-ին, ժամը 13-ին, Բաղրամյանի գյուղատնտեսարանում:

Բաց կրկնաճուրդով վաճառվում են.

1 լոտ. 58.1 հա 4-րդ կարգ ջրովի վարելահող, մեկնարկային գինը՝ 355.500 դրամ,
122.91 հա 4-րդ կարգ անջրդի վարելահող, մեկնարկային գինը՝ 117.000 դրամ,
7 հա 5-րդ կարգ ջրովի վարելահող, մեկնարկային գինը՝ 109.500 դրամ,
257.5 հա 5-րդ կարգ անջրդի վարելահող, մեկնարկային գինը՝ 73.500 դրամ,
645.9 հա 5-րդ կարգ արտավայր, մեկնարկային գինը՝ 20.250 դրամ:
Լոտի ընդհանուր մակերեսը 1091.4 հա, մեկնարկային արժեքը՝ 67.806.075 դրամ:
Մուտքավճարը՝ 3390303.75 դրամ:
Մեկ աճուրդային քայլը կլինի մեկնարկային գնի 1 տոկոսի չափով:
Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Բաղրամյանի գյուղատնտեսարան:

Բաղրամյանի գյուղատնտես՝ Մ. Կիրակոսյան

Աղաբաբյանների ընտանիքը խոր վշտով հայտնում է սիրելի մոր, սկեսրոջ, տատիկի՝ ***Ոսկեհաս Խաչատրյանի*** մահվան մասին:
Հոգեհանգիստը տեղի կունենա նոյեմբերի 13-ին, ժամը 18:00-ին, Լենինականի 16, բնակարան 6 հասցեում:
Հուղարկավորությունը՝ ***նոյեմբերի 14-ին, ժամը 14:00-ին:***

«Հրազդան» հոլդինգի աշխատակազմը ցավակցում է Աժ պատգամավոր, հոլդինգի տնօրենների խորհրդի նախագահ Ատոս Աղաբաբյանին, էմին եւ Ժաննա Աղաբաբյաններին սիրելի մոր՝ ***Ոսկեհաս Խաչատրյանի*** մահվան կապակցությամբ եւ միանում սգակիր հարազատներին:

«Ինննա-Գրուպ» ՍՊԸ ռիելտորական ընկերությունը Երեւանի «Աղամանդ» արդյունաբերական բորսայի հարթակում աճուրդային վաճառքի է ներկայացնում «Եմորդիկի բանկ» (Հայաստան) ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող գույքը՝
Բնակարան (ընդ. մակերեսը 80.45 ք. մ.), հինգ հարկանի շենքի V հարկ: Հասցե՝ ք. Երեւան, Կենտրոն համայնք, Մաշտոցի պող., 43, բն. 13:
Գույքի մեկնարկային գինը 40000 $-ին համարժեք դրամ:
Աճուրդը դասական փակերով դեկտեմբերի 13-ից յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ, ժ. 13.00, մինչեւ 2005 թ. հունիսի 30-ը, ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում:
Տեղեկությունների համար դիմել «ԻՆՆԱ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ, հեռ. 58 12 42 կամ 56 31 15:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության հուշադրամների հաշման համար մրցույթի կազմակերպման մասին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետեւ՝ «Բանկ») հայտարարում է բաց միջազգային մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության երկու (մեկ ոսկյա եւ մեկ արծաթյա) հուշադրամների հաշման եւ մասակարարման համար:

Մրցույթի ծածկագիրն է «CBA COINS-05»:

Մրցույթին կարող են մասնակցել Բանկի կողմից հրավեր ստացած դրամահատարանները եւ ցանկացած այլ կազմակերպություններ, որոնք ունեն դրամանիշեր արտադրելու համապատասխան լիցենզիա, ինչպես նաեւ անհրաժեշտ մասնագիտական, տեխնիկական, ֆինանսական միջոցներ, նյութական եւ աշխատանքային ռեսուրսներ: Մրցույթին չեն կարող մասնակցել անվճարունակ, լուծարման գործընթացում սնանկ ճանաչված կազմակերպությունները:

Մրցույթին մասնակցելու համար նախավճար չի պահանջվում:

Մրցույթի կազմակերպման վայրն է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը: Մրցութային առաջարկությունները պետք է առձեռն կամ փոստային ծառայության միջոցով ներկայացվեն հետեւյալ հասցեով՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երեւան 375010, Վազգեն Սարգսյանի փողոց 6, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

Մրցութային առաջարկությունների ընդունման վերջին ժամկետն է 2005 թ. հունվարի 21-ի ժամը 12:00:

Մրցույթի մասնակիցների ներկայացրած առաջարկությունները բացվելու են մրցութային հանձնաժողովի 2005 թ. հունվարի 26-ին, ժամը 12-ին կայանալիք հասուկ նիստում:

Մրցույթի արդյունքներն ամփոփվելու են, եւ մրցույթի հաղթողը ճանաչվելու է մրցութային հանձնաժողովի 2005 թ. հունվարի 28-ին, ժ. 12-ին կայանալիք նիստում:

Բանկի եւ մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի միջեւ պայմանագիրը սնորագրվում է մրցույթի ավարտից հետո քսան օրվա ընթացքում, եթե կողմերի համաձայնությամբ այլ ժամկետ չի սահմանվում:

Թողարկվող հուշադրամների հիմնական տվյալներին եւ հրապարակային մրցույթի անցկացման կարգին կարող եք ծանոթանալ ԿԲ տնային էջում www.cba.am հասցեով:

ՀՀ ԿԲ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է մրցույթ ՀՀ զինված ուժերին նվիրված մեկ ոսկե եւ մեկ արծաթե հուշադրամների դիզայնի ընտրության համար

Մրցույթին կարող են մասնակցել բոլոր ցանկացողները:

Հուշադրամների դիզայնի նկատմամբ հիմնական պահանջներն են՝

Տրամագիծը՝
- ոսկե հուշադրամների համար - 22,0 մմ,
- արծաթե հուշադրամների համար - 38,0 մմ:

Հուշադրամի վրա պետք է լինի՝
- «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» գրառումը,
- թողարկման տարեթիվը՝ «2005»,
- անվանական արժեքը՝ «10000 դրամ» ոսկե հուշադրամի եւ «100 դրամ»՝ արծաթե հուշադրամի համար,
- ՀՀ Զինված ուժերի խորհրդանիշի պատկերը,
- գրառումները կարող են լինել հայերեն եւ անգլերեն լեզուներով:

Մրցութային առաջարկությունները ներկայացվում են յուրաքանչյուր հուշադրամի երկու երեսների ուրվագծերի տեսքով, A4 չափսի թղթի վրա երկու տարբերակներով (երկու չափով)՝ ոսկե հուշադրամի համար 22,0 մմ եւ 100,0 մմ տրամագծով, իսկ արծաթե հուշադրամի համար՝ 38,0 մմ եւ 100,0 մմ: Նույն թղթի վրա նշվում է հեղինակի կողը՝ տառերի կամ թվերի որեւէ կապակցություն, առանց նշելու անունը եւ ազգանունը: Հեղինակի անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսի համարը եւ կողը նշվում են առանձին թղթի վրա, որը փակ ծրարով կցվում է հուշադրամի ուրվագծերին: Հուշադրամի ուրվագծերը եւ նշված փակ ծրարը ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ մեկ ընդհանուր փակ ծրարով, որի վրա նշվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հասցեն,-«Հուշադրամի դիզայնի ընտրության մրցութային հանձնաժողովին» եւ «Չբացել մինչեւ 2004թ. դեկտեմբերի 17-ը, ժ. 12.00 » գրառումները:

Մրցութային ընտրությունը կատարվում է յուրաքանչյուր հուշադրամի համար առանձին եւ հնարավոր է, որ լավագույն ճանաչված հուշադրամների ուրվագծերը կատարված լինեն տարբեր հեղինակների կողմից: Լավագույն ճանաչված յուրաքանչյուր հուշադրամի ուրվագծերի (դիմերես եւ դարձերես) համար սահմանվում է մրցանակային գումար 100000 դրամ, ինչպես նաեւ նույն թողարկման մեկ հուշադրամ:

Մրցութային առաջարկությունները ընդունվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում, Վազգեն Սարգսյանի 6 հասցեով, մինչեւ 2004թ. դեկտեմբերի 17-ը, ժամը 12.00 :

Տեղեկությունների համար զանգահարել 56-16-55 հեռախոսահամարով:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

Հասարակայնության ծանուցում

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից՝ ի կատարումն ՀՀ ջրային օրենսգրքի պահանջների եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N217-Ն եւ N218-Ն որոշումների, ծանուցվում է **ՀՀ Վայոց ձորի մարզի «Ժայռ» ՍՊԸ-ին** արտադրական նպատակով մակերեսային ջրային ռեսուրսներից 2.0 լիտր ջրի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են ափսեանհային օրերին ժամը 17-ից18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2004 թ. նոյեմբերի 23-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Հասարակայնության ծանուցում

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N218-Ն որոշումների պահանջների համաձայն, ստորագրությամբ ծանուցվում է **«Թալին» ՍՊ** ընկերության կողմից շահագործվող 3 հանքերների (Առաքածավան 40 հա, Արտենի 61 հա, Գեղաձոր 4 հա) 5 խորքային հորերից ստորերկրյա ջրերի ջրօգտագործման թույլտվությունների նախագծերը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են ափսեանհային օրերին ժամը 17 -ից 18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 24 նոյեմբերի 2004 թ. ժ. 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 56-24-83